«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2022

ՆԱԽԱԲԱՆ

Ճարտարապետության և շինարարության հայաստանի ազգային համալսարանի (այսուհետ՝ ՃՇՀԱՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (այսուհետ՝ ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է ՃՇՀԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 13

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 19

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 19

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 19

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 22

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 22

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 24

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 27

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 33

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 41

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 46

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 52

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 56

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 62

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 64

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 68

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 72

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 73

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 73

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 74

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 78

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 80

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 81

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 82

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խմբի կողմից հաշվի է առնվել, որ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը (ՃՇՀԱՀ) ճարտարապետության և շինարարության ոլորտներում կրթական, գիտական և նախագծային գործունեություն իրականացնող միակ բուհն է ՀՀ-ում: Միևնույն ժամանակ, ՃՇՀԱՀ-ի առաքելությունը ավելի լայն է և ներառում է. ճարտարապետության, շինարարության, դիզայնի, քաղաքային տնտեսության, էկոլոգիայի, կառավարման և տեխնոլոգիայի ոլորտներում՝ միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, եռաստիճան կրթական համակարգով մասնագետների պատրաստումը, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և ծառայությունների մատուցումը:

Փորձագիտական խումբը նաև հաշվի է առել, որ ՃՇՀԱՀ-ն երկրորդ անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց անցնում և նախորդ անգամ 2015 թվականին հավատարմագրվել է Իսպանիայի Որակի գնահատման և հավատարմագրման ազգային գործակալության կողմից 5 տարի ժամկետով:

Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ժամանակահատվածում ՃՇՀԱՀ-ի գործունեության հիմքում ընկած են եղել բուհի 2015-2020թթ. և 2021-2025թթ. Ռազմավարական ծրագրերը (ՌԾ), որոնցում սահմանված են ՃՇՀԱՀ-ի առաքելությունը, նպատակները, խնդիրները, դրանց իրագործման գործողությունները և գնահատման առանցքային ցուցիչները (ԳԱՑ): Նշենք, որ փորձագիտական խումբը բարձր է գնահատում ԳԱՑ-երի առկայությունը ՌԾ-ներում: Սակայն 2021-2025թթ. ՌԾ-ում բացակայում է գործողությունների ժամանակացույցը, ԳԱՑ-երը հիմնականում չափելի չեն և չեն պարունակում առաջընթացը գնահատելու համար անհրաժեշտ սկզբնական և ակնկալվող/պլանավորվող արժեքները, ինչը դժվարեցնում է ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետության գնահատումը: Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման համար մեխանիզմ են հանդիսանում ռեկտորի տարեկան հաշվետվությունները, որոնք սակայն չեն կազմվում ըստ ռազմավարական նպատակների, ինչը իր հերթին դժվարացնում է ռազմավարական նպատակների իրականացման մշտադիտարկումը և գնահատումը:

ՃՇՀԱՀ-ն ունի ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման համար անհրաժեշտ ստորաբաժանումներ ու համապատասխան որակավորումներ ունեցող

[1] Հավելված 1: Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականները

վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ: Բուհի կառուցվածքն և ներքին նորմատիվ փաստաթղթային բազան ապահովում են որոշումներ կայացնելու կանոնակարգված, ներքին շահակիցների կարիքները լսելի դարձնող գործընթացը և կառավարման էթիկայի կանոնների պահպանումը:

ՃՇՀԱՀ-ն իրականացնում է երկարաժամկետ պլանավորում, սակայն բացակայում է միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը, ինչը խոչընդոտում է ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը «նպատակներին համապատասխանության» տեսակետից գնահատմանը: Միևնույն ժամանակ, այցի ընթացքում փորձագետներին հասանելի դարձավ ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանների նոր ձևաչափ, որը կարող է ապահովել ՌԾ-ի խնդիրների ու ստորաբաժանումների գործունեության միջև համաձայնեցվածությանը: Այնուամենայնիվ, ստորաբաժանումների մակարդակում որակի կառավարման շրջափուլը (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) չի գործում, ինչը վտանգում է բուհի գործունեության արդյունավետությունը: ՃՇՀԱՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության նպատակով կազմակերպվող հարցազրույցները և հարցումները դեռևս լիարժեք չեն: Սակայն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները բավականին արդյունավետ են, և ապահովվում են բավականին ինֆորմատիվ և օգտագործողի համար հարմարավետ կայքէջի, սոցիալական հարթակների և այլ տեղեկատվության տարածման գործիքների միջոցով:

ՃՇՀԱՀ-ի կողմից իրականացվող մասնագիտությունները համապատասխանում են ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին, բուհի առաքելությանը և մշակված են միասնական ձևաչափով: Կրթական ծրագրերի (ԿԾ) մասնագրերի ձևաչափը ենթադրում է ուսումնառության վերջնարդյունքների առկայություն և ներառում է դրանց համապատասխանեցման գործիքներ ՀՀ ՈԱՇ-ի կամ ՈՈՇ-ի ու ԿԾ-ի բաղադրիչ հանդիսացող դասընթացների միջև (ուղղահայաց համապատասխանեցում): Ձևաչափը ներառում է նաև ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների և դասավանդման, ուսումնառության ու գնահատման մեթոդների համապատասխանեցման գործիքներ (հորիզոնական համապատասխանեցում): Սակայն այդ ձևաչափերով մշակված ծրագրերը բարելավման կարիք են ունեն՝ հատկապես համապատասխանեցման գործիքների կիրառման տիրույթում: Նկատելի է պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում ուսումնառության արդյունքների մշակման, դրանց ուղղահայաց և հորիզոնական համաձայնեցվածությունը ապահովելու ուղղությամբ վերապատրաստումներ իրականացնելու անհրաժեշտությունը: Ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստում է ուսանողների ներգրավվածությունը պրակտիկ աշխատանքներում, ինչպես նաև ճարտարապետության և դիզայնի ոլորտներում դասընթացների կազմակերպման յուրահատկությունները /փոքր խմբերով աշխատանք/, սակայն ամբողջ բուհի մակարդակում այդ ուղղությամբ ուսումնական գործընթացը դեռևս բարելավման կարիք ունի: Ուսանողների գնահատման գործընթացները կանոնակարգված են ներքին նորմատիվ փաստաթղթերով, ինչը միտված է նաև ըստ ուսումնառության արդյունքների ուսանողներին գնահատելու բուհի քաղաքականության ապահովմանը: Սակայն դասախոսների շրջանում ակադեմիական ազնվության տեսակետից առկա են տարբեր ընկալումներ, բուհի յուրահատկություններից բխող ակադեմիական ազնվության սահմանումը ՃՇՀԱՀ-ում բացակայում է: Կրթական ծրագրերի մշակման և վերանայման

գործընթացը բուհի մակարդակով հստակեցման կարիք ունի, հատկապես բենչմարքինգի իրականացման և շահակիցների ներգրավման ընթացակարգային և մեթոդաբանական կարգավորումների ուղղությամբ:

ՃՇՀԱՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման մեխանիզմներ: Բակալավրիատի մակարդակում ընդունելությունն իրականացվում է ըստ կառավարության կողմից հաստատված պետական կարգի, որը սակայն ՃՇՀԱՀ-ի ներբուհական մասնագիտական քննությունների անցկացման ընթացակարգը չի ներառում: Ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության նպատակով անցկացվում են նաև հարցումներ, որոնք սակայն սահմանված պարբերականություն չունեն: Դրական է, որ ուսանողների կողմից բարձրացված հարցերի լուծան նպատակով ՃՇՀԱՀ-ում սահմանված է ռեկտորի և պրոռեկտորների հետ հանդիպման հստակ ժամնակացույց: Ուսանողների իրավունքների պաշտպանությունը ապահովող հիմնական մարմինը ուսանողական խորհուրդն է: Ուսանողական խորհրդի կողմից առաջադրված ուսանողները ներգրավված են բուհի կառավարման խորհուրդներում, սակայն կառավարման մարմիններում ներգրավված ուսանողների և ՃՇՀԱՀ-ի ուսանողական համայնքի կապը չի ապահովվում, արդյունքում կառավարման մարմիններում ներգրավված ուսանողները կարող են բարձրաձայնել միայն սեփական կարիքները և ուսանողական համայնքը չեն ներկայացնում: ՃՇՀԱՀ-ում մեկնարկել է ներքին հետազոտական դրամաշնորհային ծրագրերում ուսանողների ներգրավմանն ուղղված արդյունավետ գործընթաց: Բուհը նաև հնարավորություն է տալիս ուսանողներին ներգրավվել լրացուցիչ անվճար և վճարովի հիմունքներով կազմակերպվող պարապմունքներին, որոնք հիմնականում միտված են ուսանողների մասնագիտական և փոխանցելի կարողությունների զարգացմանը:

ՃՇՀԱՀ-ն ապահովված է կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: ՃՇՀԱՀ-ում գործում է դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ընտրության քաղաքականություն և ընթացակարգ: ՃՇՀԱՀ-ում կիրառվում են նաև դասախոսական կազմի գնահատման մի շարք մեխանիզմներ և դրանց իրականացման գործիքակազմ, սակայն դրանք պարբերական բնույթ չեն կրում: Առկա է կարիքների վերհանման վրա հիմնված դասախոսների վերապատրաստման գործընթաց, որը համակարգման և բարելավման կարիք ունի: Մեծ ուշադրություն է դարձվում սերնդափոխությանը և երիտասարդ մասնագետների ներգրավմանը, ինչի նպատակով կիրառում է լրավճարների տրամադրման մեխանիզմը: Խրախուսվում է սեփական շրջանավարտներով կադրերի համալրման գործընթացը: Վերոնշյալ գործընթացները և միտումները նպաստում են պրոֆեսորադասախոսական կազմի կայունության ապահովմանը:

ՃՇՀԱՀ-ն կարևորում է գիտական գործունեությունը և իրեն դիրքավորում է որպես հետազոտական համալսարան, ինչը արտահայտված է բուհի 2015-2020թթ. և 2021-2025թթ. ՌԾ-ի համապատասխան նպատակներում: Սակայն առաջընթացի գնահատման առանցքային ցուցիչները չափելի չեն, չեն պարունակում առաջընթացը գնահատելու համար անհրաժեշտ նախնական տվյալներ և առաջընթացի նախատեսվող արժեքներ: Հետազոտական գործունեության ոլորտում ՃՇՀԱՀ-ն միջնաժամկետ պլանավորում է դիտարկում Գիտության պետական կոմիտեից ստացվող եռամյա թեմատիկ և դրամաշնորհային ֆինանսավորման ծրագրերը, իսկ կարճաժամկետ պլանավորում է դիտարկում դրանց տարեկան գործունեության պլանները: Գիտության պետական կոմիտեի թեմատիկ և դրամաշնորհային

ծրագրերը զգալի ֆինանսական միջոցներ են ապահովում բուհում գիտական հետազոտություններ կատարելու համար: Սակայն ԳԱՑ-երի ոչ չափելի լինելու հետևանքով գրանցված արդյունքների բավարար կամ ոչ բավարար լինելու մասին եզրակացություն անել հնարավոր չէ: Բուհում առկա է նաև հետազոտական գործունեությունը պլանավորելու, սպասարկելու և հեշվետվողականությունը ապահովելու համար անհրաժեշտ վարչական և սպասարկող անձնակազմ: 2021թ.-ից բուհում մեկնարկել է ներքին գրանտային համակարգ: ՃՇՀԱՀ-ում ներդրվում է հետազոտություններում ուսանողների ներգրավմանն, երիտասարդ գիտնականների զարգացմանն և հետազոտությունների միջազգայնացմանն ուղղված քաղաքականություն:

ՃՇՀԱՀ-ն ապահովված է ուսումնական և հետազոտական գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ տարածքով, որը ներառում է՝ լսարաններ, լաբորատորիաներ, գրադարան և այլն: Բուհը զգալի ներդրումներ է կատարում ուսումնական միջավայրի բարելավման և հատկապես լաբորատոր հնարավորությունների զարգացման ուղղությամբ: Ճարտարապետության և շինարարության ոլորտներում ՃՇՀԱՀ-ն մասնագիտական ծառայություններ է մատուցում, ինչի արդյունքում զգալի աճել է պայմանագրային աշխատանքների կատարմամբ պայմանավորված բուհի բյուջեի եկամուտները: ՃՇՀԱՀ-ում բյուջեյի բաշխում ըստ ռազմավարական նպատակների և խնդիրների չի իրականացվում: Առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով ՃՇՀԱՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր, սակայն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կարիքները հաշվի չեն առնվում:

ՃՇՀԱՀ-ի հաշվետվողականության ապահովման հիմնական մեխանիզմը բուհի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության հրապարակումն է: Գործընթացների թափանցիկությունը ապահովվում է բուհի պաշտոնական կայքէջի և տարբեր սոցիալական ցանցերում բուհի էջերի միջոցով, որոնք դիտման համեմատաբար մեծ ցուցանիշներ ունեն:

ՃՇՀԱՀ-ն կարևորում է իր գործունեության միջազգայնացումը, ինչը արտահայտված է բուհի 2015-2020թթ. և 2021-2025թթ. ՌԾ-ի համապատասխան նպատակներում: Բուհը համագործակցում է թվով շուրջ 130 եվրոպական, ՌԴ-ի և ԱՄՆ-ի բուհերի հետ, ներգրավված է բազմաթիվ Էրազմուս պլյուս ծրագրերում, ակտիվորեն ներգրավված է դասախոսների և ուսանողների միջբուհական շարժունություն գործընթացներում ու համագործակցության այլ ոլորտներում: Այս գործողությունները նպաստում են բուհի միջազգայնացմանը իր գործունեության գրեթե բոլոր ուղղություններով: Սակայն այս ոլորտում նույնպես առկա է ԳԱՑ-երի ոչ չափելի լինելու խնդիրը: ՃՇՀԱՀ-ում առկա է միջազգայնացումը ապահովելու համար անհարժեշտ ենթակառուցվածք և վարչական անձնակազմ, սակայն միջազգայնացման արդյունավետությանը խոչընդոտում է դասախոսական կազմի և ուսանողության շրջանում օտար լեզվի և մասնավորապես անգլերենի իմացության ցածր մակարդակը: Այս ուղղությամբ բուհի կողմից ձեռնարկվող գործողությունները դեռևս զգալի արդյունք չեն տալիս:

Թեպետ ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման կենտրոնը ստեղծվել է 2011 թվականին, սակայն որակի ապահովման համակարգը դեռևս ամբողջովին ձևավորված չէ: Բուհը սահմանել է որակը, որակի ապահովման քաղաքականությունը և մի շարք ընթացակարգեր, որոնք, սակայն, միտված են ոչ բոլոր ներքին շահակիցների կարիքների բացահայտմանը և բուհի կրթական գործունեության միայն որոշ ասպեկտների գնահատմանը: Որակի ապահովման ներքին համակարգը «ֆրագմենտային» է և բուհում իրականացվող գործընթացների բարելավմանն ու ՌԾ-ի արդյունավետության գնահատմանն ուղղված լիարժեք գործընթաց չի

ապահովում: ՃՇՀԱՀ-ի կրթության որակի ապահովման կենտրոնը ապահովված է իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսներով: Ընդորում վերջինները զգալի դերակատարություն ունեն բուհում իրականացվող բարեփոխումներում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) ՃՇՀԱՀ-ում առկա ռազմավարական պլանավորման մշակույթը:
2) ՃՇՀԱՀ-ում կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումները, որոնք դրական ազդեցություն ունեն բուհի զարգացման վրա:
3) Վերջնարդյունքահեն ՄԿԾ-ների առկայություն, որը ներառում է վերջնարդյունքների, դասավանդման և գնահատման մեթոդների համապատասխանեցման քարտեզագրումներ:
4) Ուսանողների պրակտիկ աշխատանքներում ներգրավվածությունը:
5) Ուսանողների և դասախոսների հետազոտական և գիտական աշխատանքներում ներգրավվածությունը:
6) ՃՇՀԱՀ-ի կողմից հասարակությանը գիտելիքի փոխանցման լայնածավալ միջոցառումները:
7) Միջազգային և արտաքին կապերի զարգացման համար նախադրյալների առկայությունը:
8) Որակի ապահովման կառույցի համակարգմամբ զբաղվող մասնագետների պատրաստվությունը:
9) Ոլորտի մեծ փորձառություն ունեցող և անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսերադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի առկայությունը:
10) Ներքին գիտահետազոտական դրամաշնորհների իրականացումը:
11) Ենթակառուցվածքաների և ռեսուրսների անընդհատ բարելավման գործընթացները:

Հաստատության թույլ կողմերն են.

1) ՌԾ-ում առկա գնահատման առանցքային ցուցանիշների ոչ չափելի լինելը:
2) Կառավարման համակարգում պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում ցիկլի դետևս ոչ ամբողջական լինելը:
3) Դասախոսների շրջանում ՄԿԾ-ների մշակման և բարելավման, քարտեզագրման վերաբերյալ կարողությունների զարգացման անհրաժեշտությունը:
4) ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմների անկատարությունը, ինչպես նաև գործատուների ներգրավվածության ոչ կայուն մեխանիզմների առկայությունը:
5) ՃՇՀԱՀ-ի ոչ բոլոր ոլորտներին անդրադարձող որակի ներքին ապահովման համակարգի առկայությունը:
6) Դասախոսների մասնագիտական վերապատրաստումների ոչ պլանավորված լինելը:
7) ՃՇՀԱՀ-ի ֆինանսական պլանավորումը ՌԾ-ի հիման վրա իրականացված չլինելը:
8) Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կարիքների գնահատման բացակայությունը:
9) Գրադարանային ռեսուրսների ՃՇՀԱՀ-ում կենտրոնացնելու անհրաժեշտությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1) Հիմնվելով միջազգային և տեղական լավ փորձի վրա, սահմանել և ներդնել ՌԾ-ի մշակման սկզբունքները, աշխատանքային խմբի կազմին ներկայացվող պահանջները, մշակման ընթացակարգը, շահակիցների շրջանակը և քվոտաները (գործունեության որ ոլորտները պետք է ծածկեն շահակիցները, պետության, ներքին և արտաքին շահակիցների կարիքներ, ումից ստանալ այդ տեղեկատվությունը, ինչ մեթոդաբանությամբ և այլն), հաստատման մարմինները ըստ պատասխանատվությունների (օրինակ՝ տեսլականի, առաքելության, նպատակների, խնդիրների հաստատումը և ըստ խնդիրների նախատեսվող գործողությունների, դրանց ժամանակացույցի, գնահատման առանցքային ցուցիչների հաստատումը լիազորել տարբեր մարմիններին) և դրանց հաստատման և վերանայման ընթացակարգը (նախատեսել գործողությունների ծրագրի և գնահատման առանցքային ցուցիչների միջանկյալ վերանայման հնարավորություններ): Հաջորդ ՌԾ-ն մշակել ըստ սահանված փաստաթղթի պահանջների՝ լիովին ներգրավելով բուհի արտաքին և ներքին շահակիցների ամբողջ սպեկտորը:
2) Մշակել 2021-2025թթ. ՌԾ-ի գործողությունների միջնաժամկետ և կարճաժամկետ պլան, նշելով գործողությունների (անհրաժեշտության դեպքում ենթագործողությունների) մեկնարկը և ավարտը, պատասխանատու անձանց (ըստ պաշտոնի), անհրաժեշտ ռեսուրսները, հաջողության/կատարողականի ցուցիչը, վերահսկողություն իրականացնող անձին (ըստ պաշտոնի) կամ մարմինը:

Կառավարումն ու վարչարարությունը

3) Մշակել և ներդնել ռազմավարական ծրագրից բխող ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման և հաշվետվողականության ապահովման ընթացակարգ և գործիքներ:
4) Մշակել և ներդնել բուհի ստորաբաժանումների կարճաժամկետ (տարեկան) գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման գործընթացները և ժամանակացույցը սահմանող փաստաթուղթ և համապատասխան ձևաչափեր:
5) «Աշխատաշուկայի կարիքների բենչմարք» հաշվետվության մշակման գործիքակազմը ներդնել նաև բուհի այլ մասնագիտությունների ուղղությամբ աշխատաշուկայի կարիքների վերհանման համար:
6) Մշակել բուհի գործունեության բոլոր ուղղությունների վրա ազդող գործոնների ուսումնասիրության ընթացակարգեր և գործիքներ:

Մասնագիտության կրթական ծրագրերը

7) ՄԿԾ-ի մշակման, մշտադիտարկման և վերանայման գործընթացները հստակ կանոնակարգելու համար մշակել և ներդնել համապատասխան ընթացակարգեր ու գործիքներ:
8) Վերանայել ՄԿԾ-ների մասնագրերում կրթական վերջնարդյունք – դասընթաց քարտեզագրման սկզբունքները և մշակույթը, խիստ ուշադրություն դարձնելով վերջնարդյունքի ձևավորման համար դասընթացների ընտրությանը, ներառյալ

դասընթացի ծավալի և ուսուցման, գնահատման մեթոդների) և տվյալ դասընթացի վերջնարդյունքների սահմանմանը:

9) Սահմանել դասընթացների ծրագրերի վերանայման ընթացակարգեր և պարբերականություն:
10) ՄԿԾ-ների վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության գործընթացը կանոնակարգելու և աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, մշակել մեթոդների ընտրության որոշակի քաղաքականություն, որը կբխի դասընթացի ծավալից, տեսակից, ապահովող վերջնարդյունքներից և այլ բացադրիչներից, որի հիման վրա դասախոսը հնարավորություն կունենա ընտրություն կատարելու և ինքնուրույն ընտրելու իր դասընթացին համապատասխան մեթոդները:
11) Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար սահմանել համընդհանուր պահանջներ աշխատանքի կառուցվածքի և բովանդակության, տեխնիկական պահանջների, կատարման և հանձնման ժամկետների, գրախոսության, պաշտպանության և գնահատման, ինչպես նաև ակադեմիական ազնվության հստակ պահանջների ներառմամբ:

Ուսանողները

12) Ակտիվացնել ՈՒԽ աշխատանքները՝ լիազորելով լրացուցիչ իրավունքներ ուսանողների կարիքների գնահատման և ուսումնագիտական միջոցառումներ իրականացնելու մասով:
13) Ակտիվացնել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունները՝ իրականացնելու աշխատաշուկայի ուսումնասիրություններ, ուսանողներին տրամադրելու թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն և այլն:
14) Դիտարկել համալսարանի կառավարման մարմիններում ներառել նաև ՈՒԽ անդամ չհանդիսացող ուսանողների:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

15) Սահմանել ՊԴ կազմի գնահատման քաղաքականություն, նախանշելով այդ գործընթացի պարբերականությունը և բարելավել ՊԴ կազմի գնահատման կիրառվող գործիքակազմը՝ խթանելով դասախոսների մասնագիտական կատարելագործումը:
16) Մշակել և ներդնել ՊԴ կազմի համակարգված վերապատրաստման ծրագիր, որը կբխի ՃՇՀԱՀ ի ռազմավարական խնդիրներից և հիմնված կլինի ՊԴ կազմի մասնագիտական կարիքների գնահատման վրա:
17) Շարունակել զարգացնել ՊԴ կազմի մասնագիտական առաջխաղացումը խրախուսող քաղաքականությունը հստակ կանոնակարգելով և բազմազանեցնել դրա մեխանիզմները:

Հետազոտությունը և զարգացումը

18) ՌԾ-ում հստակ նախանշել առաջընթացի գնահատման ցուցիչներ, որպեսզի հնարավոր լինի վերուծել և գնահատել հետազոտության ոլորտի հաջողություններն ու առաջընթացը:
19) Սահամնել պահանջ ներքին դրամաշնորհների համար՝ խրախուսելու տպագրել հոդվածները ազդեցության գործակից ունեցող ամսագրերում:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

20) Գործնական հմտությունների ձեռքբերման համար լիովին օգտագործել և կիրառել համալսարանում առկա տեխնիկական և տեխնոլոգիական միջոցները, գործընկերների տված հնարավորությունները: Պրակտիկաների ընթացքում կիրառել առկա տեխնիկական միջոցները:
21) Հետևել և լրացուցիչ ռեսուրսներ հատկացնել համակարգչային լաբորատորիաների վերազինման և տեխնիկական սպասարկման համար:
22) Ապահովել միզագային մասնագիտական պարբերականներին և հոդվածներին հասանելիություն բուհի տարածքում, ըստ համացանցային հասցեների:
23) Վերանայել ֆինանսական միջոցների բաշխման մոդելը և ֆինանսական բաշխումն իրականացնել ըստ ստորաբաժանումների, ըստ որոշակի համամասնությունների/մասնաբաժնի և նպատակների, ինչը կբերի նաև բյուջեի ապակենտրոնացման:
24) Անհրաժեշտ նյութական ռեսուրսների ապահովման և ձեռքբերման համար ֆինանսական միջոցների հատկացման և ծախսերի պլանավորման նպատակով ստորաբաժանումների կողմից իրենց կարիքների վերհանման և հայտերի ներկայացման գործընթացները կանոնակարգելու նպատակով սահմանել համապատասխան ընթացակարգեր և ժամանակացույց:
25) Մշակել և սահմանել հատուկ կարիքներ ունեցողների և վերջիններիս կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր, հատուկ կարիք ունեցողներին աջակցման մեխանիզմներ և այդ մեխանիզմների տեսակներ, հատկացվող ֆինանսական միջոցների սահմանված մասնաբաժիններ:
26) Ենթակառուցվածքների և ռեսուրսների կիրառելության, հասանելիության և դրանց արդյունավետության գնահատման նպատակով սահմանել հստակ մեխանիզմներ, այդ նպատակով իրականացվող հարցումներն ու այլ մեթոդները կանոնակարգել և հարցումներն իրականացնել որոշակի կոնկրետ պարբերականությամբ, թե արտաքին և թե ներքին շահակիցների շրջանակներում:

Հասարակական պատասխանատվությունը

27) Մշակել և ներդնել տարեկան հաշվետվության հստակ ձևաչափ, որը կապված կլինի բուհի ռազմավարական ծրագրի հետ:
28) Ներդնել տեղեկության տրամադրման և ստորաբաժանումների ինքնավերլուծությունների իրականացման և գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

29) Ընդլայնել միջազգային համագործակցությունը նաև ՃՇՀԱՀ-ի այլ մասնագիտական ոլորտներում, օրինակ զբոսաշրջության ուղղությունը, դիզայնը իր տարբեր ոլորտներով, քաղաքային տնտեսությունը, կառավարումը:
30) Հստակեցնել միջազգայնացման և արտաքին կապերի ոլորտում առաջնահերթությունները, սահմանել ՌԾ-ի խնդիրներից բխող գործողությունների ժամանակացույցը, պատասխանատուները և ցուցիչների արժեքները:
31) Կանոնակարգել բուհի միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետների ներգրավվածությունը:

32) Պլանավորել բուհի միջազգայնացման և արտաքին կապերի ամրապնդման աշխատանքները, որտեղ սահմանված կլինեն գործընթացները, ինչպես նաև ՄՈՒՀ-ի կողմից նախատեսվող ֆինանսական ծախսերը:
33) Ընդլայնել տեղական ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը:
34) Շարունակել նպաստել անձնակազմի և ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը:

Որակի ներքին ապահովման համակարգը

35) Մշակել և ներդնել որակի ապահովման ներքին համակարգ, որը միտված կլինի բուհում իրականացվող բոլոր ոլորտներում իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատմանը և բուհի ներքին և արտաքին շահակիցներից ՌԾ-ով սահմանված առաջընթացի գնահատման առանցքային ցուցիչների (ԳԱՑ) վերաբերյալ տեղեկատվության/տվյալների հավաքագրմանը:

7-ը հուլիսի 2022 թ.

_____

Մկրտիչ Այվազյան, փորձագիտական խմբի ղեկավար

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ներածություն

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (ՃՇՀԱՀ) հիմնադրամը մայրաքաղաք Երևանում գտնվող բարձրագույն ուսումնական հաստատություններից է: ՃՇՀԱՀ-ն ճարտարապետության և շինարարության ոլորտում միակ համալսարանն է Հայաստանի Հանրապետությունում: Համալսարանն իր գործունեությունն սկսել է 1921թ. որպես Երևանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետի ճարտարագիտական-ճարտարապետական և հիդրոտեխնիկա-ճարտարագիտություն մասնագիտություններով: 1989 թվականին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի համապատասխան ֆակուլտետների և ամբիոնների հիման վրա ստեղծվեց Ճարտարապետաշինարարական ինստիտուտը՝ նախկինում մի քանի անգամ վերակազմավորումից հետո: Հաստատությունը վերանվանվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, իսկ 2014թ.՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան: Համալսարանը հավատարմագրվել է Agencia Nacional de Evoluacion de la Calidad y Acreditacion-ի (ANECA) կողմից 2015-2020 թվականների ընթացքում: ՃՇՀԱՀ-ն կարևոր դեր է խաղում երկրի տնտեսության զարգացման գործում:

Առաքելություն և նպատակներ

Համալսարանը զարգանում է իր՝ 2021-2025 թվականների ռազմավարական ծրագրի (պլանի) համաձայն: Այս ծրագիրը ներկայացնում է ՃՇՀԱՀ առաքելությունն ու տեսլականը, ինչպես նաև արժեքներն ու ձգտումները: Համալսարանի առաքելությունը նպատակաուղղված է եռաստիճան կրթական համակարգին համապատասխան մասնագետների պատրաստմանը, ովքեր կիրականացնեն գիտահետազոտական գործունեություն և ծառայություններ կմատուցեն ճարտարապետության, շինարարության, դիզայնի, քաղաքային տնտեսության, բնապահպանության, կառավարման և տեխնոլոգիայի ոլորտներում՝ միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համահունչ: Տեսլականում նշվում է, որ համալսարանը ձգտում է ստեղծել մրցակցային և ճկուն կրթական ու գիտական համակարգ՝ հիմնված ստեղծված ավանդույթների վրա, որոնց միջոցով պատրաստվում են մրցունակ ու որակյալ մասնագետներ, ովքեր ունեն ժամանակակից տեխնոլոգիաների մասին գիտելիք, հասարակական պատասխանատվություն, ազգային արժեքներ և հարգում են մշակույթը, որում նորարարությունները, համագործակցային ու ժողովրդավարական մոտեցումները հանդիսանում են առանցքային՝ համապատասխան մասնագիտական լուծումներ տալու այն մարտահրավերներին ու խնդիրներին, որոնց առերեսվում է հասարակությունը:

ՃՇՀԱՀ արժեքային համակարգը հիմնված է արժանապատիվ միջավայրի և հարգանքի, հաստատակամության և գերազանցության, ինչպես նաև սոցիալական պատասխանատվության և առաջնորդության վրա: Ռազմավարական ծրագիրը (2021-2025) համապարփակ, հետևողական և լավ կառուցված փաստաթուղթ է: Այն պարունակում է գնահատման առանցքային ցուցիչներ, որոնք սահմանում են ուղղությունները, բայց չեն սահմանում ամենակարևոր չափելի չափանիշները (KPI)՝ հաշվի առնելով, որ այս

փաստաթուղթը հիմք է միջնաժամկետ և տարեկան պլանավորման համար: Սա հատկապես կարևոր է Ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկման որակն ու անաչառությունն ապահովելու համար:

Կառավարում և վարչարարություն

ՃՇՀԱՀ կառավարումն ու վարչարարությունը կարևոր ու պատասխանատու դերակատարություն ունեն համալսարանի առաքելության կառավարման ու իրականացման գործընթացում: Վերջինս անհնար կլինի իրագործել առանց համալսարանական համայնքի հետ ակտիվ երկխոսության ու աջակցության: Ուսանողների, դասախոսների/հետազոտողների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ համալսարանական համայնքը լավ ներգրավված է վարչակազմի և կառավարման բարձրագույն մարմինների հետ երկխոսության մեջ: Նրանց ձայնը, կարծիքը և առաջարկները լսվում են, և անհրաժեշտության դեպքում նրանք ստանում են արձագանք և օգնություն: Համալսարանը նպատակ ունի ներդնել կառավարման ժամանակակից համակարգ՝ ապահովելով արդյունավետ ինքնավարություն, թափանցիկություն, հաշվետվողականություն: Նոր կազմակերպչական կառուցվածքը մշակվել և հաստատվել է 2020 թվականի սեպտեմբերին: ՃՇՀԱՀ-ն այժմ ունի 5 ֆակուլտետ և 23 ամբիոն: Հոգաբարձուների խորհուրդը կազմված է կարևոր ներքին և արտաքին շահակիցներից, որոնք համապատասխանաբար գործում են ի շահ համալսարանի: Կազմակերպչական վերջին փոփոխությունները համարժեք են վերը նշված նպատակին: Նման կազմակերպչական փոփոխությունները բավականին բարդ են և պահանջում են համապատասխան նախապատրաստում և քննարկում համալսարանի մակարդակում:

Այնուամենայնիվ, նպատակահարմար կլինի շարունակել ներքին և արտաքին քննարկումները, որոնք առնչվում են արդյունավետ և թափանցիկ կառավարմանը, կազմակերպական կառուցվածքի հետագա ճշգրտմանը, իշխանության ապակենտրոնացմանն ու ավելի լայն համալսարանական համայնքի ներգրավվածությանն և հզորացմանն: ՃՇՀԱՀ-ի կառավարման մարմինները (Հոգաբարձուների խորհուրդը և գիտական խորհուրդը) ունեն բավականին թվով անդամներ, ինչը միշտ չէ, որ երաշխավորում է առաքելության արդյունավետությունը: Միտում կա ներդնելու գործընթացի կառավարման մոտեցում և կազմակերպչական կառուցվածքից հանել ամբիոնները, կենտրոնանալ ԵԲԿՏ-ում ծրագրային հանձնաժողովների կողմից ուսումնական ծրագրի կառավարման վրա: Այն կանխում է պարտականությունների համընկնումն ու կրկնօրինակումը:

Մասնագիտության կրթական ծրագրեր

Դասավանդման և ուսուցման գործընթացը կազմակերպված է այնպես, ինչպես ԵԲԿՏ համալսարաններում: ՃՇՀԱՀ-ն մասնագետներ է պատրաստում ճարտարապետության, շինարարության, դիզայնի, քաղաքային տնտեսության, էկոլոգիայի, կառավարման և տեխնոլոգիաների ոլորտներում եռաստիճան կրթական համակարգով՝ միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: ՃՇՀԱՀ-ի բոլոր կրթական ծրագրերը մշակված են կրթական վերջնարդյունքների հիման վրա և համահունչ են ազգային պետական չափորոշիչներին և ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի նկարագրիչներին: Այնուամենայնիվ, նպատակահարմար է շարունակել կրթական վերջնարդյունքների վերաբերյալ ներքին քննարկումներն ու պարզաբանումը, ինչպես նաև ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումը ողջ համալսարանում՝ ավելի լավ հասկանալու

նրանց նպատակները, բովանդակությունը և կարևորությունը, փոխկապակցելու աշխատաշուկայի պահանջները, բովանդակությունը և կրթական ծրագրերի որակը, շրջանավարտների գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Համաճարակը սովորեցրեց ՊԴ կազմին և ուսանողներին, թե ինչպես շարունակել դասավանդման և ուսուցման գործընթացն առցանց: Այս փորձը պետք է օգտագործվի կրթության ավելի ճկուն ձևաչափեր մշակելու համար, հատկապես այն ուսանողների համար, ովքեր համատեղում են աշխատանքը և ուսումը: Շինարարության և քաղաքաշինության ոլորտը գործ ունի մեծ քանակությամբ բնական ռեսուրսների, ֆինանսական ներդրումների հետ և պահանջում է մեծ էներգիա: Հետևաբար, նպատակահարմար է, որ կրթական ծրագրերը կենտրոնանան կանաչ/էներգախնայող և ծախսարդյունավետ մոտեցումների և տեխնոլոգիաների, ինչպես նաև գործընթացների թվայնացման վրա:

Ուսանողները

ՃՇՀԱՀ-ի ուսանողները ազդեցություն ունեն համալսարանի կառավարման վրա և արտահայտում են իրենց կարծիքը դասավանդման և ուսուցման գործընթացների որակի վերաբերյալ: Հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների և շրջանավարտների բավարարվածության մակարդակը կրթությունից համեմատաբար բարձր էր: Այնուամենայնիվ, բոլոր ուսանողներն ու շրջանավարտները ընդգծեցին ուսումնառության գործնական բաղադրիչի ավելացման անհրաժեշտությունը՝ ուղղված մասնագիտական և փոխանցելի հմտությունների զարգացմանը, ինչը օգնում է շրջանավարտներին սահուն կերպով ինտեգրվել աշխատաշուկայում: Հարկ է նշել, որ ուսանողների կարծիքների վերհանման հարցումները բավականին անկանոն են, և հետադարձ կապի համակարգը լավ չի աշխատում: Դասավանդման և ուսուցման գործընթացների արդյունավետությունը որոշելու համար արժե իրականացնել ուսանողների՝ առաջին և վերջին կուրսերում ցուցաբերած ձեռքբերումների համեմատական ուսումնասիրություններ: ՃՇՀԱՀ-ի ուսանողները ավելի քիչ հնարավորություն ունեն ձևավորելու ուսուցման իրենց անհատական ուղին՝ սահմանափակ թվով ընտրովի առարկաների պատճառով համեմատած ԵԲԿՏ հաստատությունների հետ: Ցանկալի կլիներ, որ բոլոր ուսանողների հետ պայմանագիր կնքվի Ազգային սոցիալական ապահովության կամ զբաղվածության տվյալների բազայից նրանց աշխատանքի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության համար դիպլոմային աշխատանքի պաշտպանությունից անմիջապես հետո: Համալսարանը չունի բավարար քանակով ուսանողական հանրակացարաններ, քանի որ ներկայիս ուսանողական հանրակացարանները տրամադրվում են արցախցի փախստականներին՝ Արցախի տարածաշրջանում զինված հակամարտության պատճառով: Համալսարանի ուսանողն արժանի է ունենալ ժամանակակից և ավելի հարուստ գրադարան՝ առցանց հասանելիությամբ և հոգեբանական ծառայություններով:

ՊԴ և ուսումնաօժանդակ կազմ

Մարդկային ռեսուրսների քաղաքականությունը ՃՇՀԱՀ-ի 2021-2025 թվականների հաստատված ռազմավարական ծրագրի իրականացման համար կարևոր առաջնահերթություն է: ՃՇՀԱՀ-ի ՊԴ կազմի համալրումն ու մասնագիտական զարգացումն իրականացվում է ՊԴ կազմի ձևավորման կարգի, պաշտոնի անձնագրերի, դրանից բխող գործընթացների և գործառույթների հիման վրա: ՃՇՀԱՀ-ում աշխատող ՊԴ կազմի բավականին շատ ներկայացուցիչներ ճարտարապետության, շինարարության և այլ համապատասխան ոլորտների առաջատար մասնագետներ են: ՊԴ կազմի մասնագիտական

որակների գնահատումն իրականացվում է ՃՇՀԱՀ Կրթության որակի ապահովման կենտրոնի, Կրթական ծրագրերի բաժինը և ամբիոնների հետ համատեղ ջանքերով: Համալսարանը կազմակերպում է դասընթացներ՝ ակադեմիական և վարչական անձնակազմերի մասնագիտական և մեթոդական հմտությունների զարգացման համար: Համալսարանը բավականին լավ հավասարակշռություն է պահպանում ավագ և կրտսեր անձնակազմի միջև, ինչպես նաև գենդերային հավասարություն է ապահովում: Համալսարանում դեռևս ցածր է օտարերկրյա դասախոսների ներգրավվածության մակարդակը: Հետևաբար, խստորեն նպատակահարմար կլինի զարգացնել անգլերեն լեզվի հմտությունները առաջին հերթին ՊԴ և վարչական անձնակազմերի ու համալսարանի բոլոր անդամների համար:

Հետազոտություն և զարգացում

ՃՇՀԱՀ-ի ռազմավարական նպատակը (2) սահմանում է. Համալսարանը պետք է ձեռք բերի և կիրառի միջազգայնորեն մրցունակ գիտահետազոտական արդյունքներ: Ինչևե, գիտական հետազոտությունների ներկայիս մակարդակը բավականաչափ զարգացած չէ: Այս իրավիճակի պատճառը կարելի է բացատրել հենց երկրի քաղաքական և տնտեսական վիճակով (Արցախի տարածաշրջանում հակամարտությունները շարունակվում են): ՃՇՀԱՀ-ն ավելի շատ կենտրոնացած է կիրառական հետազոտությունների և զարգացման վրա, ինչպիսիք են ճարտարապետական և արդյունաբերական դիզայնը, ինչպես նաև շինարարական նախագծերը: Համալսարանը շատ ակտիվ է միջազգային համագործակցության և ցանցերի զարգացման գործում: Այնուամենայնիվ, համագործակցության արդյունքներն այնքան էլ չեն անդրադառնում հետազոտության ամենակարևոր արդյունքների վրա՝ միջազգային հրապարակում հղման ցուցիչներով, որոնք հասանելի են համաշխարհային հետազոտական լայն հանրությանը: Գիտական ամսագրերում և հետազոտական տվյալների բազաներում հետազոտական հրապարակումների թիվը չափազանց համեստ է այնպիսի համալսարանի համար, ինչպիսին ՃՇՀԱՀ-ն է: Հետազոտության արդյունքների ինտեգրումը կրթական ծրագրերում նույնպես պետք է բարելավել: Համալսարանի հետազոտողների ավելի ակտիվ ներգրավվածությունը միջազգային ծրագրերում կարող է նպաստել ակադեմիական անձնակազմի ավելի լայն երկկողմ փոխանակմանը օտարերկրյա համալսարանների հետ (չսահմանափակվելով միայն Ռուսաստանի Դաշնությամբ): Ավելի լայն միջազգային գիտահետազոտական համագործակցությունը կնպաստի համապատասխան հրապարակումների թվի և արտաքին ֆինանսավորման համար հաջողված հայտերի թվի ավելացմանը, ինչպես նաև գիտական հետազոտությունների առևտրայնացմանը:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ

Համալսարանը անհրաժեշտ ռեսուրսներ է ներդնում 2021-2025 թվականների ռազմավարական ծրագրին համապատասխան կրթական միջավայրի զարգացման և թարմացման համար: ՃՇՀԱՀ-ն կենտրոնացած է ենթակառուցվածքների և կառուցվածքային ստորաբաժանումների բարելավման, լսարանների և լաբորատորիաների վերանորոգման, ինչպես նաև փորձարարական հարմարությունների արդիականացման վրա: Այնուամենայնիվ, համալսարանի գրադարանի տեխնիկական ենթակառուցվածքը պահանջում է էական արդիականացում (էլեկտրոնային գրադարան) և հարստացում: Էլեկտրոնային տվյալների և գործընթացների կառավարման գործիքները կարող են նպաստել ՃՇՀԱՀ կառավարման ավելի բարձր արդյունավետությանը, ներառյալ որակի ապահովումը:

Համալսարանի բոլոր շահակիցների և հյուրերի համար անվճար Wi-Fi պետք է հասանելի լինի ՃՇՀԱՀ -ի ամբողջ տարածքում:

Հասարակական պատասխանատվություն

Համալսարանը զարգացնում և բարելավում է իր հասարակական պատասխանատվությունը՝ պահպանելով ինտենսիվ համագործակցություն և հաղորդակցություն, ինչպես նաև ներկայացնելով տարեկան հաշվետվություններ ներքին և արտաքին շահակիցներին և հանրությանը: Ներկայումս աճում է համալսարանների դերը՝ որպես աշխատող մարդկանց վերապատրաստման և նորարարական հնարավորությունների արդիականացման կենտրոններ, որոնք փոխանցում են տեխնոլոգիական նորույթներ և գործնական հմտություններ: Ցանկալի է նաև հնարավորության դեպքում ուսանողների և ուսուցիչների ստեղծագործական աշխատաժողովների և սկսնակ ձեռնարկությունների (start-ups) համար տարածք ստեղծելու տարբերակներ գտնել: ՃՇՀԱՀ-ն ունի ստեղծագործական ներուժ և կարող է հանրությանը ներգրավվելու ուղիներ գտնել ապագայում՝ ի նպաստ երկկողմանի շահերի:

Արտաքին կապեր և միջազգայնացում

ՃՇՀԱՀ-ն ունի բավականին մեծ թվով միջազգային գործընկերներ: Այնուամենայնիվ, ներգնա ուսանողների և ակադեմիական անձնակազմի թիվը համարժեք չէ գործընկերների թվին և կարող է ավելացվել: Համագործակցության պայմանագրերի ստորագրումը պետք է հանգեցնի գործնական համագործակցության: Դժվար է ակնկալել բազմաթիվ օտարերկրյա ուսանողների՝ առանց անգլերեն լեզվով կրթական ծրագրեր ունենալու: Այցի ընթացքում մենք հանդիպեցինք մի քանի օտարերկրյա ուսանողների, և դա լավ սկիզբ է: Համալսարանի միջազգայնացման զարգացումն առաջին հերթին կախված է ղեկավարության, ինչպես նաև համալսարանական համայնքի բոլոր անդամների կամքից և անձնական ներգրավվածությունից՝ սկսած անգլերենի գործնական հմտություններից, բոլոր հնարավոր միջազգային հետազոտական հիմնադրամներին և դրամաշնորհային ծրագրերին դիմելուց, ինչպես նաև միջազգային բարձրագույն կրթական կազմակերպություններին անդամակցությունից, ինչպիսիք են Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիան (EURASHE) և/կամ Եվրոպական համալսարանների ասոցիացիան (EUA) և այլն:

Որակի ներքին ապահովման համակարգ

Համալսարանը հայտարարում է, որ հետևում է Եվրոպական չափորոշիչների և ուղենիշներին (ESG 2015) և ՊԻԳԲ շրջափուլի սկզբունքների պահանջներին, և դա դրական է: Ներկայումս ռեկտոր, պրոռեկտորների թիմը և կրթության որակի ապահովման կենտրոնը կենտրոնական դեր են խաղում՝ ապահովելով ՃՇՀԱՀ-ի որակը: ՈԱԿ-ն այնքան շատ պարտականություններ ունի, որ դրանք բոլորը գործնականում իրականացնելը բավականին դժվար է, համենայն դեպս փորձագետների մոտ նման կարծիք է ձևավորվել: Հետևաբար, նպատակահարմար կլինի ապակենտրոնացնել և ներգրավել վարչական ու ակադեմիական ստորաբաժանումների ավելի շատ ներկայացուցիչների, ինչպես նաև ուսանողների որակի ապահովման աշխատանքներում: Որոշումների կայացման համար վարչակազմին անհրաժեշտ է օբյեկտիվ տվյալների լավ գործող համակարգ: Տվյալների հավաքագրման և մշտադիտարկման համակարգը պետք է սահմանվի և փաստաթղթավորվի: Տվյալների նման համակարգը կարող է համահունչ/կապված լինել ԳԱՑ-երի համակարգի հետ: Գործընթացի

կառավարման ընդունումը կնպաստի ավելի լավ որոշումների կայացմանը, ինչպես նաև որակի ապահովման համակարգի համակարգային ներդրմանը: Գործընթացների կառավարման ընդունման բազմաթիվ հնարավոր տարբերակներից մեկը կարող է լինել ISO որակի կառավարման ստանդարտի ներդրումը և հավաստագրումը: Որակի ապահովման ձեռնարկը վերանայման ու բարելավման կարիք կունենա գործընթացների կառավարման մոտեցման և համապատասխան ընթացակարգերի ընդունումից հետո: Արտաքին շահակիցների մասնակցությունը Որակի ապահովման խորհրդի կազմում կնպաստի նաև համալսարանի թափանցիկությանն ու հաշվետվողականությանը, ինչպես նաև հանրային հարգանքին և վստահությանը:

Եզրակացություն. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամն անցումային փուլում է: Բազմաթիվ գործողություններ վերջերս են ներդրվել և ավարտվել կամ իրականացվում են՝ արդիականացնելու և ամրապնդելու թե՛ համալսարանի կառավարումը, կատարողականը, թե՛ դրա որակը՝ հետևելով Բոլոնիայի գործընթացի մոտեցմանը: Համալսարանը զարգացնում է միջազգային համագործակցությունը և հետևում է եվրոպական համալսարանների լավ փորձի օրինակներին: ՃՇՀԱՀ-ում առկա է ղեկավար կազմի բարձր վճռականություն և ակադեմիական համայնքի ներուժ՝ այս քաղաքականությունը շարունակելու համար: Հարկ է նշել, որ փորձագիտական խմբին ներկայացված համալսարանի ինքնավերլուծության զեկույցը ճշգրիտ և ինքնաքննադատորեն բացահայտում է ներկա իրավիճակը և, որ ավելի կարևոր է, առաջարկում է բարելավման ուղիներ:

Կարևոր նշում. *Խնդրում եմ իմ այս դիտարկումները ընկալել, որպես խորհրդատվություններ համալսարանի արդյունավետ զարգացման համար, այլ ոչ թե որպես քննադատություն:*

Վահրոտաս Վիլինիուաս, միջազգային փորձագետ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Մկրտիչ Այվազյան՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ուսումնագիտական գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի ղեկավար:

Հարություն Մովսիսյան՝ Երկրաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն, փորձագիտական խմբի անդամ:

Աշոտ Գյուրջինյան՝ Տեխնիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Վանաձորի մասնաճյուղ, «Շինարարական ճարտարագիտություն » ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի անդամ:

Վահդոտաս Վիլիունաս՝ Քիմիական գիտությունների դոկտոր, Բարձրագույն կրթութական հաստատությունների եվրոպական ասոցիացիայի անդամ (EURASHE), Բելգիա,փորձագիտական խմբի միջազգային անդամ:

Խաչիկ Շահբազյան՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ » ՓԲ ընկերություն «էներգետիկ համակարգեր, համալիրներ, էլեկտրակայաններ և դրանց կառավարումը» մասնագիտությամբ ասպիրանտ, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ, և նշանակվել ՈԱԱԿ տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավար Վարդուհի Գյուլազյանը:

Թարգմանությունը կատարել է Անի Մազմանյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Ճարտարապետության և շինարարության հայսատանի ազգային համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՃՇՀԱՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Սահմանված ժամկետներում ՃՇՀԱՀ-ն ներկայացրել է ինքնավերլուծությունը, որը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել համապատասխան հիմքերը և ձևաչափով պահանջվող հավելվածները: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, համալսարանի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները:
2. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը:
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]:

Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում[4] և այլն:

Նախանական այց

2022 թվականի մարտի 9-ին տեղի է ունեցել հանդիպում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ համալսարանի հետ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2022թ. մարտի 14-ից 17-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետ Վահիդոտաս Վիլիունասի հետ

[2] Հավելված 2: Փորձագիտական այցի ժամանակացույցը
[3] Հավելված 3: Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ
[4] Հավելված 4: Ուսումնասիրված ռեսուրսներ

քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպմամբ և ավարտվել ՃՇՀԱՀ ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են բուհի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[1] և ռեսուրսների դիտարկում[2]:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է համալսարանի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը պատրաստել է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքը ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին 2022 թվականի մայիսի 23-ին:

Բուհը նախնական զեկույցի վերաբերյալ տրամադրել է դիտարկումներ, որոնք քննարկվել են փորձագիտական խմբի հետ և պատրաստվել է վերջնական զեկույցը

07-ը հուլիսի, 2022 թ.



Վարդուհի Գյուլազյան, փորձագիտական խմբի համակարգող

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. ՃՇՀԱՀ-ն ճարտարապետության և շինարարության ոլորտի կրթության և գիտության ասպարեզում Հայաստանի Հանրապետության միակ Համալսարանն է, որի առաքելությունն է. «Ճարտարապետության, շինարարության, դիզայնի, քաղաքային տնտեսության, էկոլոգիայի, կառավարման և տեխնոլոգիայի ոլորտներում՝ միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, եռաստիճան կրթական համակարգով մասնագետների պատրաստումը, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և ծառայությունների մատուցումը:» Համալսարանի առաքելությանը համապատասխան ձևավորվել են համալսարանի կառուցվածքային միավորները:

Կրթություն. ՃՇՀԱՀ կրթական քաղաքականությունը կոչված է համալսարանին աջակցելու իր առաքելությունն ու ռազմավարական նպատակներն արդյունավետ կերպով իրականացնելու և կրթության որակն ապահովելու գործում: Կրթության ոլորտի զարգացումները, շահակիցների ներգրավվածության աճը և նրանց պահանջների փոփոխությունները բուհի առջև խնդիր են դնում հիմնարար քաղաքականության և ընթացակարգերի մշակման, որոնց իրականացումը կարող է էականորեն բարձրացնել տրամադրվող կրթական ծառայությունների որակը և արդյունքում ամրապնդել բուհի մրցակցային դիրքերը:

Հետազոտություն. ՃՇՀԱՀ 2015-2020թթ. ՌԾ-ում որպես ոլորտային հիմնական նպատակ է սահմանված ՃՇՀԱՀ-ի գիտական և ստեղծագործական ներուժի օգտագործումը հետազոտական, խորհրդատվական, նախագծային աշխատանքներում՝ միտված երկրի տնտեսական, մշակութային և սոցիալական խնդիրների լուծմանը, իսկ 2021-2025թթ. ՌԾ-ում որպես գիտության ոլորտի հավակնություններ են սահմանված միջազգայնորեն մրցունակ գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, նորարարական լուծումների առաջադրումը և հետազոտությունների արդյունքների առևտրայնացումը:

Ներկայումս առանձնապես կարևորվում են երկրի կարիքներով պայմանավորված և երկակի նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացումը, արտերկրի գործընկերների հետ գիտական հրապարակումների համատեղ հարթակի ստեղծումը և գիտության ոլորտում սերնդափոխության սահուն ապահովումը:

Միջազգայնացում. ՃՇՀԱՀ-ի միջազգայնացման գործընթացները բխում են 2015-2020թթ., 2021-2025թթ. ՌԾ-երից: Բուհում միջազգայնացման գործընթացներն ուղղված են ՄԿԾ-երի նորացմանը, ուսուցման նորագույն մեթոդների ներառմանը կրթական, հետազոտական, նախագծային աշխատանքների իրականացմանը, գիտական ծրագրերին մասնակցությանը:

1994թ.-ից ՃՇՀԱՀ-ը շարունակաբար ջանք է գործադրում, որպեսզի ճարտարապետության ֆակուլտետի շրջանավարտներին շնորհվող դիպլոմը ֆրանսիական կառավարության կողմից պաշտոնապես ճանաչվի ֆրանսիականին համարժեք: Կրթական ծրագրերի, ուսումնական պլանների թարմացումների, համեմատությունների արդյունքով այն վերաճանաչվում է տարբեր ժամկետներով, վերջին երկուսը եղել են հինգ տարի ժամկետով: Ճանաչման վերաբերյալ հերթական որոշումն ընդունվել է 2017թ. հունվարի 12-ին՝ հինգ տարի ժամկետով:

Որակի ապահովում. ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերն ուղղված են կրթության գերխնդրին՝ կրթության որակի բարձրացմանը,

օժանդակելով բուհի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ու վարչարարության նվազեցմանը, մրցունակության զարգացմանը և ուսանողակենտրոն ուսումնառության ներդրմանն ու բարելավմանը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Հաշվետու ժամանակահատվածում ՃՇՀԱՀ-ի գործունեության հիմքում ընկած են բուհի 2015-2020թթ. և 2021-2025թթ. ՌԾ-ները, որոնցում սահմանվում է ՃՇՀԱՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրները:

2015-2020թթ. ՌԾ-ում սահմանվում է բուհի առաքելությունը, դրանից բխող 9 նպատակ, 27 խնդիր, 130 միջոցառում (գործողություն) և 69 առաջընթացի գնահատման ցուցիչ: 2015-2020թթ. ՌԾ-ի համաձայն ՃՇՀԱՀ-ի առաքելությունն է.

«Ճարտարապետության, շինարարության քաղաքային տնտեսության, դիզայնի, տեղեկատվական համակարգերի և հարակից ոլորտներում միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին բավարարող եռաստիճան կրթական համակարգով մասնագիտական կադրերի պատրաստումը, շարունակական կրթության ապահովումը, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և ծառայությունների մատուցումը»:

2015-2020թթ. ՌԾ-ի նպատակներն են.

1. Համալսարանի մասնագիտություններով ընդունելության բնականոն կազմակերպման նպատակով որակյալ գիտելիքներով դիմորդների նախապատրաստում:
2. Բոլոնիայի գործընթացի զարգացումներին համահունչ բարձրորակ, արդիական կրթության ապահովում:
3. Համալսարանի կադրային քաղաքականության կատարելագործում և գիտամանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման արդյունավետության բարձրացում:
4. Ուսումնագիտական լաբորատորիաների և լսարանների արդիականացում, նորերի ստեղծում, նյութատեխնիկական բազայի համալրում, ենթակառուցվածքների զարգացում:
5. Համալսարանի գիտական և ստեղծագործական ներուժի օգտագործում հետազոտական, խորհրդատվական, նախագծային աշխատանքներում ՝ միտված երկրի տնտեսական, մշակութային և սոցիալական խնդիրների լուծմանը:
6. Միջազգային կապերի կայուն զարգացում՝ ուսումնական և գիտատեխնիկական համագործակցության ուղղություններով, համալսարանի վկայագրի՝ արտերկրում ճանաչման գործընթացի շարունակական ապահովում:
7. Համալսարանի կառավարման գործընթացում ուսանողների ներգրավման գործուն կառուցակարգերի ներդրում և կատարելագործում:
8. Համալսարանի գործունեության արդյունքների հաշվետվողականության ապահովում:
9. Ֆինանսատնտեսական գործունեության կայունություն:

Միևնույն ժամանակ, 2015-2020թթ. ՌԾ-ում բացակայում են բուհի տեսլականը և արժեքները, որոնց պահպանմամբ պետք է իրականացվի ծրագիրը: 2015-2020թթ. ՌԾ-ում

առկա են նաև խնդիրների իրականացման միջոցառումների ժամկետները, սակայն խնդիրների իրականացման միջոցառումների ժամկետների սահմանումը ֆորմալ բնույթ է կրում, քանի որ դրանցում որպես սկիզբ նշվում է 2015թ. իսկ որպես ավարտ հիմնականում 2020թ. կամ գրվում է «յուրաքանչյուր տարի» (բացառություն են կազմում 2.1, 3.2, 3.4, 3.5, 4.1, 6.2 և 6.3 խնդիրների ուղղությամբ թվով 18 միջոցառումների ավարտվելու ժամկետները): Առաջընթացի գնահատման ցուցիչները հաճախ չափելի չեն, չեն պարունակում առաջընթացը գնահատելու համար անհրաժեշտ տվյալներ և առաջընթացի նախատեսվող արժեքներ: Սահմանված չեն իրականացման պատասխանատուները և կատարված աշխատանքի գնահատողները/աշխատանքը ընդունողները:

2021-2025թթ. ՌԾ-ում սահմանվում է բուհի առաքելությունը, տեսլականը, արժեքները, հավակնությունները, առաքելությունից բխող 5 նպատակ, 28 խնդիր, 67 գործողություն և 80 գնահատման առանցքային ցուցիչ (ԳԱՑ): 2021-2025թթ. ՌԾ-ի համաձայն ՃՇՀԱՀ-ի առաքելությունն է. «Ճարտարապետության, շինարարության, դիզայնի, քաղաքային տնտեսության, էկոլոգիայի, կառավարման և տեխնոլոգիայի ոլորտներում՝ միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, եռաստիճան կրթական համակարգով մասնագետների պատրաստումը, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և ծառայությունների մատուցումը»:

2021-2025թթ. ՌԾ-ի նպատակներն են.

1. Ուսանողակենտրոն էկոհամակարգի ապահովում և միջազգայնորեն մրցունակ կրթական ծրագրերի իրականացում:
2. Միջազգայնորեն մրցունակ գիտահետազոտական արդյունքների ստացում և կիրառում:
3. Համալսարանի միջազգային ճանաչման ընդլայնում և գիտակրթական միջավայրի գրավչության ապահովում:
4. Համալսարանում ինքնավարություն, թափանցիկություն, հաշվետվողականություն և արդյունավետ փոփոխություններ ապահովող կառավարման ժամանակակից համակարգի ներդրում:
5. Տեղական և միջազգային գործընկերների հետ կառուցողական հարաբերությունների ընդլայնում և ամրապնդում:

Սակայն 2021-2025թթ. ՌԾ-ում բացակայում է գործողությունների ժամանակացույցը, սահմանված չեն իրականացման պատասխանատուները և կատարված աշխատանքի գնահատողները/աշխատանքը ընդունողները: Առաջընթացի գնահատման առանցքային ցուցիչները (ԳԱՑ) հիմնականում չափելի չեն, չեն պարունակում առաջընթացը գնահատելու համար անհրաժեշտ սկզբնական տվյալներ և առաջընթացի նախատեսվող արժեքներ: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ բուհի վարչակազմը որպես 2021-2025թթ. ՌԾ-ի ԳԱՑ-ի ելակետային արժեքներ է դիտարկվում 2015-2020թթ. ՌԾ-ի ԳԱՑ-երի թվային արժեքները, որոնք սակայն 2021-2025թթ. ՌԾ-ում սահմանված չեն:

ՃՇՀԱՀ-ն իրականացնում է իր առաքելությունից բխող կրթական ծրագրեր բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի մակարդակներում, ինչը համապատասխանում է ՀՀ ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին և ծածկում է բարձրագույն կրթության բոլոր աստիճանները:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Ինքնավերլուծության համաձայն 2021-2025թթ. ՌԾ-ի մշակման նպատակով ռեկտորի հրամանով և նախագահությամբ ստեղծվել է հանձնաժողով, որում ներգրավվել են պրոռեկտորները, աշխատակազմի ղեկավարը, ռեկտորի խորհրդականը, գիտական քարտուղարը և կրթության որակի ապահովման կենտրոնի ղեկավարը: ՌԾ-ի մշակմանը ներգրավված են եղել նաև մի շարք ներքին շահակիցներ (վարչական աշխատակիցներ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ): 2021-2025թթ. ՌԾ-ի նախագիծը լայն քննարկման է դրվել 2021 թվականի փետրվար ամսին Աղվերանում կազմակերպված աշխատաժողովում՝ թվով շուրջ 70 ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ 2021-2025թթ. ՌԾ-ի նախագիծը քննարկվել է նաև ամբիոններում և ֆակուլտետների խորհուրդներում:

Միևնույն ժամանակ, ՌԾ-ի մշակման գործընթացում շահակիցների ներգրավման քաղաքականությունը բացակայում է կամ փաստաթղթավորված չէ: Սահմանված չեն ՌԾ-ի մշակման սկզբունքները, աշխատանքային խմբի կազմին ներկայացվող պահանջները, մշակման ընթացակարգը, շահակիցների շրջանակը և քվոտաները (գործունեության որ ոլորտները պետք է ծածկեն շահակիցները, պետության, ներքին և արտաքին շահակիցների կարիքներ, ումից ստանալ այդ տեղեկատվությունը, ինչ մեթոդաբանությամբ և այլն):

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Ինքնավերլուծությունից և այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՃՇՀԱՀ-ի 2015-2020թթ. ՌԾ-ի ուղղությամբ կատարված աշխատանքների վերլուծության նպատակով Կրթության որակի ապահովման կենտրոնի և Կրթական ծրագրերի և մեթոդաբանության վարչության համակարգմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ներգրավվել են բուհի պրոռեկտորները, ուսումնական, գիտական, միջազգային կապերի, ֆինանսատնտեսական գործունեության և այլ ոլորտները համակարգող մի շարք ստորաբաժանումների թվով 21 ներկայացուցիչներ: Աշխատանքային խմբի գործունեության արդյունքում կազմվել է հաշվետվություն, որում արտացոլվել են 2015-2020թթ. ավարտված ՌԾ-ի 6 տարիների արդյունքները: Մասնավորապես հաշվետվությունում ըստ ռազմավարական նպատակների ներառված են համապատասխան գնահատման ցուցիչները, դրանց արժեքները 2015թ. սկզբի և 2020թ. ավարտի դրությամբ, ինչպես նաև վեր հանված խնդիրները ու դրանց լուծման հնարավոր ուղիները: Փաստաթղթի հավելվածում բերված են նաև գնահատման ցուցիչները տարեկան դինամիկան:

Ինչպես արդեն նշված է նախորդ չափորոշչում 2021-2025թթ. ՌԾ-ի մշակումը իրականացվել է այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից, որն իր աշխատանքների ընթացքում հաշվի է առել նաև 2015-2020թթ. ՌԾ-ի կատարողականի վերլուծության վերաբերյալ հաշվետվությունը: Որպես ՌԾ-ի մշտադիտարկման կիրառվող մեխանիզմ կարելի է դիտարկել ռեկտորի տարեկան հաշվետվությունները:

Այնուամենայնիվ, ռազմավարական ծրագրի մշակման, արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմները և ընթացակարգերը սահմանված չեն:

Դատողություններ: ՃՇՀԱՀ-ն ունի սահմանված և հրապարակված առաքելություն և ռազմավարական նպատակներ, որոնք, ընդհանուր առմամբ արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Սակայն 2015-2020թթ. և 2021-2025թթ. ռազմավարական

ծրագրերի նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված գործողությունների պլանում բացակայում է՝ ժամանակացույցը, սահմանված չեն պատասխանատուները և գնահատման ցուցիչների նախնական և ակնկալվող արժեքները: Այս հանգամանքը դժվարեցնում է ռազմավարական ծրագրի իրականացման կազմակերպումը, ինչպես նաև բուհի գործունեության արդյունավետության գնահատումը:

ՌԾ-ի մշտադիտարկման մեխանիզմ կարող է հանդիսանալ ռեկտորի տարեկան հաշվետվությունները: Սակայն հաշվետվությունները չեն կազմվում ըստ ռազմավարական նպատակների, ինչը դժվարացնում է առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման մշտադիտարկումը և/կամ ընթացիկ գնահատումը:

Հաշվի առնելով վերոնշյալը, կարելի է եզրակացնել, որ ռազմավարական պլանավորման և գործունեության մակարդակում ՃՇՀԱՀ-ն ձգտում է հիմնվել ՊԻԳԲ շրջափուլի վրա.

1. պլանավորում՝ ՌԾ-ի մշակում,
2. իրականացում՝ միջնաժամկետ և կարճաժամկետ գործողություններ,
3. գնահատում՝ հաշվետվություններ, քննարկումներ, վերլուծություններ,
4. բարելավում՝ հաշվի առնելով գրանցված խնդիրները հետագա գործունեության պլանավորում:

Սակայն վերոնշյալ փուլերը լիարժեք մշակված և փաստաթղթավորված չեն, իսկ ՊԻԳԲ շրջափուլը լիովին ներդրված չէ: Մասնավորապես բացակայում է ՌԾ-ի նպատակներից և խնդիրներից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը, ինչպես նաև ՌԾ-ի մշտադիտարկմանն ուղղված մեխանիզմները վերագիտակցման և բարելավման կարիք ունեն:

ՃՇՀԱՀ-ում իրականացվում են բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր, ինչը համապատասխանում է ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին, իսկ դրանց մասնագիտական ուղղվածությունները համահունչ են բուհի առաքելությանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ 2015-2020թթ. և 2021-2025թթ. ռազմավարական ծրագրերի նպատակները բխում են առաքելությունից և ընդհանուր առմամբ արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, ՃՇՀԱՀ-ի իրականացվող կրթական ծրագրերը համապատասխանում են ՈԱՇ-ին, իսկ առանձին դեպքերում նաև ՈՈՇ-ներին և բխում են բուհի առաքելությունից, փորձագիտական խումբը գտնում է, որ ՃՇՀԱՀ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: ՃՇՀԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՃՇՀԱՀ-ի կառավարումն իրականացվում է միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ՝ հոգաբարձուների խորհրդի և ռեկտորի կողմից, ինչպես նաև գիտական խորհրդի նշանակալի դերակատարությամբ: Կառավարման բարձրագույն մարմինը՝ 20 անդամից կազմված հոգաբարձուների խորհուրդն է, որը ձևավորվում է 5 տարի ժամկետով: Հոգաբարձուների խորհուրդը ձևավորվում է հիմնադրի, լիազոր մարմնի, ՃՇՀԱՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներից: Հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը: Հոգաբարձուների խորհրդի գործառույթներից է՝ ռազմավարական ծրագրի հաստատումը, տարեկան բյուջեի հաստատումը, ռեկտորի ընտրությունը, բուհի գործունեության վերաբերյալ ռեկտորի տարեկան հաշվետվության գնահատումը և այլն:

Այսինքն, հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է ռազմավարական պլանի հաստատման և դրա կատարման ընթացքի, միջնաժամկետ և երկարաժամկետ մշտադիտարկման (հաշվետվությունների ընդունման) համար: Ռազմավարական ծրագրի երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների իրականացման և ընթացիկ կառավարման համար պատասխանատու են ռեկտորը և գիտական խորհուրդը: ՃՇՀԱՀ-ի գիտական խորհուրդը կազմված է 59 անդամից և ձևավորվում է 5 տարի ժամկետով: Խորհրդի նախագահը ի պաշտոնե ռեկտորն է: Գիտական խորհրդի կազմում ներգրավված են նաև պրոռեկտորները, դեպարտամենտների ղեկավարները, գիտական քարտուղարը, ուսումնական վարչության պետը, գլխավոր հաշվապահը, մասնաճյուղերի, կենտրոնների տնօրենները, ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչներ, արհմիութենական կազմակերպության նախագահը, ուսանողական խորհրդի նախագահը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ և 14 ուսանող: Կարևոր է նշել, որ գիտական խորհրդում ուսանողները կազմում են շուրջ 23.7%-ը չնայած, որ ըստ ՃՇՀԱՀ-ի գիտական խորհրդի կանոնակարգի 7-րդ կետի՝ «ուսանողության ներկայացուցիչների թիվը չի կարող պակաս լինել գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսից»:

2021-2025թթ. ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2022թ. հունվարի 14-ին հաստատվել է ՃՇՀԱՀ-ի նոր կառուցվածքը: Նոր կառուցվածքի համաձայն ՃՇՀԱՀ-ի գործունեությունը ըստ ոլորտների համակարգում են՝

1. ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը,
2. կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորը,
3. գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը,
4. միջազգային կապերի և համագործակցության գծով պրոռեկտորը,
5. աշխատակազմի ղեկավարը,
6. կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոնի ղեկավարը,
7. ֆինանսա-տնտեսական վարչության ղեկավարը,
8. գլխավոր հաշվապահը:

Նշված պաշտոնները զբաղեցնող անձանց ենթակայության ներքո գտնվում են այդ ոլորտների ուղղությամբ նախատեսվող գործողությունները իրականացնելու համար բավարար քանակի ենթակառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք իրենց հերթին համալրված են անհրաժեշտ քանակի և որակավորում ունեցող մասնագետներով: Սակայն, ստորաբաժանումների կանոնակարգերը հիմնականում հնացած են կամ բացակայում են: Նոր

կառուցվածքին և դրանից բխող ստորաբաժանումների նոր լիազորությունների համապատասխանող կանոնակարգիրի մշակման գործընթացը մեկնարկային փուլում է:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՃՇՀԱՀ-ի դասախոսները և ուսանողները ներգրավված են բուհի կառավարման կոլեգիալ բոլոր մարմիններում: Մասնավորապես հոգաբարձուների խորհրդում որպես պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ ներգրավված են՝ պրոֆեսորադասախոսական կազմի 8 ներկայացուցիչ (այդ թվում 5-ը ամբիոնի վարիչ), ինչը կազմում է հոքաբարձուների խորհրդի անդամների 25%-ը: Հոքաբարձուների խորհրդի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները առաջադրվում են ՃՇՀԱՀ-ի գիտական խորհրդի կողմից: Խորհդի 25%-ը կազմված է ուսանողներից, խորհրդի անդամ ուսանողները առաջադրվում են ուսանողական խորհրդի կողմից:

Գիտական խորհրդի 59 անդամների թվում են՝ պրոֆեսորադասախոսական կազմի 21 ներկայացուցիչ (այդ թվում 8-ը ամբիոնի վարիչ), ինչը կազմում է գիտական խորհրդի անդամների շուրջ 35.5%-ը: Ինչպես արդեն նշվել է նախորդ չափանիշում ուսանողության ներկայացուցիչների համամասնությունը գիտական խորհրդում ըստ կանոնակարգի պետք է կազմի առնվազն 25%: Գիտական խորհրդում ներգրավված է նաև արհմիություն նախագահը, որը դրանով իսկ հնարավորություն է ստանում իր կազմակերպության անդամների շահերը պաշտպանելու նրանց իրավունքները ոտնահարող որոշումներից:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հաշվետու ժամանակահատվածում ՃՇՀԱՀ-ի երկարաժամկետ պլանավորումը արտացոլված է 2015-2020թթ. և 2021-2025թթ. ռազմավարական ծրագրերի նպատակներին ու խնդիրներին հասնելու համար սահմանված գործողություններում: Սակայն խնդիրների իրականացման միջոցառումների ժամկետների սահմանումը ֆորմալ բնույթ է կրում (2015-2020թթ. ՌԾ) կամ բացակայում է (2021-2025թթ. ՌԾ): Սահմանված չեն նաև գործողությունների պատասխանատուները, բացակայում են առաջընթացի գնահատման առանցքային ցուցիչների (ԳԱՑ) սկզբնական և ակնկալվող արժեքները:

Միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման գործընթացը ՃՇՀԱՀ-ում համակարգված չէ ո՛չ վարչական ստորաբաժանումների, ո՛չ էլ դեկանատների և ամբիոնների մակարդակներում: Միջնաժամկետ պլանավորման առանձին օրինակներ են միջազգային և գիտական դրամաշնորհային ծրագրերի պլանները (միջինում 3 տարի) որոնց առկայությունը սակայն պայմանավորված է գրանտատուի պահանջներով: Միևնույն ժամանակ այցի ընթացքում պարզ դարձավ, որ 2022 թվականից բուհում մեկնարկում է ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման համակարգման գործընթաց, և այցի ընթացքում հանձնաժողովին հասանելի դարձան ՃՇՀԱՀ-ի «Գիտական քաղաքականության մշակման և համակարգման բաժնի», «Ասպիրանտուրայի և գիտական տեղեկատվության բաժնի», «Ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի», «Կրթական ծրագրերի բաժնի», «Արտասահմանցի սովորողների բաժնի», «Միջազգային կապերի և համագործակցության բաժնի», «Ֆրանկոֆոնիայի ակադեմիական նվաճումների կենտրոնի», «Ռազմավարական պլանավորման և որակի ապահովման բաժնի», «Ինժեներական գեոդեզիայի ամբիոնի» և

«Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման ամբիոնի» 2022 թվականի գործունեության տարեկան պլանները: Վերոնշյալ պլանները կազմված են ըստ միասնական ձևաչափի և ներառում են՝ նախատեսվող գործողությունները, կատարման ժամկետը, պատասխանատու անձի անունը և ազգանունը, արդյունքի գնահատման չափանիշը, հղում ՃՇՀԱՀ-ի 2021-2025թթ. ՌԾ-ի համապատասխան նպատակին և խնդրին:

Մշտադիտարկման միակ գործող մեխանիզմը պրոռեկտորների հաշվետվությունների վրա հիմնված ռեկտորի տարեկան հաշվետվություններն են, որոնք սակայն ըստ ռազմավարական ծրագրի նպատակների չեն կազմվում: Երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը իրականացնելու և մշտադիտարկելու մեխանիզմները սահմանող փաստաթղթային հիմքերը բացակայում են:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Ըստ ինքնավելուծության իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության նպատակով ՃՇՀԱՀ-ն հարցումների միջոցով գործատուների և արտաքին այլ շահակիցների շրջանում իրականացնում է ուսումնասիրություններ, ինչպես նաև գործատուներ հանդիսացող շրջանավարտների հետ հանդիպումներից, պրակտիկաների անցկացման կառույցներից, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներից ստացվող տեղեկատվության վերլուծություններ: Որպես ապացույց կցվում է TACEESM Erasmus+ նախագծի շրջանակներում 2020թ. իրականացված «Աշխատաշուկայի կարիքների բենչմարք» հաշվետվությունը, որում ամփոփվում է ճարտարապետական և քաղաքացիական շինարարության ոլորտի 32 գործատու ընկերությունների/կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում իրականացված հարցման արդյունքները, կատարվում են եզրակացություններ և առաջարկություններ: Սակայն աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրության վերոնշյալ հաշվետվությունը հաշվետու ժամանակաշրջանում միակն է և պարբերական/համակարգային բնույթ չի կրում, ինչպես նաև չի ծածկում բուհի կողմից իրականացվող բոլոր մասնագիտությունները: Միևնույն ժամանակ, նշված հաշվետվությունը կարող է լավ օրինակ հանդիսանալ բուհի այլ մսանագիտությունների ուղղությամբ աշխատաշուկայի կարիքների վերհանման համար:

Որպես արտաքին գործոնների ուսումնասիրության գործիք է դիտարկվում նաև PEST-վերլուծությունը, որը առաջին անգամ իրականացվել է 2021թ. և ներառում է 21 ներքին շահակիցներից կազմված խմբի կարծիքը բուհի վրա ՀՀ մակրոմիջավայրի հնարավոր բացասական միտումների հնարավոր ազդեցության վերաբերյալ: Վերլուծությունը անդրադառնում է ՀՀ իրավական և քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային ու տեխնոլոգիական ոլորտներին, սակայն բավականին ընդհանրական է և չի պարունակում որևիցե վիճակագրական տվյալներ[5]:

2020թ-ից ՃՇՀԱՀ-ն ընդգրկվել է QS Rank վարկանիշային համակարգում և համակարգի չափանիշների համաձայն ներառվել է լավագույն 251-300 բուհերի ցուցակում: QS Rank վարկանիշավորման համակարգի պահանջների համապատասխան ՃՇՀԱՀ-ի արդյունքները բարելավելու նպատակով որոշ ստորաբաժանումների գործառույթներում կատարվել են փոփոխություններ:

[5] Փոփոխվել է բուհի կողմից ներկայացված դիտարկումների հիման վրա:

ՃՇՀԱՀ-ն որոշ գործողություններ է կատարում հավաստի տվյալների վրա հիմնված որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման նպատակով, սակայն գործընթացը համակարգային բնույթ չի կրում և ըստ երևույթի զարգացման նախնական փուլում է:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Ինքնավերլուծության համաձայն «ՃՇՀԱՀ կառուցվածքային ստորաբաժանումները կատարում են իրենց գործունեության տարեկան պլանավորում, տարվա ավարտին ներկայացնում են տարեկան հաշվետվություն՝ ամփոփելով պլանավորված գործողությունների իրականացման աստիճանն ու նախանշելով ձեռք բերված արդյունքները, և ներկայացված արդյունքների հիման վրա պլանավորում են հաջորդ տարվա իրենց գործունեությունը»: Սակայն այցի ընթացքում պարզ դարձավ, որ ստորաբաժանումների պլանավորման գործընթացը համակարգված չէ: Մասնավորապես բացակայում է ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման քաղաքականությունը և ընթացակարգը, իսկ մինչ 2022թ. բացակայել է նաև տարեկան գործունեության պլանավորման միասնական ձևաչափը: ՃՇՀԱՀ-ի ոչ բոլոր ստորաբաժանումներն են տարեկան գործունեության պլանավորում իրականացնում: ՃՇՀԱՀ-ում բացակայում է նաև ստորաբաժանումների տարեկան գործունեության մշտադիտարկման համակարգը: Հաշվետվողականությունը տարեկան մակարդակով կազմակերպելը հնարավորություն չի տալիս պլանավորման կամ իրականացման փուլերում առաջացած խնդիրները տարվա ընթացքում դուրս բերել: Խնդիրներ կան նաև ստորաբաժանումների տարեկան գործունեության գնահատման փուլում: Այդպես, համաձայն ինքնավերլուծության «ստորաբաժանումների մակարդակում գործառույթների գնահատումը որոշ դեպքերում խնդրահարույց է, քանի որ առանձին նպատակների համար գնահատման առանցքային ցուցիչները կամ սահմանված չեն, կամ էլ ոչ չափելի են»: Բացի դրանից այցի ընթացքում պարզվեց, որ բացակայում են նաև ստորաբաժանումների տարեկան գործունեության արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմները: Փաստացի ՃՇՀԱՀ-ի ստորաբաժանումների մակարդակում ՊԻԳԲ շրջափուլը ներդրված չէ, իսկ ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատումը հիմնավոր հիմքեր ապահովել չի կարող:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Ինքնավերլուծության համաձայն «կրթական ծրագրերի արդյունավետության մասին տեղեկատվության հավաքագրումն ու ամփոփումը իրականացվում է ՄԿԾ-ներից շահակիցների բավարարվածության գնահատման նպատակով իրականացվող հարցումների, հանդիպում-քննարկումների և ՄԿԾ-ների գնահատման միջոցով»: Սակայն, այցի ընթացքում պարզ դարձավ, որ դրանք համակարգված բնույթ չեն կրում և ծածկում են միայն կրթական ծրագրերի տիրույթը: Այնինչ 2015-2020թթ. և 2021-2025թթ. ՌԾ-ները սահմանում են բուհի գործունեության նաև այլ նպատակներ և խնդիրներ, որոնց ուղղությամբ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմները բացակայում են:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ՃՇՀԱՀ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման և թափանցիկության ապահովման հիմնական մեխանիզմներ են հանդիսանում բուհի պաշտոնական կայքէջը, բուհի էջերը սոցիալական ցանցերում, տեղեկատվական թերթիկները, թերթի պարբերականը, հետազոտությունների ամսագիրը և ՃՇՀԱՀ-ի գործունեության տարեկան հաշվետվությունները: Պաշտոնական կայքէջի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն պարունակում է բուհի գործունեության մասին բազմակողմանի տեղեկատվություն՝ պլաններ, հաշվետվություններ, կանոնակարգեր, կանոնադրություններ, կարգեր, ինչպես նաև կառուցվածքի, անձնակազմի, կրթական ծրագրերի, գիտական գործունեության, միջազգայնացման և այլնի մասին տեղեկատվություն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կայքը փոփոխության է ենթարկվել և այժմ ակտիվ զարգացման փուլում է:

Դատողություններ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՃՇՀԱՀ-ն ունի ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման համար անհրաժեշտ ստորաբաժանումներ ու համապատասխան որակավորումներ ունեցող անձնակազմ: Վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմը կրթական և այլ ռազմավարական նպատակների իրականացման համար բավարար է: ՃՇՀԱՀ-ի կառուցվածքը ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթացը և կառավարման էթիկայի կանոնների պահպանումը:

Կառավարման կոլեգիալ բոլոր մարմիններում ներքին շահակիցների ներգրավման միջոցով բուհը հնարավորություն է ընձեռում ուսանողներին ու դասախոսներին մասնակցել որոշումների կայացմանը:

ՃՇՀԱՀ-ն իրականացնում է երկարաժամկետ պլանավորում, սակայն սահմանված չեն գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները, ժամկետները, պատասխանատուները, առաջընթացի գնահատման առանցքային ցուցիչների (ԳԱՑ) սկզբնական և ակնկալվող արժեքները: Բացակայում են միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում և մշտադիտարկում իրականացնելու մեխանիզմները, իսկ գործիքակազմը մշակման փուլում է: Միևնույն ժամանակ, տարեկան գործունեության պլանների նոր ձևաչափը կարող է ապահովել ՌԾ-ի նպատակների և խնդիրների, ու ստորաբաժանումների գործունեության միջև համաձայնեցվածության մեծացմանը, սակայն ձևաչափի արդյունավետ լրացնելու փորձառությունը դեռրս պետք է զարգացվի:

Գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության նպատակով կազմակերպվող հարցազրույցները և հարցումները համակարգված չեն: Բազմակողմանիորեն հավասարակշռված որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման քաղաքականությունը և գործընթացները բացակայում են: Միևնույն ժամանակ, TACEESM Erasmus+ նախագծի շրջանակներում իրականացված «Աշխատաշուկայի կարիքների բենչմարք» հաշվետվությունը, կարող է լավ օրինակ հանդիսանալ բուհի այլ մասնագիտությունների ուղղությամբ աշխատաշուկայի կարիքների վերհանման համար:

ՃՇՀԱՀ-ի ստորաբաժանումների մակարդակում որակի կառավարման շրջափուլը (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) չի գործում, ինչը վտանգում է բուհի գործունեության արդյունավետությունը:

ՃՇՀԱՀ-ի գործընթացների արդյունավետությունը, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները ապահովվում են բավականին ինֆորմատիվ և օգտագործողի համար հարմար (user friendly) կայքէջի, սոցիալական հարթակների և այլ տեղեկատվության տարածման գործիքների միջոցով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՃՇՀԱՀ-ի կառավարման համակարգը ապահովում է էթիկայի կանոններին համապատասխան մասնակցային որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց, ունի ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ կառուցվածք, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, ինչպես նաև կարևորելով այն հանգամանքը, որ բուհն ունի բարեփոխումների համար բաց և պատրաստակամ անձնակազմ, որը փորձագետների կարծիքով կարող է սեղմ (և միաժամանակ իրատեսական) ժամկետներում զգալի բարելավումներ իրականացնել այս ոլորտում, փորձագիտական խումբը գտնում է, որ ՃՇՀԱՀ-ն բավարարում է չափանիշ 2-ի պահանջները:

Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ սահմանված չեն առաջընթացի գնահատման առանցքային ցուցիչների (ԳԱՑ) սկզբնական և ակնկալվող արժեքները, լիարժեք ներդրված չէ միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման պրակտիկան, ինչպես նաև կառավարումը չի իրականացվում համաձայն որակի կառավարման շրջափուլի (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում), որին ՃՇՀԱՀ-ն հատուկ ուշադրություն պետք է դարձնի:

Եզրակացություն: ՃՇՀԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Համաձայն ՃՇՀԱՀ 2021-2025թթ. ռազմավարական ծրագրի. «Համալսարանի առաքելությունն է՝ ճարտարապետության, շինարարության, դիզայնի, քաղաքային տնտեսության, էկոլոգիայի, կառավարման և տեխնոլոգիայի ոլորտներում՝ միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, եռաստիճան կրթական համակարգով մասնագետների պատրաստումը, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և ծառայությունների մատուցումը»: Ըստ էության բուհն իր առաքելությամբ սահմանում է ճարտարապետության ու շինարարաության ուղղությունները և դրանց էլ համապատասխան իրականացնում է իր գործունեությունը, պատրաստում է աշխատաշուկայի պահանջները բավարարող մասնագետներ: Ճիշտ է բուհն իր առաքելությամբ, բացի ճարտարապետության և շինարարության ոլորտներից, սահմանել է

նաև մյուս հարակից ուղղությունները, որոնցով նույնպես իրականացվում է մասնագետների պատրաստման համապատասխան կրթական ծրագրեր, սակայն փորձագիտական այցի ընթացքում իրականացված հարցադրումները ցույց են տալիս, որ վերջիններիս ուղղությամբ բուհում առկա են դեռևս բարելավման միջոցառումների իրականացման անհրաժեշտություն /մարդկային և նյութական ռեսուրսների բարելավման, կրթական ծրագրերի վերանայման առումներով/, հատկապես «Զբոսաշրջություն», «Կառավարում», «Տնտեսագիտություն» «Հաշվապահական հաշվառում և հարկում», «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» և «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտություններով իրականացվող ՄԿԾ-ների ուղղությամբ:

ՄԿԾ-ների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրթական ծրագրերն ունեն սահմանված ձևաչափի լրացված և կազմված կրթական ծրագրերի մասնագրեր (առկա է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերի օրինակելի ձևաչափ), որտեղ սահմանված են կրթական ծրագրերի նպատակները, վերջնարդյունքները, դրանց համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներով, քարտեզագրումն ըստ առանձին դասընթացների վերջնարդյունքների՝ կցվում է ծրագրի ուսումնական պլանը և ուսումնական պլանի քարտեզը: Կրթական ծրագրերի վերջնարդյունքները սահմանվում են հիմք ընդունելով որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ), իսկ առկայության դեպքում նաև որակավորումների ոլորտային շրջանակի (ՈՈՇ) նկարագրիչները: Բուհում ՄԿԾ-ների վերջնարդյունքների սահմանման գործընթացում մեծ դեր է ունեցել նաև 2014-2017թթ. Իրագործված TEMPUS ARMENQA ծրագրի շրջանակներում մշակված ‹‹Արդյունքահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակում›› ուղեցույցը, որն հասանելի է կրթական ծրագրերի մշակման պատասխանատուներին: Ինքնավերլուծության ուսումնասիրությունը և փորձագիտական այցը ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում առկա է նպատակաուղղվածություն ՄԿԾ-ների վերջնարդյունքները համապատասխանեցնելու ՈՈՇ-ի նկարագրիչներին և ծրագրերի բովանդակությունը մշակելու դրանց համապատասխան, իսկ բուհի աշխատակիցները (դասավանդողները) ներգրավված են ՈՈՇ-երի մշակման աշխատանքներին: Բուհում բոլոր ՄԿԾ-ները մշակված են միասնական ձևաչափով: Ներկայացված ձևաչափը ենթադրում է ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների առկայություն և ներառում է դրանց համապատասխանեցման գործիքներ ՀՀ ՈԱՇ-ի/ՈՈՇ-ի և ՄԿԾ-ի բաղադրիչ հանդիսացող մոդուլների միջև (ուղղահայաց համապատասխանեցում, տեսանելի կապի ապահովում):

Փորձագիտական այցի ժամանակ արված դիտարկումները ցույց են տալիս, որ առաջին անգամ ՈԱՇ-ին և ՈՈՇ-ին համապատասխան ՄԿԾ-ի վերանայումը և մշակումը բուհում կատարվել է 2016 թվականից սկսած՝ միջազգային ծրագրերի շրջանակներում վերապատրաստումների և խորհրդատվությունների հիման վրա: Այնուհետև տարիների ընթացքում փորձ է արվել բարելավել ՄԿԾ-ները և համապատասխանեցնել վերջնարդյունքները ՈԱՇ-ին կամ առկայության դեպքում ՈՈՇ-ին, ապահովել կրթական ծրագրի վերջնարդյունքների և դրա բաղադրիչների (դասընթացների) ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանեցումը, ինչը ներկայացվում է մասնագրերի քարտեզներում:

Փորձագիտական խմբի դիտարկումների արդունքում վեր են հանվել նաև առանձին խնդիրներ, որոնք կապված են ՄԿԾ-ների վերջնարդյունքներին դասընթացների անհամապատասխանության, ինչպես նաև մասնագրերի քարտեզներում դասընթաց-

վերջնարդյունք կապերի ոչ ճիշտ արտահայտման հետ: Օրինակ, մեկ ծավալուն դասընթաց ապահովում է կրթական ծրագրի մեկ վերջնարդունքի ձևավորում և դրան հակառակ, մեկ փոքր ծավալի դասընթաց միաժամանակ ապահովում է առնվազն 7-8 տարբեր վերջնարդյունքների ձևավորում:

Հարկավոր է փաստել նաև, որ մի շարք ՄԿԾ-ներ մշակված են տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում և հաշվի են առնված արտաքին շահակիցների կարիքները, անկախ նրանից այս գործընթացը կանոնակարգված է թե ոչ, քանի որ գործատուները հանդիսանում են նաև այդ կրթական ծրարգրերի վերանայման խմբի անդամներ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ բուհում առկա են ծրագրերի բարեփոխման աշխատանքների համակարգման համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ և խմբեր, կրթական ծրագրերը մշակող և սպասարկող ամբիոններ:

ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպման գործընթացում անհրաժեշտ է նաև նշել այն փաստը, որ մագիստրոսի կրթական ծրագրերում ամբողջությամբ անցում է կատարված «ցիկլային» ուսուցմանը, իսկ բակալավրի կրթական ծրագրերում այն կրում է փորձնական (պիլոտային) բնույթ առանձին մի քանի ծրագրերում, որոնք դեռևս չեն տվել արդյունքներ: Բուհում, որպես «ցիկլային» ուսուցում դիտարկվում է կիսամյակի ընթացքում մի քանի փուլերով դասընթացների կազմերպումը, համաձայն որի կազմված ժամանակացույցին համապատասխան և որոշակի տրամաբանական հաջորդականությամբ սահմանվում է 3-4 շաբաթյա ուսուցում և դասընթացի ավարտ (գնահատում), որից հետո հաջորդում է մյուս դասընթացների ուսուցումն ու գնահատումը, այդպիսիով կիսամյակի ընթացքում ունենալով 3-4 ուսուցման և գնահատման հաջորդական գործընթացներ:

ՃՇՀԱՀ-ն իրականացնում է նաև ՄԿԾ-ների վերանայում՝ կատարելով որոշակի փոփոխություններ տեղական և օտարերկրյա բուհերում իրականացվող նմանատիպ կրթական ծրագրերի հետ՝ վերլուծական համեմատության արդյունքների հիման վրա: Սակայն փորձագիտական այցի ընթացքում արված դիտարկումները ցույց տվեցին, որ դրանք երբեմն կրում են ուսումնական պլանների համեմատման և համադրման գործընթացներ և ոչ այնքան խորքային և համակարգված վերլուծության բնույթ:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ՄՈՒՀ-ում ընդունված ՄԿԾ-ների օրինակելի ձևաչափերը նախատեսում են կրթական վերջնարդյունքների նկարագրմանը զուգահեռ դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերի ու մեթոդների նկարագրում: Սակայն այդքան էլ հստակ չէ ՄԿԾ-ների վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների, ինչպես նաև գնահատման մեթոդների ընտրության գործում ՄՈՒՀ-ի սահմանած քաղաքականությունը, վերջինս սահմանող նորմերը բացակայում են: Չկա հստակ ընդունված նորմ, որի հիման վրա կարելի է ընտրել դասավանդման կամ ուսումնառության մեթոդը, որը կապված կլիներ նաև դասընթացի բովանդակության և ծավալի, դասընթացի և կրթական ծրագրի վերջնարդյունքների կապի ապահովման հետ: Հիմնական մեխանիզմը դա ARMENQA TEMPUS նախագծի շրջանակներում մշակված ուղեցույցն է, որից ելնելով մշակողները կարող են ընտրել որոշակի մեթոդներ, որը սակայն բուհի կողմից որպես կրթական ծրագրերի մշակման նորմատիվ փաստաթուղթ ընդունված չէ: Հստակ չէ, թե բուհում ինչպիսի նորմերի հիման վրա են սահմանվում կրթական ծրագրերի և ուսումնական պլանների կազմում

դասախոսություն/գործնական/սեմինար/լաբորատոր պարապմունքների լսարանային ժամաքանակների ընտրության փոխհարաբերությունը և ինքնուրույն աշխատանքների սահմանաչափերի ընտրությունը:

Բուհում սահմանված չեն կրթական ծրագրերի կառուցվածքին և բովանդակությանը վերաբերող նորմեր, համաձայն որոնց կարող էր մշակվել կրթական ծրագրերը, դրանցում ընդհանուր կարողությունների ձևավորմանն ուղղված մոդուլների, ընդհանուր և նեղ մասնագիտական դասընթացների, պարտադիր և կամընտրովի դասընթացների սահմանաչափերն ըստ դասընթացների քանակների և մոդուլների, կիսամյակի կամ կրթական ծրագրի ողջ ընթացքում գնահատման ձևի, դասավանդման և ուսումնառության մեթոդների, ուսանողի լսարանային բեռնվածության բաշխվածության, ուսումնական և մասնագիտական պրակտիկաների, գիտահետազոտական և նախագծային աշխատանքների մոդուլների վերաբերյալ: ՄԿԾ-ներ մշակողները օգտվում են վերը նշված ուղեցույցից, որը սակայն ընդհանուր բնույթ է կրում և ոչ պարտադիր: Կրթական ծրագրերի մասնագրերի ուսումնասիրությունից տպավորություն է ստեղծվում, որ նկարագրված դասավանդման մեթոդներում բուն դասախոսությունները բացակայում են, սակայն փորձագիտական այցի ընթացքում արված բազմաթիվ դիտարկումները և հարցադրումները փաստում են, որ այն հիմնական դասավանդման մեթոդներից է բուհում:

Ինքնավերլուծության համաձայն ՄԿԾ-ներում նշված դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդների արդյունավետությունը գնահատելու մեխանիզմներից են ՃՇՀԱՀ-ում ուսանողների շրջանում պարբերաբար անցկացվող հարցումները: Հարցումներից ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա ձևավորվում է դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդների արդյունավետության վերաբերյալ եզրակացությունը, որի հիման վրա անհրաժեշտության դեպքում իրականացվում են մեթոդների բարելավման միջոցառումներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այնուամենայնիվ հարցումների արդյունքներում դասընթացների դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներում իրականացվել են փոփոխություններ, այդ փոփոխությունները կրել են լոկալ բնույթ և կախված են եղել կոնկրետ խնդրի ի հայտ գալուց, այդ խնդրի լուծման համար իրականացված հարցման արդյունքից, քանի որ թե հարցումները և թե մշտադիտարկումը բուհում չի կրել կանոնակարգված և պարբերական բնույթ:

ՄԿԾ-ների դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության գնահատման մեկ այլ մեխանիզմ է դիտարկվում նաև ՃՇՀԱՀ-ում պարբերաբար անցկացվող դասալսումները, որոնց արդյունքները ամփոփվում են և ներկայացվում հաշվետվության տեսքով՝ հետագա քննարկումներ ծավալելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում ստացված արդյունքների հիման վրա իրականացվում է մեթոդների բարելավում:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ՄԿԾ-ների մասնագրերի ձևաչափերում սահմանված են գնահատման ձևերը: Սակայն ինչպես արդեն նշեցինք, գնահատման ձևերի ընտրության մեթոդական և նորմատիվ հիմքերը սահմանված չեն: Ուսանողների գիտելիքների գնահատման մեթոդները (որպես քաղաքականության մաս) հիմնականում ներառված է «Կրթական գործընթացներում ուսանողների գործառույթների իրականացման կարգում»: Կարգում սահմանվում են գնահատման տեսակները (քննություն, ստուգարք), գնահատման և պարտքերի մարման

ընթացակարգը, գնահատման ձևերը, գնահատման սանդղակը, գնահատման արդյունքների բողոքարկման կարգը և դասախոսի պատասխանատվության շրջանակը: Սույն կարգը նախատեսում է նաև գնահատման իրականացումը ուսումնառության վերջնարդյունքների համաձայն և միևնույն ժամանակ բացակայում է գնահատման սանդղակի նկարագիրը (պարզաբանող մատրիցը):

Առկա է «ՃՇՀԱՀ ուսումնական դասընթացների ծրագրերի կազմման/վերանայման և հաստատման կարգ», որում սահմանվում է նաև դասընթացի նկարագրի ձևաչափը և ուսումնառության արդյունքների առկայությունը: Վերջինիս համաձայն որոշ դասընթացներում նախատեսվում են գիտելիքների ընթացիկ և եզրափակիչ ատեստավորումներ (Հավելված 3.3.2 «Ատեստավորումներ» բաժին), ստուգման փուլեր: Սակայն թե կարգում, և թե այլ նորմատիվ փաստաթղթով սահմանված չէ այն մոդուլ-դասընթացների ցանկը, որոնց դեպքում ընթացիկ ատեստավորումը պարտադիր է, կամ այն դասընթացները, որոնք չեն պահանջում ընթացիկ ատեստավորում, ելնելով, օրինակ դասընթացի ծավալից կամ բնույթից: Փորձագիտական խումբը նշում է, որ հասկանալի չէ, թե ինչ հիմքերով է դասընթացի ծրագիր մշակողն ընտրում ատեստավորման եղանակները և ձևերը, տեսակները, ինչպես են ընտրվում ուսումնառության և դասավանդման մեթոդից կախված գնահատման մեթոդները, դրանց ընտրության առանձնահատկությունները և նորմատիվ հիմքերը: Հստակ չէր նաև, թե ինչպիսի փոփոխություններ են կատարվել գնահատման համակարգում վերջին 3-5 տարիների ընթացքում, կապված բողոքարկման արդյունքների վերլուծության կամ ուսանողների հարցումների և այլ պատճառներով:

Ինքնավերլուծության համաձայն՝ ուսումնառության ընթացքում գրագողության հսկման խնդիրը մշտապես գտնվում է ՃՇՀԱՀ-ի ուշադրության կենտրոնում: Կիրառվում են մի շարք մեխանիզմներ գրագողությունը բացառելու նպատակով: Միևնույն ժամանակ, ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված միջոցառումները բուհում չեն կրում կանոնակարգված և պարբերական բնույթ, անց են կացվում ըստ առանձին ուղղությունների և ծրագրերի: Հստակ չէ, թե ինչպես է բացահայտվում գրագողությունը նախագծային և այլ աշխատանքներում: Գրականության ցանկի ներառումը և հղումների պարտադիր իրականացումը, աշխատանքների վերլուծությունը և այլն ոչ բոլոր ֆակուլտեներում կամ ամբիոններում են պարտադիր: Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պահանջները չունեն համընդհանուր սահմանում, այլ ընդունելի են առանձին ամբիոնների կամ ֆակուլտետների կողմից սահմանված կանոներով կոնկրետ մասնագիտության համար:

Փորձագիտական այցի ընթացքում արված դիտարկումների կարելի է ասել, որ բուհը չի սահմանել իր համար ընդունելի «ակադեմիական ազնվություն» տերմինը, ելնելով իր առանձնահատկությունների տեսակետից և ըստ էության յուրաքանչյուրը (ըստ մասնագիտությունների) յուրովի է դիտարկում այն և ցուցաբերում է անհատական մոտեցում:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

Բուհում իրականացվում է կրթական ծրագրերի այլ նմանատիպ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ համահունչության ապահովում (բենչմարքինգ): Սակայն պետք է փաստել, որ հիմնականում համահունչության ուսումնասիրման և ապահովման աշխատանքներն ունեն ոչ կանոնակարգված բնույթ: Համեմատություններն իրականացվում են կրթական ծրագրերը մշակող և սպասարկողների

կողմից իրենց կրթական ծրագրերի համահունչության ապահովման, դիպլոմի միջազգային ճանաչման, շարժունության ապահովման նպատակներից, երբեմն սեփական նախաձեռնողականությամբ կամ ղեկավար անձնակազմի համապատասխան հրահանգների հիման վրա, և շատ դեպքերում վերաբերում են հիմնականում ուսումնական պլանների՝ դասընթացների անվանումների և ծավալների համապատասխանեցմանը, բուհին բնորոշ հիմնական և ավանդական մասնագիտությունների ուղղությամբ՝ շինարարություն, ճաշտարապետություն:

ՄԿԾ մշակող և սպասարկող ամբիոններն ու ստորաբաժանումներն ունեն իրենց սեփական շահագրգռվածությունը կրթական ծրագրերի համահունչության ապահովման գործում, քանի որ խնդիր ունեն իրենց դիպլոմների միջազգային ճանաչման և բուհի միջազգայնացման ապահովման, ինչը բուհում նկատելի է և հիմնական նպատակներից մեկն է հանդիսանում: ՄԿԾ-ների համահունչության ապահովման նպատակով դիտարկվում են թե ԱՊՀ երկրների, և ՌԴ ճարտարապետության և շինարարության ուղղվածության բուհերը, և թե երվրոպական՝ Ավստրիա, Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա և այլն, մի շարք նմանատիպ ուղղվածության բուհերի համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերը: Կրթական ծրագրերի վերանայման և հաջողված փորձի օրինակ է նաև ԳԵՈՏԵԿ ծրագրի շրջանակներում գեոդեզիա և կադաստր կրթական ծրագրերի վերանայումը և առանձին մասնագիտության սահմանումը: Մեկ այլ լավ փորձ է եռակողմ՝ ՀՊՏՀ-ի և Վալենսիայի հետ համատեղ «նախագծերի կառավարում» ծրագրի իրականացումը:

Նկատելի է բուհի միջազգայնացման գործընթացների և, մասնավորապես իրականացվող միջազգային ծրագրերի դրական ազդեցությունը ՄԿԾ-երի ձևաչափերի վրա:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Ինքնավերլուծությունից հետևում է, որ ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացների հիմքում ընկած է կրթական ծրագրերի համեմատական վերլուծության (բենչմարքինգ), դասալսումների, ՊԴ կազմի և ուսանողների շրջանում «պարբերաբար» անցկացվող հարցումների արդյունքները, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից կատարված առաջարկները և դիտարկումները, իսկ նոր ծրագրերի մշակման և ներդրման համար հիմնավորում են հանդիսանում ՀՀ-ում գործող տարբեր կազմակերպությունների առաջարկները: Բուհում առկա է դասընթացների ծրագրերի կազմման/վերանայման և հաստատման կարգ, որը ներկայացվում է որպես հիմնական փաստաթուղթ կրթական ծրագրերի վերանայման և արդյունավետության գնահամատման քաղաքականության մասով: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ դասընթացի ծրագիրը չի ենթադրում վերանայման պահանջ, օրինակ դասալսումների արդյունքում կամ մշադիտարկման կամ ուսանողների շրջանում իրականացված հարցումների և վերհանված խնդիրների և առաջարկությունների առկայության դեպքերում:

Բուհում բացակայում է ՊԻԳԲ շրջափուլի սկզբունքների վրա հիմնված, ներքին և արտաքին շահակիցների կարիքները հաշվի առնելու մեխանիզմները ներառող փաստաթուղթ (կարգ, ուղեցույց կամ ձեռնարկ): ՄԿԾ-ների մշակման ընթացքում կանոնակարգված կերպով հաշվի չեն առնվում արտաքին շահակիցների/գործատուների կարիքները: Վերջիններս հաշվի են առնվում այնքանով, որքանով որ արտաքին շահակիցները միաժամանակ հանդիսանում են բուհի աշխատակիցներ և ունենում են մասնակցություն կրթական ծրագրի մշակման

գործընթացներում: Ուսանողները անմիջականորեն ընդգրկված չեն ՄԿԾ-ների մշակման գործընթացում, իսկ ուսանողների կարիքների գնահատման և ներառման մեխանիզմները ամբողջական չեն:

Բուհում իրականացված մշտադիտարկումները, այն էլ դասընթացների դասալսումների տեսքով և ոչ հստակ կանոնակարգմամբ կամ պարբերականությամբ, վերաբերում են միայն առանձին դասընթացների: Վերջիններս առնչություն չունեն կրթական ծրագրի կամ դասընթացի բովանդակությանը և կառուցվածքին, դրանցում խնդիրների վերհանմանը, բարելավմանը: Ավելին, դասալսումներն հիմնականում անց են կացվել ելնելով ամբիոնների կամ ֆակուլտետների կողմից բարձրացված որոշ հարցադրումների պատասխաններ ստանալու և խնդիրներ ուսումնասիրելու նպատակներով, որոնք հիմնականում կապված են եղել դասախոսի կողմից դասընթացի վարման արդյունավետության, դասախոս-ուսանող առկա խնդիրների պարզաբանման և նմանատիպ այլ հարցերի հետ:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ՃՇՀԱՀ-ում վերջին հինգ տարիների ընթացքում ներդրված նոր կրթական ծրագրերի համար հիմնականում հիմք են հանդիսացել ոլորտի առաջատար կազմակերպությունների առաջարկները: Մասնավորապես, ՀՀ Կադաստրի կոմիտեի առաջարկով ներդրվել է նոր «Գեոմատիկա» մասնագիտությունը, որում ընդգրկվել են «Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր» և «Գեոդեզիա և կադաստր» կրթական ծրագրերը: ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի առաջարկով առանձնացվել և ներդրվել են «Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծում, շինարարություն, կառավարում» և «Հիդրոտեխնիկական և հիդրոէներգետիկ կառուցվածքներ» կրթական ծրագրերը: «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) առաջարկով ներդրման փուլում է «Երկաթգծի շինարարություն, երկաթգիծ, գծային տնտեսություն» կրթական ծրագիրը, և այլն: Այս փոփոխությունները տեսանելի էին նաև փորձագիտական այցի ընթացքում արված դիտարկումների արդյունքում, երբ ֆոկուս-խմբային հանդիպումների մասնակիցները նույնպես փաստում էին կրթական ծրագրերի փոփոխությունների համար արտաքին շահակիցների/գործատուների առաջարկների ազդեցությունը:

Ինքնարվերլուծության մանրամասն ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում արված դիտարկումներից կարելի է փաստել, որ ՄՈՒՀ-ում համակարգված չէ ՄԿԾ-ների մշակման, մշտադիտարկման և վերանայման գործընթացները: Դրան էլ համապատասխան հստակ չէ կամ բացակայում է ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՃՇՀԱՀ-ում իրականացվում են ՄԿԾ-ների բարելավման աշխատանքներ, որոնք կնպաստեն բուհի ՌԾ-ով սահմանված նպատակների իրականացմանը և աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագետների պատրաստմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում առկա է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերի մշակված օրինակելի ձևաչափեր, որոնց հիման վրա մշակվում են ՄԿԾ-ների մասնագրերը, սակայն վերջիններս չունեն որևէ իրավական հիմքով հաստատում (հրաման, հրահանգ և այլն), վերջինս կնպաստի առավել կանոնակարգված աշխատանքին:

Կրթական ծրագրերի մասնագրերի քարտեզներում ներկայացված կրթական ծրագրի և դասընթացի վերջնարդյունքների կապի առկայությունը (քարտեզը) ողջունելի է, միևնույն

ժամանակ առկա է խիստ անհրաժեշտություն այս ուղղությամբ աշխատանքներն առավել ինտենսիվ դարձնելու և բարելավելու, կրթական ծրագրերի և դասընթացների նկարագրերը մշակողների և դասախոսների կարողությունների զարգացում իրականացնելու և հնարավորինս արդյունավետ կազմելու քարտեզները, ինչը կնպաստի կրթական ծրագրերում խնդիրների բացահայտմանը և որակի շարունակական բարելավմանը:

Ողջունելի և առավել արդյունավետ է ՄԿԾ-ների մասնագրերում վերջնարդյունքների նկարագրությանը զուգահեռ ՈԱՇ-ի կամ, առկայության դեպքում ՈՈՇ-ի նկարագրիչների համահնչեցման առկայությունը, ինչն առավել հստակ է դարձնում կրթական ծրագրի համապատասխանությունը շնորհվող որակավորումների ակնկալվող վերջնարդյունքներին:

Կրթական ծրագրի և դասընթացների վերջնարդյունքների վերաբերյալ հաղորդակցումը ՄՈՒՀ-ում դեռևս մշակման, ներդրման և զարգացման փուլում է:

Դրական է, որ կրթական ծրագրերի մասնագրերում դասավանդման ու ուսումնառության մեթոդները նկարագրված են, սակայն դասընթացների ծրագրերում վերջնարդյունքներին համապատասխան մեթոդների ընտրության քաղաքականություն առկա չէ: Դասախոսն իր փորձառությունից ելնելով է ընտրում դասավանդման մեթոդը ու հաշվի առնելով, որ հիմնականում դասախոսները ոլորտի փորձառու մասնագետներ են, դասավանդման մեթոդների ընտրությունը նպաստում է ուսանողների մոտ վերջնարդյունքների ձևավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ուսանողների համար ստեղծվում են մեծ հնարավորություններ իրական նախագծերի վրա աշխատելու, որի արդյունքում ուսանողները հիմնականում կարողանում են հետագայում ճիշտ կիրառել «աշխատանքային» գործիքները և դառնալ մասնագետ:

ՄԿԾ-ներրի ձևաչափում առկա է վերջնարդյունքներին համապատասխան գնահատման մեթոդների ներկայացման պահանջ, ինչը դրական է և ցույց է տալիս, որ բուհը կարևորում է գնահատման և դասավանդման մեթոդների ընտրությունը և ուշադրություն է դարձնում դրանց: Միևնուն ժամանակ առկա է գնահատման սանդղակի կիրառման տարբեր մոտեցումներ տարբեր ամբիոններում:

Բուհում տպավորիչ է ուսանողների և ՊԴ կազմի շարժունության առկա ցուցանիշները, սակայն թե որքանով է այն նպաստում կրթական ծրագրերի վերջնարդյունքների արդյունավետ ձևավորմանը և բուհի միջազգայնացման ցուցանիշների բարձրացմանը, հնարավոր չէ հստակ գնահատել, քանի որ ռազմավարական պլաններում առկա չեն չափելի գնահատման ցուցիչներ և չեն իրականացվում համապատասխան տեսանելի վերլուծություններ: Վեր հանված չեն այն խոչընդոտները և դրական կողմերը, որոնք թույլ են տալիս ուսանողներին և դասախոսներին մեկ կիսամյակ ամբողջությամբ կամ մեկ դասընթաց առանձին ուսանել այլ բուհում կամ երկրում:

Բուհում կրթական ծրագրերի համահունչության ապահովման տակ երբեմն դիտարկվում է զուտ կրթական ծրագրերի բովանդակության՝ ուսումնական պլանների համանմանությունը, սակայն վերջինս հաշվի չի առնում թե ազգային տեղական առանձնահատկությունները և թե տվյալ դասընթացների բուն բովանդակությունը, ինչը որոշ դեպքերում կարող է ունենալ նաև բացասական հետևանքներ:

Որպես կրթական ծրագրերի մշտադիրտարկման և արդյունավետության գնահատման հիմնական գործիքներ, բուհում դիտարկվում են դասալսումները և հարցումները, որոնք սակայն բուհում չունեն կանոնակարգված և պարբերական բնույթ:

Բուհում առկա ՄԿԾ-ների վերանայման մոտեցումները կրում են անհատական բնույթ, առկա է արտաքին շահակիցների/գործատուների հետ համագործակցություն, որը հիմնականում հիմնված է անձնական հետաքրքրությունների վրա:

Բուհում առկա չէ ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ և կանոնակարգեր, որոնք կնպաստեն ՄԿԾ-ների շարունակական և պլանավորված բարելավումներին:

Հետադարձ կապի ապահովումն իրականացվում է այնքանով, որ շրջանավարտներն աշխատում են ոլորտում և պահպանում են կապը ՊԴ կազմի հետ, որով էլ նպաստում են ՄԿԾ-ների բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացմանը: ՄԿԾ-ներում իրականացվող փոփոխությունները երբեմն կարող են հիմնավորված չլինել և չնպաստեն վերջինիս բարելավմանը, քանի որ չկան հստակ գնահատման և մշտադիտարկման գործիքներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում առկա ՄԿԾ-ները հիմնականում համահունչ են հաստատության առաքելությանը, մշակված և մանրամասն նկարագրված են ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքների, ՄՈՒՀ-ում իրականացվում են նպատակաուղղված քայլեր կրթական ծրագրերի բարելավման և բարեփոխման, ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և ուսանողների գնահատման քաղաքականությունների մշակման, ակադեմիական ազնվության ապահովման գործիքների ներդրման ուղղությամբ, իրականացվում են ուսումնասիրություններ և վերլուծություններ կրթական ծրագրերի բովանդակության և աշխատաշուկայի պահանջներին, ինչպես նաև նմանատիպ այլ ճանաչված կրթական ծրագրերին համապատասխանեցման և ուսանողների ու դասախոսների շարժունության, մուտի միջազգայնացման ապահովման ուղղությամբ և առկա է պատրաստակամություն և մոտիվացվածություն բուհում ներդնելու կրթական ծրագրերի մշադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման հստակ քաղաքականություն, 2016 թվականից մինչ օրս իրականացված աշխատանքների արդյունքները և պատրաստակամությունը դրանց շարունակականության ապահովման և արդյունավետության բարձրացման, վերջիններիս անհրաժեշտության գիտակցումը և չխուսափումը փոփոխություններից ու նորարարություններից, փորձագիտական խումբը գտնում է, որ ՃՇՀԱՀ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: ՃՇՀԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՃՇՀԱՀ-ում բոլոր կրթական ծրագրերով ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգերի համաձայն, որը սակայն ՃՇՀԱՀ-ի ներբուհական մասնագիտական քննությունների անցկացման ընթացակարգը չի ներառում:

ՃՇՀԱՀ-ն կիրառում է դիմորդների հավաքագրման տարբեր մեխանիզմներ, ինչպիսիք են Expo-ները, ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքի և սոցիալական ցանցերի կիրառումը, ՃՇՀԱՀ-ի ընդունելության և կարիերայի բաժինի կողմից կազմակերպված միջոցառումները, բուկլետների տպագրումը, ռադիոյի և հեռուստատեսության միջոցներով գովազդային տեղեկատվության տարածումը:

ՃՇՀԱՀ-ն կազմակերպում է նաև «Մասնագիտությունների օրեր» հանրապետության մարզերի տարբեր քաղաքներում: ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությանը կից ներկայացված Հավելված 4.1.1-2-ով սահմանված են դիմորդների հավաքագրման մեխանիզմները: Համալսարանի կողմից իրականացվում են ճանաչողական և տեղեկատվական բնույթի հանդիպումներ ՀՀ տարբեր ավագ դպրոցներում միաժամանակ կազմակերպվում են դիմորդների այցեր համալսարանի մասնագիտական լաբորատորիաներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ի Կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոնը նույնպես ընդգրկված է ուսանողների հավաքագրման գործընթացում: Միաժամանակ ՄՈՒՀ-ի ընդունելության և կարիերայի բաժնի կողմից դիմորդներին տրամադրվում է խորհրդատվություն մասնագիտական կողմնորոշման նպատակով:

ՃՇՀԱՀ-ի կողմից իրականացվել է բուհ ընդունված ուսանողների շրջանում հարցումներ, որոնցում ներկայացված է նաև բուհն ընտրելու որոշման կայացման հիմնական պատճառները և բուհի մասին տեղեկանալու աղբյուրները:

ՄՈՒՀ-ի կառուցվածքում առկա է ավագ դպրոց և քոլեջ որոնք հնարավորություն են ընձեռում իրականացնել ուսանողների արդյունավետ հավաքագրում: Ուսանողների հավաքագրման գործընթացում նաև կարևոր ազդեցություն է ունենում տարբեր կրթական հաստատությունների՝ դպրոցների, քոլեջներ հետ առկա համագործակցությունը:

ՄՈՒՀ-ում բակալավրի կրթական ծրագրով ընդունելությունը իրականացվում է միասնական քննությունների արդյունքների հիման վրա, բացառությամբ դիզայն և ճարտարապետություն մասնագիտությունների (ընդունելությունն իրականացվում է գծագրություն և գծանկար քննությունների արդյունքների հիման վրա՝ համալսարանում):

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Որպես կարիքների վերհանման քաղաքականություն դիտարկվում է տարբեր ժամանակային կտրվածքում ուսանողների և շրջանավարտների շրջանակում իրականացվող հարցումները որոնք սակայն սահմանված պարբերականություն չունեն:

Ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմ է հանդիսանում նաև ուսանողների հետ համալսարանի ռեկտորի և պրոռեկտորների հանդիպումները, որոնց համար սահմանված են հստակ ժամանակացույցեր, ինչպես նաև համալսարանի կառավարման տարբեր մարմիններիում ուսանողների ներգրավվածությունը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ համալսարանի կրթական ծրագրերի պատասխանատուները Կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոնից ուսանողների շրջանակում իրականացված հարցումների արդյունքում առաջարկներ են ստանում՝ ծրագրերի բարելավման նպատակով:

Ուսանողները իրենց կարիքները բարձրաձայնում են նաև դիմելով դեկանատներին կամ ամբիոնների աշխակատազմներին:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Մինչև 2022 թվականի հունվարի 14-ի հոգեբարձուների խորհրդի որոշմամբ հաստատված համալսարանի նոր կառուցվածքի ուժի մեջ մտնելը ուսանողների արդյունավետ ուսումնառությունը կազմակերպելու նպատակով համալսարանի Լրացուցիչ կրթության բաժնի կողմից իրականացվել են կարիքների գնահատում՝ ամբիոններից համապատասխան հայտերի ստացման և Կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոնի կողմից իրականացված հարցումների հիման վրա:

2022 թվականի հունվարի 14-ից հետո նշված գործառույթը իրականացնում է ՃՇՀԱՀ նորարարության և ձեռներեցության աջակցման կենտրոնը:

Փորձագիտական այցի ընթացքում համալսարանի ուսանոնղերը նշեցին տարբեր դասընթացների մասնակցության մասին մասնավորապես անվճար հիմունքով ուսանողները և դասախոսները մասնակցել են՝ համալսարանի Լեզուների կենտրոնի կողմից կազմակերպվող դասընթացներին, Autodesk Revit և AutoCad ծրագրերի իմացությանը ուղղված դասընթացների: Միաժամանակ ՃՇՀԱՀ նորարարության և ձեռներեցության աջակցման կենտրոնի կողմից կազմակերպվում են նաև վճարովի դասընթացներ օրինակ՝ «Նախագծի կառավարման հիմունքներ» դասընթացը նախատեսելով 10% զեղչ համալսարանի դասախոսների և ուսանողների համար:

Համալսարանի ամբիոնների աշխատակազմի և դասախոսների կողմից ուսանողներին պարբերաբար տրամադրվում են խորհրդատվություններ մասնագիտական գիտելիքների բարելավման նպատակով՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով արվեստանոցներում համատեղ աշխատելու և ծանոթանալու բնագավառի իրական աշխատանքների հետ:

ՃՇՀԱՀ-ում կանոնագարգված են խորհրդատվությունների տրամադրումը, մասնավորապես դասախոսական կազմի բեռնվածքի հաշվարկման գործընթացվում հատկացվում են լրացուցիչ դասաժամեր ուսանողներին կուրսային աշխատանքաների և ավատական աշխատանքների վերաբերյալ խորհդատվության տրմադրման համար:

Միաժամանակ փորձագիտական այցի ընթացքում համալսարանի արվեստանոցներում առկա էին ուսանողների՝ 4-5 հոգուց բաղկացած խմբեր, ովքեր դասախոսների ղեկավարությամբ կատարում էին անհատական աշխատանքներ:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՃՇՀԱՀ աշխատակազմը մշտապես պատրաստ է տրամադրել աջակցություն ուսանողներին և բոլոր խնդիրներին տալ համապատասխան լուծումներ: ՃՇՀԱՀ-ում սահմանված են ռեկտորի և պրոռեկտորների կողմից ուսանողների, ընդունելության ժամանակացույցը, որը հնարավորություն է տալիս ուսանողներին մասնակցել ՃՇՀԱՀ ռեկտորի և պրոռեկտորների հետ հանդիպումներին և ներկայացնել իրենց հուզող հարցերը, իսկ դեկանատներն ու ամբիոնները մշտապես բաց են ուսանողների հարցերի քննարկման համար, քննարկումների ընթացքում նաև նշվեց, որ որոշ դեպքերում ուսանողներին օժանդակում և ուղղորդում են նաև դասախոսները:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ՃՇՀԱՀ-ում մինչև 2022 թվականի հունվարի 14-ը պատասխանատու կառուցվածքային միավոր է հանդիսացել Շրջանավարտների աջակցման և կարիերայի կենտրոնը, որի գործառույթները սահմանված են եղել ստորաբաժանման գործունեությունը կարգավորող կարգում: Հունվարի 14-ից հետո ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցման գործառույթները համակարգվում է Նորարարության և ձեռներեցության աջակցման կենտրոնի և Ընդունելության և կարիերայի բաժինի կողմից մասնավորապես՝ վերը նշված կենտրոնը ինչպես արդեն նշվել է իրականացնում է մասնագիտական դասընթացների կազմակերպում, իսկ ընդունելության և կարիերայի բաժինը իրակնացնում է հարցումներ շրջանավարտների շրջանակում: Հարցումների՝ նպատակն է հավաքագրել ուսանողների զբաղվածության, մասնագիտական գործունեության շրջանակի վերաբերյալ տեղեկությունները ձևավորելով համապատասխան տվյալների շտեմարան:

ՃՇՀԱՀ-ն նախատեսում է նաև պաշտոնական կայք էջում ձևավորել շրջանավարտների ինքնակեսագրությունների շտեմարան:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՃՇՀԱՀ-ն ջանքեր է գործադրում ուսանողներին ներգրավել հետազոտական աշխատանքներում, ընդգրկելով տարբեր հետազոտական աշխատանքներում, խրախուսելով դասախոսների հետ համատեղ հետազոտությունների իրականացումը:

ՃՇՀԱՀ-ում նախատեսվում է ստեղծել ՈՒԳԸ (մշակվել է կանոնադրություն), որի նպատակն է դառնալ գիտական հետաքրքրություն ուսանողների միավորում:

Փորձագիտական այցի ընթացքում ուսանողների կողմից նշվեց, որ մասնակցել են տարբեր գիտաժողովների և ներկայացվեց, որ առկա են որոշակի հոդվածներ, որոնք հրատարակվել են համալսարանի կողմից հրատարակվող հանդեսներում:

Ուսումնասիրելով համալսարանի կողմից հրատարակված հանդեսներում զետեղված հոդվածները կարող ենք նկատել, որ առկա են գիտական հոդվածներ, որոնց հեղինակները հանդիսանում են ուսանողները (առանց համահեղինակեների):

Համալսրանում իրականացվում են տարբեր հետազոտական աշխատանքներ, որոնցում ներառված են նաև ուսանողները, նաև հատկանշական է, որ համալսարանի կողմից կազմակերպվում են ներքին դրամաշնորհային ծրագրեր, որոնց մասնակիցների կազմում ներառված են տարբեր կուրսերի ուսանողներ:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՃՇՀԱՀ-ում ուսանողների շահերի պաշտպանության մարմին է հանդիսանում համալսարանի ուսանողական խորհուրդը (ՈՒԽ):

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների իրավունքների պաշտպանությունը հիմանականում իրականացվում են ամբիոնները, դեկանատները և դասախոսները:

Համաձայն ՈՒԽ նախագահի ներկայացրած տվյալների ՈՒԽ-ն իր կազմում ներառում է մոտավորապես 150 անդամ, որից 25-30-ը ընդգրկված են կառավարման մարմիններում: ՈՒԽ անդամների կազմը ձևավորվում է պարտադիր և կամավոր ընդգրկված անդամներից, պարտադիր անդամ են հանդիսանում՝ ակադեմիական խմբերի անդամները:

ՈՒԽ-ն ունի առանձնացված բյուջե, որը ըստ ՈՒԽ ներկայացուցիչների բավարարում է իրենց առջև դրված խնդիրների լուծման համար: Համալսարանի հոգեբարձուների և գիտական

խորհուրդներում ՈւԽ-ի անդամները ներկայացված են, (ՈւԽ-ի կողմից համալսարանի կառավարման մարմիններում ուսանողների առաջադրման պահանջներ են հանդիսանում՝ ակտիվությունը և միջին որակական գնահատականը) նաև հատկանշական է, որ ՈւԽ-ն ընդգրկված է համալսարնում իրականացվող բարեփոխումների գործընթացներում:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՃՇՀԱՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման հիմնական մեխանիզմներ են հանդիսանում հարցումները որոնց նպատակն է գնահատել ուսանողների բավարավածության աստիճանը ամբիոնների և դասախոսների աշխատանքից, ինչպես նաև հարցումներ իրականցվում են տարբեր առարկաների շրջանակում /դասախոսի կողմից/ առարկանների արդյունավետության վերաբերյալ:

Ի տարբերություն համալսարանի կողմից ներկայացված ինքնավերլուծության հավելվածներում առկա հարցումների, որոնք իրականացվել են 2016 և 2017 թվականներին և չունեն պարբերական բնույթ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանում իրականացվում են լրացուցիչ հարցումներ վերջին տարիների ընթացում և նշված հարցումները հիմնականում ուղղված են նշված պահին առկա խնդիրները գնահատելուն:

Հատկանշական է նաև, որ այցի ընթացքում հանդիպած ուսանողների կողմից նշվեց, որ հարցումների արդյունքները չեն քննարկվում ուսանողների հետ և դրանց հետևանքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների չեն տիրապետում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ բուհում գործում են մի շարք մեխանիզմներ ընդունելության գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար: Իրականացվում են տարբեր հանդիպումներ և այցեր՝ բուհի մասնագիտությունների մասին տեղեկատվության տարածման նպատակով, ինչն էլ նպաստում է դիմորդների թվի աճին և մասնագիտական կողմնորոշմանը:

Դրական է գնահատվում այն փաստը, որ ուսանողների կարիքների գնահատման համար կիրառվում են մի շարք մեխանիզմներ. հարցումներ որոնք սակայն սահմանված պարբերականություն չունեն, հանդիպումներ ղեկավար կազմի կողմից: Դրական է, որ ուսանողների կողմից բարձրացված հարցերի լուծան նպատակով ՃՇՀԱՀ-ում սահմանված է ռեկտորի և պրոռեկտորների հետ հանդիպման հստակ ժամնակացույց, բացի այդ դեկանատները, ամբիոնները և դասախոսական կազմը մշտապես պատրաստ են տրամադրել խորհրդատվություն ուսանողներին: Նշված աշխատանքները նպաստում են ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ու ուսանողական արդյունավետ միջավայրի ստեղծմանը:

Դրական է նաև այն, որ բուհը հնարավորություն է տալիս ուսանողներին մասնակցելու լրացուցիչ պարապմունքների, որի նպաստում է ուսանողների մասնագիտական առաջընթացին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՈւԽ-ի առկայությունը բուհում, և այն փաստը, որ ստեղծման գործընթացում է գտնվում ՈւԳԸ-ն: Միևնույն ժամանակ անհրաժեշտություն կա ակտիվացնել ՈւԽ աշխատանքները մասնավորապես՝ ՈւԽ անդամ չհանդիսացող ուսանողների կարիքների գնահատման և շահերի ներկայացման մասով, ինչպես նաև հաշվի առնելով համալսարանում իրականացվող բարեփոխումների

հանգամանքը, ՈւԽ և ՈւԽ անդամ չհանդիսացող ուսանողների ներգրավումը նշված գործընթացներում կնպաստի ուսանողների կրթական կարիքների բացահայտմանը և մշակվող կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է այն հնարավորությունը, որը ՃՇՀԱՀ-ն ստեղծել է նպաստելու ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավման համար: Ներքին դրամաշնորհները, խրախուսումները նպաստում են ուսանողների մոտ հետազոտական և ստեղծագործական հմտությունների զարգացմանը:

Դրական է, որ բուհում գործում են Նորարարության և ձեռներեցության աջակցման կենտրոնը և Ընդունելության և կարիերայի բաժինը, որոնք աջակցում են ուսանողների մասնագիտական գիտելիքների բարելավմանը և շրջանավարտների հետ կապի պահպանմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում առկա է ուսանողների հավաքագրման և ընդունելության ընթացակարգ, ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանզիմներ, ինչպես նաև ուսանողներին հնարավորություն է տրվում մասնակցել լրացուցիչ մասնագիտական դասընթացների և ստանալ համապատասխան խորհրդատվություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհն ընդհանուր առմամբ ապահովում է ուսանողների համար արդյունավետ կրթական միջավայր և համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՃՇՀԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Ըստ ինքնավերլուծության՝ ՃՇՀԱՀ-ի հավակնությունները ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով ապահովվածության ուղղությամբ բխում են ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ից և դրանցում ձևավորված ռազմավարական նպատակներից: Մասնավորապես, ՃՇՀԱՀ-ի 2021-2025թթ. ՌԾ-ով նախատեսված է ապահովել մեկ ուսանողին ընկնող ակադեմիական, վարչական և օժանդակ անձնակազմի թվի համապատասխանությունը միջազգային ընդունված ցուցանիշներին, ինչպես նաև ապահովել պրոֆեսորադասախոսական կազմում ներառված գիտական կոչում ունեցող և երիտասարդ (մինչև 35 տարեկան) դասախոսների թվի աճը:

ՃՇՀԱՀ-ում առկա է մրցութային ընթացակարգով ընտրովի պաշտոնների ընտրության կարգ: Պրոֆեսորադասախոսական կազմի համալրումը և դրա բոլոր ենթագործառույթներն

իրականացվում են ՊԴ կազմի ձևավորման համապատասխան կարգի, պաշտոնների անձնագրերի և դրանից բխող գործընթացների ու գործառույթների հիման վրա:

Համաձայն ինքնավերլուծության և ներկայացված փաստաթղթերի ՃՇՀԱՀ-ում աշխատող ՊԴ կազմի ներկայացուցիչների մեծամասնությունը երկարատև (10 և ավել տարվա) աշխատանքային փորձ ունեցող ճարտարապետության, շինարարության և այլ ոլորտների առաջատար մասնագետներ են:

ՄՈՒՀ-ում ՊԴ կազմի համալրման քաղաքականության արդյունավետությունն ապահովող գործընթացներից է՝ բարձր առաջադիմությամբ շրջանավարտների ներգրավումը դասավանդման գործընթացում: ՃՇՀԱՀ-ի ՊԴ կազմի ներկայացուցիչների մեծ մասը համալսարանի շրջանավարտներ են:

ՃՇՀԱՀ-ում ՈւՕ կազմի համալրման հստակ սահմանված կանոնակարգ չի գործել, սակայն սահմանված են նորմեր, որոնք ապահովում են ՈւՕ կազմի մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը:

ՄՈՒՀ-ում առկա է աշխատողների և այլ անձանց խրախուսման կանոնակարգ: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդ մասնագետների խրախուսմանը և ներգրավմանը գիտական և հետազոտական աշխատանքներում՝ համապատասխան խրախուսման համակարգերի կիրառմամբ:

Աշխատողների ներքին կարգապահական կանոններում սահմանվում են ոչ միայն աշխատանքային կարգապահական կանոնները, այլև աշխատանքի ընդունման, դրույքաչափերի սահմանման և մի շարք այլ գործառույթներ, որոնք առաջին հերթին վերաբերում են ոչ թե կարգապահական կանոններին, այլ կազմակերպական և այլ հարցերի:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Համաձայն ինքնավերլուծության և փորքագիտական խմբի այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումների հարց ու պատասխանների արդյունքների՝ ՄՈՒՀ-ում ՊԴ կազմի ընտրությունը կատարվում է սահմանված պաշտոնի անձնագրերի պահանջներին համապատասխան՝ ըստ հետևյալ տարակարգերի՝ դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր: Սակայն պաշտոնի անձնագրերում առանձնացված չեն յուրաքանչյուր կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական պահանջները: Յուրաքանչյուր դասընթացի գծով համապատասխան ամբիոնում առկա է ձևավորված պատկերացում դասավանդող մասնագետին ներկայացվող պահանջների վերաբերյալ: Ներկայացվող մասնագիտական կարողությունները գնահատվում են համապատասխան ամբիոններում՝ պարբերաբար իրականացվող դասալսումների միջոցով:

Ամբիոններում մասնագետների ընտրության իրականացման հիմնական չափանիշներից է ոլորտի աշխատող լինելու հանգամանքը, կարևորվում է մասնագետի ոլորտում գործնական հմտությունների տիրապետումը:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ՃՇՀԱՀ-ում ՊԴ կազմի մասնագիտական որակների գնահատումն իրականացվում է համապատասխան ստորաբաժանումների կողմից: ՄՈՒՀ-ում ուսանողների հարցումների և դասալսումների անցկացման արդյունքում վերհանված խնդիրները քննարկվում են ՊԴ-ի կազմի ներկայացուցիչների, ամբիոնների վարիչների, դեկանների հետ, ֆակուլտետների

գիտական խորհուրդների, ռեկտորատի, համալսարանի գիտական խորհրդի նիստերում: Քննարկումների արդյունքում մշակվում են ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական զարգացմանը միտված առաջարկություններ:

Դասալսումները թույլ են տալիս դիտարկել դասախոսների մասնագիտական գործունեությունը բուն ուսումնական գործընթացում: Դասալսումների մեխանիզմի կիրառմամբ գնահատվում են դասախոսի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպչական, «ուսանող-դասախոս» փոխհարաբերությունների ձևավորման և զարգացման ունակությունները, դասը կազմակերպելու և վարելու ժամանակակից մեթոդների կիրառումն ու դրանց արդյունավետությունը և այլն:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ՃՇՀԱՀ-ում առկա է ՊԴ-ի վերապատրաստման և որակի բարձրացման կրթագիտական ծրագրի կանոնակարգ: ՃՇՀԱՀ-ն ՊԴ կազմի կատարելագործման նպատակով կազմակերպում է տարբեր վերապատրաստումներ, ինչպես մասնագիտական, այնպես էլ մեթոդական հմտությունների զարգացման նպատակով:

Վերապատրաստման դասընթացների իրականացման կարիքները համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից վեր են հանվում ՊԴ կազմի շրջանում իրականացվող հարցումների միջոցով և մասնագիտական ամբիոնների կողմից ստացված առաջարկությունների հիման վրա:

ՃՇՀԱՀ-ում իրականացվում են նաև ներամբիոնային և միջամբիոնային վերապատրաստումներ՝ մասնագիտական սեմինարների տեսքով: Բուհից դուրս ընթացող վերապատրաստումներին դասախոսները մասնակցում են ինչպես ՃՇՀԱՀ-ի, այնպես էլ անձնական նախաձեռնությամբ: ՃՇՀԱՀ-ի ՊԴ կազմի վերապատրաստման գործընթացում նշանակալի տեղ են զբաղեցնում նաև դրամաշնորհային նախագծերի շրջանակներում կազմակերպվող վերապատրաստման դասընթացները: Փորձագիտական այցի ընթացքում հանդիպման մասնակիցների կողմից նշվեց նաև, որ որպես մասնագիտական վերապատրաստումներ դիտարկվում են նաև ՊԴ կազմի կողմից մասնակցությունները տարբեր ծրագրերին/նախագծերին, միջոցառումներին, սեմինարներին, աշխատաժողովներին և գիտաժողովներին, ցուցահանդեսներին և այլն: Դասավանդողները ակտիվ մասնակցություն են ունենում տարբեր գիտաժողովների և աշխատաժողովների, սեմինարների և դա ընդունում են որպես մասնագիտական վերապատրաստումներ, քանի որ ոլորտային նեղ մասնագիտական վերապատրաստումներն այլ կերպ խնդրահարույց են , ելնելով ոլորտի մասնագիտական առանձնահատկություններից:

Վերջին տարիներին վերապատրաստման տարբեր դասընթացներում ՄՈՒՀ-ից ներգրավվել են շուրջ 450 մասնակիցներ:

Հաշվի առնելով BIM տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը ինժեներական և ճարտարապետական կրթությունում՝ ՃՇՀԱՀ-ում շարունակաբար անցկացվում են համալիր միջոցառումներ, որոնց շարքում առանցքային դեր ունեն դասախոսների վերապատրաստումն ու կրթական ծրագրերի վերանայումը: Այդ նպատակով ՃՇՀԱՀ-ի նորարարությունների և ձեռներեցության աջակցման կենտրոնի ջանքերով կազմակերպվում են ՃՇՀԱՀ-ի դասախոսների վերապատրաստումներ «AUTODESK AutoCAD Civil 3D», REVIT STRUCTURE,

REVIT ARCHITECTURE ծրագրային փաթեթների ուղղությամբ: Այս մասին նշվում է ինչպես ինքնավերլուծության մեջ, այնպես էլ փաստվում է ՊԴ կազմի ներկայացուցիչների կողմից:

Վերապատրաստումները նաև արվում են արտաքին պահանջից ելնելով, հաշվի առնելով բուհի միջազգայնացման խնդիրները, վերապատրաստումներ են իրականացվում օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման նպատակով: Համագործակցային տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացվում են նաև վերապատրաստումներ միջազգային այլ գործընկերների կողմից՝ ինչպես առցանց, այնպես էլ հրավիրյալ դասախոսների կամ վերապատրաստվողների գործուղման ճանապարհներով: Միջազգային համակագործակցության վերապատրաստման ծրագրերը հնարավորություն են տալիս նաև ՄՈՒՀ-ի ՊԴ կազմի ներկայացուցիչներին երկրորդ մասնագիտություն ձեռք բերելու և վերապատրաստվելու: Առանձին վերապատրաստումներ հնարավորություն են տալիս դասավանդողներին փոփոխություններ իրականացնելու իրենց դասընթացների ծրագրերում, երբեմն էլ ողջ կրթական ծրագրերում նոր դասընթացների ներառմամբ:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ՃՇՀԱՀ-ն ՊԴ կազմի կայունության ապահովման համար ներգրավում է իր շրջանավարտներին: Բուհում գործում է գիտությամբ զբաղվող և միևնույն ժամանակ դասավանդող երիտասարդ կադրերի խրախուսման մեխանիզմ (Գիտական խորհրդի որոշում երիտասարդ մասնագետների լրավճարի մասին):

Համաձայն ուսումնասիրված նյութերի, վերջին տարիների ընթացքում ՊԴ կազմի հիմնական աշխատողների միջին տարիքային շեմը բարձրանում է: Երիտասարդ աշխատողները հիմնականում ներգրավվում են համատեղության սկզբունքով: Արդյունքում ՄՈՒՀ-ում տարիների ընթացքում հիմնական աշխատողների ընդհանուր թիվը նվազել է և նույն ժամանակահատվածում աճել է համատեղության հիմունքով աշխատողների թիվը: Համաձայն ինքնավերլուծության, այս միտումը պայմանավորված է համալսարանի ՊԴ-ի կազմն արդիական կարողություններ ունեցող նեղ մասնագիտությամբ վաստակաշատ, ճանաչված մասնագետների որպես դասախոսների ներգրավման ձգտումով:

ՄՈՒՀ-ում գործում է երիտասարդ մասնագետների ներգրավման և ապագա մասնագետների պատրաստման համար արվեստանոցային մոտեցումը:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՃՇՀԱՀ-ում մշակված է ՊԴ կազմի տարակարգերի պաշտոններին հավակնող թեկնածուներին ներկայացվող պահանջներ: Սկսնակ դասախոսների աջակցման և ուղորդման հարցում յուրաքանչյուր ամբիոն ունի դասախոսների մենթորության իր մոտեցումները (ինչպես արդեն նշվեց նախորդ չափորոշիչներում՝ դրանք հիմնականում արվեստանոցային մոտցեումներն են): ՃՇՀԱՀ-ում առկա են գիտությամբ զբաղվելուն միտված խրախուսման գործուն մեխանիզմներ, մասնավորապես ՃՇՀԱՀ-ում դասավանդող երիտասարդ գիտությունների թեկնածուներին և դոկտորներին, ինչպես նաև միջազգային պարբերականներում հրապարակած հոդվածների դեպքում հատկացվում են լրավճարներ: Գործում է ՃՇՀԱՀ-ի աշխատողներին և այլ անձանց խրախուսման կանոնակարգ:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Համաձայն ինքնավերլուծության և փորձագիտական այցի ընթացքում համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ հանդիպման արդյունքների, ՃՇՀԱՀ-ի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեությունը միտված է ՄՈՒՀ-ում իրականացվող կրթական գործընթացի պլանավորման, վերահսկողության և արդյունավետության ապահովմանը: Վերջին տարիներին ՃՇՀԱՀ-ում տեղի են ունեցել համակարգային բարեփոխումներ, որոնք միտված են եղել վարչական կառուցվածքի օպտիմալացմանը, ստորաբաժանումների միջև գործառույթների արդյունավետ բաշխմանը և յուրաքանչյուր վարչական ստորաբաժանման գործառույթների հստակեցմանը: Պայմանավորված կառուցվածքային փոփոխություններով՝ ՃՇՀԱՀ-ն ապահովում է վարչական և ՈւՕ կազմերի անհրաժեշտ քանակական ցուցանիշները: ՈւՕ կազմի ձևավորման գործում հաշվի է առնվում յուրաքանչյուր ամբիոնի ուսանողների, դասախոսների թվաքանակը, ուսումնական բեռնվածքի ժամաքանակը, ուսումնական կամ ուսումնագիտական լաբորատորիաների, արվեստանոցների առկայությունը: ՈւՕ կազմի թեկնածուների ընտրության ժամանակ ամբիոնի վարիչի կողմից հաշվի են առնվում նրանց մասնագիտական կարողությունների ու որակի համապատասխանությունը տվյալ ստորաբաժանման մասնագիտական ուղղվածությանը, նրանց աշխատանքային փորձառությունը և այլ չափանիշներ:

Դատողություններ: ՃՇՀԱՀ-ում կրթական ծրագրերն իրականացնելու և ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու համար առկա են անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, ինչպես նաև նրանց ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: Գործող ընթացակարգերում առկա բացերի լրացման ուղղությամբ ՄՈՒՀ-ում իրականացվում են անհրաժեշտ միջոցառումներ, որոնք կնպաստեն գործընթացի բարելավմանը:

Կրթական ծրագրերում ներգրավված են դասախոսներ (դասավանդողներ), որոնք գործնականում հանդիսանում են նաև ոլորտի ներկայացուցիչներ ու իրենց փորձը բերում են ՄՈՒՀ, ինչպես նաև ուսանողներին ներգրավում են պրակտիկ աշխատանքներում, ինչը դրական է ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորման տեսանկյունից:

ՄՈւՀ-ում մեծ ուշադրություն է դարձվում սերնդափոխությանը և երիտասարդ մասնագետներին ինչպես ուսումնակրթական, այնպես էլ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավմանը: Խրախուսվում է սեփական շրջանավարտներով կադրերի համալրման գործընթացը: Այս գործընթացները դրական ազդեցություն ունեն կայունության ապահովման տեսակետից:

Դասախոսի պաշտոնի անձնագրում սահմանված են ընդհանուր մասնագիտական գիտելիքների, հմտության և ունակությունների չափանիշներ, իսկ բուն մասնագիտական գիտելիքները և կարողությունները դիտարկվում/ստուգվում են ամբիոնների կողմից՝ հիմնականում հաշվի առնելով մասնագիտական աշխատանքային փորձը (ստաժը), գիտական և ստեղծագործական գործունեությունը:

Դրական է, որ բուհի ՈւՕ կազմը ներգրավված է նաև հետազոտական աշխատանքներում, նրանք հասկանում/տեղյակ են ոլորտի խնդիրներից, ինչը նպաստում է բուհի կողմից սահմանված նպատակների իրագործմանը:

ՄՈՒՀ-ը երիտասարդ մասնագետներին/դասախոսներին ներգրավվելու համար կիրառում է լրավճարների/հավելավճարների տրամադրումը և խրախուսումները, ինչը նպաստում է երիտասարդների՝ դասավանդման գործընթացում ներգրավմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ավագ սերնդի փորձառու դասախոսները աջակցում են նոր ընդունված երիտասարդ կադրերին, երիտասարդներին ներգրավվում են իրենց դասախոսություններին և գործնական պարապմունքներին և փորձի փոխանակումից հետո աստիճանաբար փոխանցում են դասընթացների վարման և գործնական պարապմունքներին անցկացման ժամերը:

ՄՈՒՀ-ում առկա է դասալսումների անցկացման ընթացակարգ, որում սահմանվում է նաև դասալսման ձևաչափը և դասախոսների գնահատման չափորոշիչները, որոնք հիմնականում վերաբերում են ընդհանուր կարողությունների գնահատմանը, դասավանդման մեթոդիկայի կիրառմանը, դասապրոցեսի կազմակերպմանը և անցկացմանը և շատ դեպքերում չեն անդրադառնում դասախոսի բուն մասնագիտական գիտելիքների գնահատմանը, հատկապես եթե այն վերաբերում է շատ նեղ մասնագիտական ուղղությունների: Նման դեպքերում հիմնական գնահատումներն իրականացվում են ամբիոնի վարիչների կողմից, որոնք տվյալ ուղղվածությամբ ունեն որոշակի մասնագիտական գիտելիքներ: ՄՈՒՀ-ում իրականացվում են նաև ուսանողների հարցումներ, սակայն թե դասալսումները և թե ուսանողների հարցումները չեն կրում հստակ պարբերական բնույթ, դրանք հիմնականում միտված են կոնկրետ խնդիրների և հարցադրումների վերհանմանը և ուսումնասիրմանը և իրականացվում են դեկանատների և վարչական տարբեր ստորաբաժանումների կողմից վերհանված խնդիրների և պահանջների հիման վրա:

Դասախոսների վերապատրաստման գործընթացը չունի որոշակի հստակ պարբերականություն, դասընթացները կազմակերպվում են ըստ անհրաժեշտության և պահի հրամայականից ելնելով: Երբեմն վերհանված կարիքները և վերապատրաստումները փոխկապակցված չեն:

Վերապատրաստված մասնակիցների ցանկում առկա տվյալներից կարելի է եզրակացնել, որ մեծ մասը վերապատրաստվել են տարբեր ծրագրերի շրջանակներում, հիմնականում կրթական ծրագրերի մշակման և վերջնարդյունքների ձևավորման թեմաներով՝ մեթոդական հմտությունների զարգացման նպատակով:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն իրականացնում է ՊԴ կազմի վերապատրաստման կարիքների գնահատում և դրանց հիման վրա վերապատրաստման դասընթացների կազմակերպում: Երբեմն հատկացնում է ֆինանսական միջոցներ դասախոսների արտերկրում՝ միջազգային գործընկերների մոտ վերապատրաստվելու համար, ինչը գովելի պրակտիկա է:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը կրթական ծրագրերի համապատասխան ՊԴ կամով ապահովվածության կայունության ապահովման նպատակով իրականացնում է որոշակի քաղաքականություն, իր շրջանավարտներին և ասպիրանտներին ընդունելով աշխատանքի, կիրառելով արվեստանոցային մոտեցումը, երիտասարդ կադրերի համար սահմանելով որոշակի ֆինանսական խրախուսման մեխանիզմներ, երիտասարդներին ներգրավվելով աշխատանքի համատեղության սկզբունքով: Այս աշխատանքները նպաստում են դասախոսական կազմի կայունությանը և բուհի ռազմավարական նպատակների իրագործմանը:

ՄՈՒՀ-ում առկա է ՊԴ կազմի տարակարգերի պաշտոններին հավակնող թեկնածուներին ներկայացվող սահմանվող պահանջներ, ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր՝ վերապատրաստումների, սեմինարների, գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության և խրախուսման միջոցների կիրառման տարբեր ձևերով, սակայն

գնահատված չէ, թե որքանով են առկա ընթացակարգերը և կանոնակարգերը նպաստում մասնագիտական առաջընթացի ապահովմանը և մոտիվացնում ՊԴ կազմին:
ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ, և եթե ՈւՕ կազմի մասով կարող ենք խոսել վերջիններիս թվաքանակի նորմավորման, ընտրության ընթացակարգերի և մասնագիտական կարողությունների գնահատման մասին, ապա վարչական անձնակազմի մասով կարելի է ասել, որ վերջին տարիների փոփոխությունների արդյունքում նկատելի է կառուցվածքային ստորաբաժանումների բարեփոխումները և նոր կառուցվածքի սահմանումը: Յուրաքանչյուր կառուցվածքային միավորման համար կոնկրետ նպատակների և գործառույցների սահմանումը բերել է նկատելի դրական միտումների, այդ թվում նաև կադրային որոշակի փոփոխությունների և նոր մոտեցումների ու հստակ գործառույթների իրականացման: Յուրաքանչյուր ստարաբաժանում ունի իր հստակ գործառույթները և կարող է պլանավորել իր աշխատանքները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում առկա են ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմ, առկա է ՊԴ և ՈւՕ կազմի ընտրության, ՊԴ կազմի գնահատման, մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և սահմանված են համապատասխան ընթացակարգեր, ՊԴ կազմով ապահովվածության կայունության մեխանիզմներ և իրականացվում են կարիքներին համապատասխան դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, որոնք բխում է են բուհի առաքելությունից, փորձագիտական խումբը գտնում է, որ ՃՇՀԱՀ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՃՇՀԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՃՇՀԱՀ 2015-2020թթ. ՌԾ-ում որպես հետազոտության հիմնական նպատակ է սահմանված ՃՇՀԱՀ-ի գիտական և ստեղծագործական ներուժի օգտագործումը հետազոտական, խորհրդատվական, նախագծային աշխատանքներում՝ միտված երկրի տնտեսական, մշակութային և սոցիալական խնդիրների լուծմանը, իսկ 2021-2025թթ. ՌԾ-ում որպես գիտության ոլորտի հավակնություններ են սահմանված միջազգայնորեն մրցունակ գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, նորարարական լուծումների առաջադրումը և հետազոտությունների արդյունքների առևտրայնացումը:

Հետազոտական ոլորտում ՃՇՀԱՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները արտացոլված են 2015-2020թթ. ՌԾ-ի 5-րդ նպատակում՝ «Համալսարանի գիտական և ստեղծագործական ներուժի օգտագործում հետազոտական, խորհրդատվական, նախագծային աշխատանքներում՝ միտված երկրի տնտեսական, մշակութային և սոցիալական խնդիրների լուծմանը»:

ՌԾ-ում հստակ նկարագրված են նպատակները, առկա են նախանշված խնդիրները, և գործողություններ, սակայն բացակայում է գործողությունների ժամանակացույցը: Գնահատման առաջընթացի ցուցիչները չափելի չեն, չեն պարունակում առաջընթացը գնահատելու համար անհրաժեշտ տվյալներ և առաջընթացի նախատեսվող արժեքներ: Սահմանված չեն իրականացման պատասխանատուներ և գնահատողներ:

Հաշվետու ժամանակահատվածում առկա է դինամիկա, մասնավորապես 2018-2020թթ. ՃՇՀԱՀ-ն արտերկրի գործընկեր բուհերի հետ կազմակերպել է 6 գիտաժողով, ՊԴ կազմի ներկայացուցիչները, գիտաշխատողները, ասպիրանտները և ուսանողները մասնակցել են ընդհանուր առմամբ 80 գիտաժողովի, որոնցից 51-ը՝ միջազգային, 29-ը՝ հանրապետական:

Հրապարակել են 610 գիտական հոդվածներ, որոնցից հայաստանյան պարբերականներում՝ 385-ը, օտարերկրյա պարբերականներում՝ 225-ը, որոնցից Scopus ցանկում ընդգրկված պարբերականներում՝ 87 (դրանցից 5-ը՝ ԱԳ ունեցող):

Նույն ժամանակահատվածում հրատարակվել են 13 գրքեր և մենագրություններ, 28 ուսումնամեթոդական ձեռնարկներ, գրանցվել է 8 օգտակար մոդել (գյուտ):

Ներկայացվել են 246 զեկույցներ գիտական միջոցառումներում, որոնցից 203-ը՝ միջազգային: Հայաստանյան կազմակերպությունների աշխատակիցների հետ համահեղինակությամբ իրականացվել են 17, օտարերկրյա կազմակերպությունների աշխատակիցների հետ՝ 33 հետազոտություններ:

ՃՇՀԱՀ-ն անդամակցում է 7 միջազգային գիտական ընկերությունների և կազմակերպությունների:

ՃՇՀԱՀ-ի գիտաշխատողները անդամակցում են միջազգային 19 գիտական ընկերությունների և կազմակերպությունների: Նրանք ներգրավված են նաև տարբեր գիտական պարբերականների խմբագրական խորհուրդներում (2018-2019թթ.՝ 78, որից 7-ը՝ օտարերկրյա, 2020թ.՝ 38, որից 7-ը՝ օտարերկրյա):

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ՃՇՀԱՀ երկարաժամկետ ռազմավարական ուղղությունները սահմանվում են 5-ամյա պարբերականությամբ մշակվող ՌԾ-ում, իսկ միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերն իրենց արտացոլումն են գտնում գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերում:

Միջնաժամկետ ծրագրերը մշակվում են 3 տարվա կտրվածքով և ֆինանսավորվում են Գիտության կոմիտեի կողմից: Մանավորապես, 2018-2020թթ. իրականացվել են 9 ծրագրեր, որոնցից 1-ը «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագրի» շրջանակներում, 1-ը երկակի նշանակության կիրառական հետզոտություն:

2021թ.-ից ՃՇՀԱՀ-ում տրամադրվում են ներքին կարճաժամկետ ամենամյա դրամաշնորհներ ուսանողների ներգրավմամբ՝ յուրաքանչյուր ծրագրի համար հատկացվում է 2 միլիոն դրամ: Իրականացվել է այդպիսի 4 ծրագիր:

Ռեսուրսների ուսումնասիրման ժամանակ լաբորատորիաներում, բացի ուսումնական գործընթացում նախատեսված փորձերից, մագիստրանտների և ասպիրանտների մասնակցությամբ իրականացվում էին գիտական հետազոտություններ:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Գիտահետազոտական աշխատանքներ կազմակերպվում են հստակ ընթացակարգերի և պատասխանատուների միջոցով՝ համակարգում է Գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի ղեկավարությամբ՝ գիտատեխնիկական խորհուրդը, Գիտական քաղաքականության վարչությունը: Նշված Բոլոր բաժինները ունեն համապատասխան հաստատված կանոնակարգեր:

Հարկ է նշել, որ «Web of Science» և «Scopus» գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում համալսարանի աշխատողների հրատարակումը խթանելու նպատակով սահմանվել են նշված պարբերականներում տպագրված յուրաքանչյուր հոդվածի համար համալսարանի միջոցներից խրախուսման վճարներ՝ 30-200 հազար դրամի չափով, կախված պարբերականի ԱԳ-ից: Բացի այդ, գիտահետազոտական աշխատանքների խթանմանն է միտված 2021թ.-ից ներդրված ներքին դրամաշնորհների տրամադրումը:

Գիտական պարբերականներում զգալի տեղ են զբաղեցնում երիտասարդների հետազոտությունները: Մասնավորապես, «Գիտական աշխատությունների ժողովածուի» 2021թ. 1-ին համարում հրապարակված 15 հոդվածներից 8-ի հեղինակները ուսանողներ են (5-ը՝ առանց համահեղինակների), 3-ը՝ ասպիրանտներ կամ հայցորդներ: Ուսանողների կողմից տպագրված հոդվածներից 4-ը ունեն ճարտարապետական ուղղվածություն, 3-ը՝ շինարարական և 1-ը՝ տրանսպորտ:

Երիտասարդ գիտաշխատողներն ակտիվ ներգրավվածություն ունեն նաև բազային ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտություններում:

ՃՇՀԱՀ-ում ընթացիկ տարում առաջին անգամ իրականացվելու է գիտաշխատողների որակավորում (ատեստավորում)՝ զբաղեցրած պաշտոններում նրանց համապատասխանությունը գնահատելու նպատակով:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՃՇՀԱՀ-ն արտերկրի 9 գործընկեր բուհերի հետ հանդիսանում է «Ճարտարապետության և շինարարության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովների կազմակերպիչ: Նախորդ 5 տարիներին գիտաժողովներն անցկացվել են՝ 2016թ.- ՃՇՀԱՀ-ում, 2017թ.-Բաթումիում, 2018թ.-Պեկինում, 2019թ.-ՃՇՀԱՀ-ում, 2020թ.-Սանկտ-Պետերբուրգում:

2018թ.-ին ՃՇՀԱՀ-ի աշխատակիցները օտարերկրյա կազմակերպությունների աշխատակիցների հետ համահեղինակությամբ իրականացրել են 14 հետազոտություն, 2019-2020թթ.՝ տասական հետազոտություն:

2021թ.-ից գործընկեր բուհերի հետ համատեղ հրատարակվել են անգլերեն պարբերականներ, որոնցում ներառվել են տեխնիկական գիտությունների և ճարտարապետության ուղղությունները Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արդեն 1-ը հրատարակվել է:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ՃՇՀԱՀ-ում որպես հետազոտությունների և ուսումնական գործընթացների միջև գործող մեխանիզմ համարվում է մագիստրոսական թեզերում զգալի տեղ զբաղեցնող հետոզոտական բաղադրիչը և ուսանողների կողմից իրականացվող անհատական աշխատանքները, որը նույնպես պարունակում է հետազոտական բաղադիրչ և գնհատավում է դասախոսի կողմից:

ՃՇՀԱՀ-ի գիտամանկավարժական ներուժի կողմից իրականացված առանձին հետազոտություններ իրենց արտացոլումն են գտնում տարբեր առարկայական ծրագրերում, մասնավորապես ճարտարապետություն մասնագիտությունում՝ 4 դասընթացում,

շինարարություն՝ 3: Դասընթացների շարքում են. Շինարարական կոնստրուկցիաների հաշվարկի և կոնստրուկտավորման մեթոդներ, Հուշարձան շենքերի և կառույցների վերականգնման և վերակառուցման հիմունքներ, Նախալարված ե/բ կոնստրուկցիաների հաշվարկ և այլն:

Հարկ է նշել, նաև, որ դասախոսների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում տպագրվում են ուսումնական ձեռնարկներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՃՇՀԱՀ-ի կողմից վերջին տարիներին իրականացված աշխատանքները հետազոտության և գիտական գործունեության զարգացման ուղղությամբ: Դրական է, որ հետազոտական ոլորտում ՃՇՀԱՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները արտացոլված են ՌԾ-ում, որտեղ հստակ նկարագրված են ոլորտի նպատակները, խնդիրները և գործողություններ, որը նպաստում է ոլորտի համապարփակ զարգացմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ հետազոտության և գիտական գործունեության զարգացմանը կնպաստի հստակ ու չափելի ցուցիչների սահմանումը, դրանց հիման վրա պլանավորման իրականացումը:

Գովելի է, որ ուսանողները և դասախոսները ակտիվ ներգրավված են հետազոտական աշխատանքներում, տպագրում են համատեղ հոդվածներ, առկա են խրախուսման մեխանիիզմներ բուհի կողմից, որը նպաստում է դասախոսների և ուսանողների մոտ մոտիվացիայի բարձրացմանը և ուսանողների մոտ հետազոտական հմտությունների զարգացմանը: Դրական է նաև այն, որ հետազոտությունների արդյունքները հասանելի են և ներքին, և արտաքին շահակիցներին:

Փորձագիտական խումբը նշում, է, որ հետազոտության արդյունքները ճանաչվում են միջազգային մակարդակով, որի վկայությունն է մեծաքանակ հրապարակումները ազդեցության գործակից ունեցող պարբերականներում: Թեև, համալսարանը ակտիվ է միջազգային համագործակցության զարգացման գործում, այնուամենայնիվ, համագործակցության արդյունքները դեռևս հասանելի չեն համաշխարհային հետազոտական հանրությանը, հղման ցուցիչները քիչ են:

Դրական է, որ հետազոտությունների արդյունքները հանդիսանում են նաև որպես եկամտի աղբյուր, որի շնորհիվ առկա են հագեցված գիտական լաբորատորիաներ, համակարգչային տեխնիկա:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհի բյուջեով նախատեսվում է ֆինանսական աջակցություն հետազոտությունների համար, որը նախատեսված է ռազմավարական պլանով, գործում է միջազգային և տեղական համագործակցություն արտադրության և գիտակրթական հասարակության հետ, ինչն էլ նպաստում է հետազոտության միջազգայնացմանը:

Մագիստրոսական և ասպիրանտուրայի թեզերի թեմաները կապված են դասախոսների կատարած հետազոտության հետ: Առկա է գիտահետազոտական աշխատանքների բաշխվածություն՝ ըստ համալսարանի հետազոտական ուղղությունների և ֆակուլտետների, որը բերում է ՌԾ-ով սահմանված նպատակների իրագործմանը:

Փորձագիտական խումբը նշում է նաև, որ չնայած որոշ հետազոտություններ իրենց արտացոլումն են գտել տարբեր առարկայական ծրագրերում, այնուամենայնիվ դեռևս թույլ է կապը գիտության և ուսումնական գործընթացների միջև, քանի որ գիտահետազոտական աշխատանքների արդյունքները ոչ լիարժեք ձևով են ներդրվում ուսումնական գործընթացում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ 2015-2020թթ. և 2021-2025թթ. ռազմավարական ծրագրերի հետազոտական ոլորտի նպատակները բխում են առաքելությունից և ընդհանուր առմամբ արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, առկա են հետազոտական և գիտական գործունեություն ծավավելու համար խրախուսման մեխանիմզներ, դասախոսներն ու ուսանողները ներգրավված են հետազոտական աշխատանքներում, առկա են հետազոտության միջազգայնացման տարրեր, ինչպես նաև դասախոսների կատարած հետազոտությունների և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՃՇՀԱՀ-ն բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: ՃՇՀԱՀ -ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՃՇՀԱՀ-ի կրթական միջավայրը ներառում է շենքային տարածքներ՝ լսարաններ, առարկայական կաբինետներ, համակարգչային սենյակներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ, արվեստանոցներ, ստուդիաներ, գրադարան-ընթերցասրահ, մարզադահլիճ, բուժկետ, ինչպես նաև հյուրանոց-հանրակացարանային, սննդի ապահովման, անվտանգության պահպանման, հանգստի կազմակերպման ծառայություններ: Ելնելով յուրաքանչյուր ՄԿԾ-ների և գիտահետազոտական աշխատքնեների ռեսուրսային անհրաժեշտությունից ՃՇՀԱՀ-ն հնարավորինս հագեցված է և պարբերաբար համալրվում է ժամանակակից համակարգչային տեխնիկայով և փորձասարքերով: Բոլոր համակարգիչներն ունեն հասանելիություն ինտերնետ կապին, դասընթացների արդյունավետ կազմակերպման համար ապահովվված են տեխնիկական սպասարկմամբ: Ելնելով ՄԿԾ-ների առանձնահատկություններից անհրաժեշտ գույքով կահավորված են համապատասխան կառուցվածքային միավորները, լաբորատորիաները հագեցած են նաև արդիական փորձասարքերով և լաբորատոր աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ գրականությամբ, այդ թվում նաև հայալեզու ուսումնամեթոդական ուղեցույցներով՝ բուհի աշխատակիցների հեղինակությամբ:

Բուհի կողմից իրականացված համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ ՃՇՀԱՀ-ի ռեսուրսային բազան 2016թ-ի համեմատ զգալիորեն բարելավվել է: ՄԿԾ-ների իրականացման նպատակով անհրաժեշտ միջավայրի հարմարավետությունը ապահովելու համար 2016-2021թթ. հիմնովին վերանորոգվել և կահավորվել են 35 ընդհանուր օգտագործման լսարաններ և աշխատասենյակներ, 15 համակարգչային լսարաններ, բացվել են ժամանակակից լաբորատոր սարքավորումներով և տեխնիկայով հագեցված թվով 5 լաբորատորիաներ, իսկ նախկին 10 լաբորատարիանները վերազիննվել են նոր ժամանակակից սարքավորումներով, տեխնիկայով և գույքով: 2016-2021թթ. ձեռք է բերվել 657 միավոր (մոտ 140 մլն. ՀՀ դրամ) համակարգչային տեխնիկա և սարքավորումներ և 487 միավոր

(մոտ 410 մլն. ՀՀ դրամ) լաբորատոր սարքավորումներ, գույք և տեխնիկա: Պրակտիկաների և արտահամալսարանական պարապմունքների կազմակերպման նպատակով ձեռք է բերվել նոր 30 տեղանոց Toyota Coaster 4.2D ավտոբուս: Համալսարանի բակում կառուցվել է մոտ 60 տեղանոց ճաշարան, ձեռք բերման փուլում է գտնվում մեծածավալ 3D տպիչը, և ռեսուրսների համալրման և հագեցման գործընթացը ՄՈՒՀ-ում կրում է շարունակական բնույթ:

Չնայած բուհի կողմից նշվող առանձին գրադարանային պայմանների սղության և վերջինիս անհրաժեշտությանը, փորձագիտական այցի ընթացքում նկատելի էր, որ ամբիոնները և լաբորատորիաները հագեցված են և ապահովված են համապատասխան անհրաժեշտ գրականությամբ:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ՄՈՒՀ-ն իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար հատկացնում է ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ սարքավորումներով և ռեսուրսներով ապահովելու համար, թե ուսումնակրթական գործընթացին և թե գիտահետազոտական ու նախագծային աշխատանքներին, այդ թվում մատուցվող ծառայություններին, որոնք իրականացվում են բուհի կողմից: Ինքնավերլուծությունից պարզ է դառնում, որ ռեսուրսների համալրման և գույքի ու սարքավորումների ձեռքբերման/համակրման գործընթացներում դրամաշնորհային և միջազգային ծրագրերը:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Համաձայն ինքնավերլուծության և փորձագիտական այցի ընթացքում արված դիտարկումների, ՃՇՀԱՀ-ում ֆինանսական գործունեության կառավարումն իրականացվում է համալսարանի ռեկտորի կողմից, իսկ հսկումն իրականացվում է ՃՇՀԱՀ-ի ֆինանսատնտեսական վարչության և գլխավոր հաշվապահի կողմից: ՃՇՀԱՀ-ն ունի մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար ֆինանսական ռեսուրսների բաշխման համակարգ, յուրաքանչյուր ֆակուլտետին հատկացվում են ռեսուրսների որոշակի քանակություն:

Համաձայն ինքնավերլուծության, ծախսերի պլանավորման ժամանակ հաշվի է առնվում ՃՇՀԱՀ ստորաբաժանումների կողմից իրենց կարիքների համար ներկայացվող հայտերը. «ՃՇՀԱՀ-ի ստորաբաժանումները ակտիվորեն մասնակցում են բյուջեի ձևավորման գործում: Վարչական ստորաբաժանումները իրենց գործառույթների իրականացման համար, իսկ ամբիոնները և դեկանատները՝ ՄԿԾ-ները/դասընթացները կազմակերպելու համար անհրաժեշտ ռեսուրսների (լաբորատոր սարքավորումներ, համակարգչային տեխնիկա, գրականություն և այլն) հայտերը հատուկ մշակված ձևաչափով ներկայացնում են ՃՇՀԱՀ-ի ֆինանսատնտեսական վարչություն (Հավելվածներ 7.4.1)»: Սակայն ներկայացված փաստաթղթերում՝ ստորաբաժանումների կողմից ներկայացվող հայտերում միայն գրականության ցանկ է ներառված: Այդ ձևաչափերը տարբեր են և վերնագրերում նշվում է միայն ստորաբաժանման անվանումը (չի նշվում ինչ նպատակ ունի այդ ցուցակը՝ տեղեկատվական, ներքին օգտագործման, ձեռքբերման, ուսումնական գործընթացի թե այլ): Բուհում այդ հայտերի ներկայացման հստակ ընթացակարգ առկա չէ, և դա արվում է հիմնականում գործավարական և առանձին հրահանգների հիման վրա, առկա չէ նաև

ստորաբաժանումների կողմից անհրաժեշտ կարիքների դուրս բերման համար սահմանված մեխանիզմներ: Բուհում բացակայում է նաև գնման նպատակով տարբեր ստորաբաժանումների կողմից ներկայացված հայտերում ներառված ռեսուրսների ձեռքբերման առաջնահերթությունների որոշման հատուկ սահմանված մեխանիզմներ:

Ֆինանսական բյուջեի կատարողականի արդյունավետությունն արտացոլվում է ռեկտորի տարեկան հաշվետվության ձևով, որը քննարկվում և հաստատվում է հոգաբարձուների խորհրդի կողմից:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Ինչպես արդեն նշվեց, ՃՇՀԱՀ-ն ՄԿԾ-ների շարունակական բարելավման և ռազմավարական պլանի իրականացման համար իր բյուջեում նախատեսում է համապատասխան ֆինանսական միջոցներ, այդ թվում՝ առանձին միջոցներ են հատկացվում հիմնական միջոցների վերանորոգման, սպասարկման, կապիտալ և ընթացիկ վերանորոգման, գույքի, սարքավորումների, տրանսպորտային միջոցների ձեռք բերման համար: Բացի ՃՇՀԱՀ-ի հիմնական միջոցներից, ՃՇՀԱՀ-ի ռեսուրսային բազան շարունակաբար համալրվում է հատկապես տարբեր դրամաշնորհային ծրագրերի միջոցների հաշվին, ինչի շնորհիվ ներկայումս ՃՇՀԱՀ-ի լսարանները և լաբորատորիաները հագեցած են ժամանակակից փորձասարքերով, արդիական համակարգչային տեխնիկայով և ծրագրերով:

Առանձին տարիներին անցկացված ուսանողների հարցումները ցույց են տվել /հատկապես ավարտական կուրսերը/, որ ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում ՄԿԾ-երի և ռազմավարական պլանի իրականացման համար, նրանք գոհ են լսարանային պայմաններից, սարքավորումներից, լաբորատորիաներից: Դա ակնհայտ էր նաև փորձագիտական այցի ընթացքում ֆոկուս-խմբային հանդիպումների ընացքում արված հացուպատասխաններից և ռեսուրսների դիտարկումից: ՃՇՀԱՀ-ում գործում է նաև Moodle էլեկտրոնային ուսուցման կառավարման հարթակը, որի կիրառմամբ իրականացվում է մի շարք դասընթացներ՝ հեռավար և ավանդական ուսուցման համադրմամբ: Բուհն ակտիվորեն օգտագործում է նաև գործընկերների հնարավորությունները և կրթական ծրագրերի իրականացման համար օգտվում է նրանց մոտ առկա ռեսուրսներից՝ լսարանային պայմաններ և լաբորատորիաներ, ինչպիսին էր օրինակ Կադաստրի կոմիտեի ուսուցման կենտրոնը, որտեղ կազմակերպվում են գեոդեզիա և կադաստր կրթական ծրագրերի բարձր կուրսերի դասընթացների կազմակերպումը:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ՃՇՀԱՀ-ում փաստաթղթավորման գործընթացն հիմնականում իրականացվում է Ընդհանուր բաժնի կողմից, որն իրականացնում է փաստաթղթերի գրանցումը, ընդունումը (հաշվառումը) և համապատասխան ստորաբաժանումներին փոխանցման (էլեկտրոնային տարբերակներով) ապահովումը և այլ գործառույթներ, որոնք ամրագրված են Ընդհանուր բաժնի կանոնադրությամբ (ՃՇՀԱՀ-ի գործավարության մասնի կարգ (հավելված 7.5.1)): Ելից և մտից թղթակցությունների ձևակերպումը, ներքին գործավարության կազմակերպումը աստիճանաբար փոխանցվում և իրականացվում է բուհում վերջին տարիներին ներդրված էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգի միջոցով (գործում է 2021 թվականի սեպտեմբեր ամսից): Mulberry համակարգով իրականացվում է ներքին

փաստաթղթաշարժը, սակայն վերջինիս ոչ ամբողջական ներդրման հանգամանքով պայմանավորված ՃՇՀԱՀ-ում գործում է նաև միջստորաբաժանումային կապի ապահովման՝ փաստաթղթաշրջանառության ներքին ցանց, ակտիվորեն օգտագործելով նաև ՃՇՀԱՀ-ի կողմից բացված էլեկտրոնային փոստի հասցեները: Փաստաթղթերի ստացումը և հանձնումը ՃՇՀԱՀ-ի ստորաբաժանումներին դեռևս ամբողջական էլեկտրոնային համակարգին անցում չի կատարել և իրականացվում է ինչպես էլեկտրոնային համակարգի միջոցով, այնպես էլ առձեռն՝ ստորաբաժանումների համապատասխան աշխատողների կողմից հատուկ մատյաններում ստորագրությամբ:

ՃՇՀԱՀ-ում առկա է նաև արխիվ, որի գործունեությունը նույնպես կանոնակարգված է, մեկնարկել է արխիվային փաստաթղթերի թվայնացման գործընացը:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակներից ու խնդիրներինց է անհրաժեշտ միջավայրի ստեղծումն ու ապահովումը: ՃՇՀԱՀ-ի կողմից կարևորվում է ներքին շահակիցների առողջության ու անվտանգության պահմանմանն ուղղված միջոցառումները, ՃՇՀԱՀ-ն այդ ծառայությունների իրականացման համար հատկացնում է համապատասխան ֆինանսական, նյութական ու մարդկային ռեսուրսներ:

ՃՇՀԱՀ-ի կրթական միջավայրը ապահովված է առողջապահական, անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններով: ՃՇՀԱՀ-ի անվտանգության համակարգը ներառում է հակահրդեհային ազդանշանային համակարգը, մասնաշենքների արտաքին տեսահսկումն ու պահակակետը: ՃՇՀԱՀ-ում առողջության պահպանմանն ուղղված ծառայություններն իրականացվում են հատուկ կառուցվածքային միավորի՝ բուժկետի կողմից, որն հատկապես վերազինվել է վերջին տարիներին՝ պայմանավորված նաև համավարակով և հակահամաճարակային նորմերի պահպանումն ապահովող պայմաններից: Բուժկետը համալրված է ավագ բժշկի, բժշկի և բուժքրոջ հաստիքներով:

Առողջության և անվտանգության ծառայությունների արդյունավետության գնահատման նպատակով բուհում պլանավորված է աշխատակազմի և ուսանողների շրջանում հարցումների անցկացումը, որոնց արդյունքում վերհանված խնդիրների հիման վրա կմշակվի համապատասխան գործողությունների պլան:

Ընթացքի մեջ են ՃՇՀԱՀ-ի գլխավոր մասնաշենքում գտնվող ճաշարանի վերանորոգման և բարեկարգման աշխատանքները:

Չնայած այս ամենին և ստորաբաժանումների (ֆակուլտետների) կողմից իրականացվող աշխատանքներին, բուհում այնուամենայնիվ առկա են հատուկ կարիք ունեցող ուսանողների և աշխատակիցներին անհրաժեշտ ապահով և անվտանգ միջավայով ապահովման խնդիրներ, որին առաջին հերթին հենց խոչընդոտում են հավանաբար շենքային պայմանները (հենաշարժական խնդիրներով ուսանողների համար հատուկ հարմարությունները բացակայում են): Այդ խնդիրներն հիմնականում պայմանավորված են հատուկ կարիքներ ունեցողների և վերջիններիս կարիքների դուրս բերման հստակ քաղաքականության և ընթացակարգերի բացակայությամբ:

Փորձագիտական այցի ընթացքում ռեսուրսների դիտարկումը ցույց տվեցին, որ բուհում մեծ ուշադրություն է դարձվում լաբորատորիաներում աշխատանքային գործունեության

անվտանգության կանոնների և տեխնիկական միջոցների, անվտանգ գործունեության պահանջների պահպանմանը:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ՃՇՀԱՀ-ի կողմից իրականացվում են ներքին ու արտաքին շահակիցների կարծիքների հավաքագրում՝ բուհի կողմից մատուցվող ծառայությունների, տրամադրվող ռեսուրսների հասանելիության և արդյունավետության գնահատման նպատակով: Կարծիքների հավաքագրման համար ՃՇՀԱՀ-ում տարածված մեխանիզմ է հարցումը: Սակայն բուհում հարցումները և կարծիքների հավաքագրման գործընթացները չեն կրում կանոնակարգված և պարբերաբար իրականացման բնույթ: Արդյունավետության գնահատման մեխանիզմները բուհում կանոնակարգված և պարբերական չեն, երբեմն առկա տեղեկությունները հնացած են: ՄԿԾ-ների իրականացման համար ռեսուրսային բազայի օգտագործման արդյունավետությունը գնահատելու գործիքներից են ներքին շահակիցների (ուսանողների, ՊԴ կազմի) շրջանում անցկացվող հարցումները, որոնք սակայն, ինչպես արդեն նշել են, չունեն պարբերական բնույթ և կանոնակարգված չեն: Օրինակ, կրթության որակի ապահովման կենտրոնի կողմից 2016թ.-ին անցկացված հարցման արդյունքում բացահայտվել է, որ ուսանողների 66.44%-ը և դասախոսների 82.82%-ը բավարարված են ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային համալրվածությունից, սակայն 2016թ-ից հետո հարցումներ չեն կատարվել, և հաշվի առնելով իրավիճակի արագ փոփոխությունը դժվար է ասել նույնիսկ տեղի ունեցած բարելավումների արդյունքում բավարարվածների թիվը աճել է, թե նվազել:

Դատողություններ: ՃՇՀԱՀ-ի մշտական ուշադրության կենտրոնում են գտնվում ենթակառուցվածքների, շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավմանն ուղղված միջոցառումները: Մասնավորապես ՃՇՀԱՀ-ի գործունեությունը ռեսուրսների ապահովման ոլորտում միտված է ենթակառուցվածքների և կառուցվածքային ստորաբաժանումների զարգացմանը, ուսանողների և ՊԴ կազմի համար լսարանային և լաբորատոր պայմանների բարելավմանը, նյութատեխնիկական բազայի զարգացմանը:

Կրթական միջավայրի հարմարավետությունը ապահովելու նպատակով վերջին 3 տարվա ընթացքում հիմնովին վերանորոգվել և ժամանակակից տեխնիկայով հագեցվել են համալսարանի լսարանները, կենտրոնները, իսկ լաբորատորիաները համալրվել են արդիական փորձասարքերով, ինչը կնպաստի ՄԿԾ-ներով սահմանված նպատակների իրականացմանը:

Բուհում մեծ ուշադրություն է դարձվում ռեսուրսների համալրման և հագեցման գործընթացին, որը կրում է շարունակական բնույթ, կազմում է ՌԾ-ի և բյուջեի բաղկացուցիչ մաս, սակայն այն առաջնահերթ իրականացվում է գիտահետազոտական և դրամաշնորհային ծրագրերի հաշվին, դրանց համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման նպատակներով, ինչը նաև օգտագործվում է ՄԿԾ-ների ռեսուրսային ապահովման համար: Փորձագիտական այցի ընթացքում ռեսուրսների դիտարկման ժամանակ փորձագիտական խումբը նկատեց, որ ուսումնառության կազմակերպման գործնական և լաբորատոր աշխատանքների համար անհրաժեշտ միջավայրն առկա է: Փորձագիտական խումբը նկատեց նաև, որ վերջին տարիներին բուհն իր միջոցներից է նաև գումարներ տրամադրում լաբորատորիաների պահպանման և զարգացման նպատակով, որոնց համար

ֆինանսավորումը մինչ այդ ստացվում էր պետական ծրագրերի բազային ֆինանսավորումների ճանապարհով:

Չնայած անհրաժեշտ ռեսուրսներով բավարարվածության որոշակի աստիճանին, այնուամենայնիվ բուհում առկա է տարածքների սղության և ուսումնակրթական գործընթացի պատշաճ կազմակերպման համար վերջիններիս ոչ ամբողջական բավարարման խնդիր: Մի շարրք դեպքերում կիրառվում են գործընկերների, օրինակ, կադաստրի կոմիտեի ռեսուրսները: Բուհում տարածքների և ռեսուրսների բավարարավածության ուղղությամբ իրականացվել են համապատասխան ուսումնասիրություն, որի արդյունքում առաջարկվել է տարածքի ավելացման անհրաժեշտությունը, գրադարանային միջավայրի բարելավումը և այլն:

Բուհում առկա է նաև հատուկ կարիք ունեցող ուսանողների և աշխատակիցների համար բարենպաստ միջավայրի ստեղծմանն ուղղված աշխատանքներին ուշադրության կենտրոնում պահելու և այդ ուղղությամբ աշխատանքների կատարման հանգամանքը:
Անհրաժեշտ ռեսուրսների ձեռբեման համար կարիքների վերհանման հիմնական մեխանիզմը բուհում կարելի է դիտարկել միայն ստորաբաժանումների կողմից հայտերի ներկայացման գործընթացը, որը դեռևս կարիք ունի կանոնակարգման և հստակ ըթնցակարգերի սահմանման: Ֆինանսական միջոցների բաշխման արդյունավետության գործում կարող է էլ առավել արդյունավետ լինել յուրաքանչյուր ստարաբաժանման համար որոշակի ֆինանսական միջոցների հատկացումը, և յուրաքանչյուր ստորաբաժանում ունենալով սեփական բյուջետային միջոցները, դրանք կարող են բաշխել ըստ իրենց անհրաժեշտությունների առաջնահերթության:

ՄՈՒՀ-ում տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների կառավարման ընթացակարգերը և գործիքակազմերն առկա են և տարվում են համապատասխան աշխատանքներ վերջիններիս բարելավման ուղղությամբ:

Դրական է, որ բուհում առկա են ապահով և անվատանգ միջավայրի ապահովմանն նպատակուղղվածություն, այդ ուղղությամբ հատկացվում են որոշակի ֆինանասական միջոցներ, սակայն դեռևս առկա են նաև խնդիրներ, որոնք հիմնականում պահմանավորված են հատուկ կարիք ունեցող ներքին շահակիցների համար անհրաժեշտ պայմանների ապահովմամբ:

Բուհում տրամադրվող ռեսուրսների կիրառելության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները հստակ չեն և հիմնականում բացակայում են: Որպես արդյունավետության գնահատման մեխանիզմ հիմնականում դիտարկվում է հարցումները, որոնք սակայն կանոնակարգված չեն և չեն կրում պարբերական բնույթ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում առկա են ուսումնական միջավայրի ստաղծմանն ու սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, անհրաժեշտ ուսումնական միջավայրի ստեղծման և ապահովման համար հատկացվում են ֆինանսական ռեսուրսներ և հարցը գտնվում է բուհի ղեկավարության և ստորաբաժանումների ուշադրության կենտրոնում, ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականություն ապահովելու համար հատկացվում են ֆինանսական միջոցներ, ուշադրություն է դարձվում ապահով և անվատանգ միջավայրի ստեղծմանը և վերջինիս բարելավման համար առկա է պատրաստակամություն և վերջիններիս անհրաժեշտության գիտակցում, փորձագիտական խումբը գտնում է, որ ՃՇՀԱՀ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: ՃՇՀԱՀ -ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՃՇՀԱՀ-ի հաշվետվողականության կառուցակարգերը սահմանված են ՃՇՀԱՀ-ի կանոնադրությամբ:

ՃՇՀԱՀ գործունեության հիմնական և համապարփակ փաստաթուղթը ռեկտորի տարեկան հաշվետվությունն է, որն արտացոլում է ՃՇՀԱՀ-ի բոլոր ուղղություններով իրականացված աշխատանքների և գործունեության արդյունքները: Մինչև 2021 թվականը ռեկտորի հաշվետվությունը ձևավորվում է ազատ ոճով իր մեջ ներառելով համալսարանի գործունեության վերաբերյալ տարբեր տեղեկություններ, սակայն նախատեսվում է 2022 թվականին ռեկտորի հաշվետվությունը ձևակերպել համալսարանի 2021-2025 ռազմավարական ծրագրի բաժինների համաձան:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՃՇՀԱՀ-ում առկա հաշվետվողականության ներքին համակարգ, մասնավորապես կառուցվածքային վարչական յուրաքանչյուր միավոր հաշվետու է համապատասխան պրոռեկտորին, իսկ ամբիոնների հաշվետվությունները ներկայացվում են համապատասխան ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը, որի երաշխավորմամբ ներկայացվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, միևնույն ժամանակ ներկա փուլում համալսարանում մշակվում են ներքին հաշվետվողականության տիպային ձևեր:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ՃՇՀԱՀ-ում ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության, հրապարակայնության և հասարակությանը տեղեկատվությունը հասանելի դարձնելու հիմնական գործիքներ են ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքը (www.nuaca.am), ՃՇՀԱՀ ֆեյսբուքյան էջը (https://www.facebook.com/nuacauniversity), ՃՇՀԱՀ թերթի պարբերականը, ՃՇՀԱՀ տեղեկատվական թերթիկները, ՃՇՀԱՀ Ճարտարապետական և Ճարտարագիտական հետազոտությունների ամսագիրը (ՃՃՀԱ) (https://jaer.nuaca.am/), ՃՇՀԱՀ դիմորդի ուղեցույցը, ՃՇՀԱՀ ուսանողի ուղեցույցը, զանգվածային լրատվական միջոցները (մամլո ասուլիսներ, հարցազրույցներ և այլն) և այլն:

Համալսարանի պաշտոնական կայքը ինֆորմատիվ է, ներդրված է կայքի քառալեզու թարգմանության համակարգ, որը հնարավորություն է տալիս ընդլայնել կայքի շահառուների քանակը միաժամանակ ապահովելով հասանելիություն հրապարակված տեղեկություններին:

Միևնույն ժամանակ փորձագիտական այցի ընթացքում ՈՒԽ լրատվության բաժին պատասպանատուն նշեց, որ հրապարակվող տեղեկությունը շատերին հասանելի չի լինում, նշված խնդրի լուծման նպատակով համալսարանում իրականացվում են լրացուցիչ հանդիպումներ ուսանողների հետ, ինչպես նաև հայտարարությունների տեղադրում դեկանատներում:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հասարակության հետ կապ հաստատելու ՃՇՀԱՀ-ի հիմնական մեխանիզմն է էլեկտրոնային կապի տարբեր միջոցների կիրառումը, մասնավորապես ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքը, ֆեյսբուքյան էջերը, էլեկտրոնային փոստի հասցեները, ԶԼՄ-ները: Հետադարձ կապի համար առկա է հարթակ բուհի կայք էջում, որտեղ ստացված տեղեկատվությանը արագ արձագանք է տրվում:

Հետադարձ կապի մեկ այլ մեխանիզմ է դիտարկվում գործատուների և շրջանավարտների հետ հանդիպումն ու հարցումները:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Համալսարանում գործում են հասարակության տարբեր խմբերի համար նախատեսված դասընթացներ վճարովի և անվճար հիմունքներով, միևնույն ժամանակ կազմակերպվում են տարբեր գիտաժողովներ:

ՃՇՀԱՀ-ն հասարակությանն առաջարկում է վերապատրաստման տարբեր ծրագրեր, իսկ ՃՇՀԱՀ-ում գործող Լեզուների կենտրոնը առաջարկում է լեզվի դասընթացներ:

ՃՇՀԱՀ-ն ընդգրկված է և իրականացնում է ճարտարապետության և շինարարության ոլորտների բազմաբնույթ աշխատանքներ՝ մատուցելով ճարտարապետաշինարարական նախագծային և նախահաշվային ծառայություններ: ՃՇՀԱՀ-ում գործող լաբորատորիաների բազայի հիման վրա ոլորտի ընկերություններին տրամադրվում են տարատեսակ փորձաքննական ծառայություններ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ համալսարանը մասնակցում է ՀՀ տարածքում կառուցվող երկաթգծի, Վեդու ջրամբարի և ճանապարհաշինարարական տարբեր աշխատանքներին, միաժամանակ ներկայացվեց սարքավորումների կազմը, որոնք ընդգրկված են նշված աշխատանքներում:

Միաժամանակ համալսարանի կողմից իր ոլորտային ուղվածություններով գիտական մշակումների և նորույթների տարածման նպատակով, որպես գիտելիքի փոխանցման մեխանիզմ, պարբերաբար կազմակերպում է տեղական և միջազգային գիտաժողովներ, ինչպես նաև թողարկում է գիտական պարբերականներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ համալսարանում առկա է ներքևից վերև և վերևից ներքև հաշվետվողականության համակարգը: Առկա է նաև արտաքին շահակիցներին հաշվետվություններ ներկայացնելու համակարգ, որը նպաստում է թափանցիկության ապահովմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ բուհում առկա հաշվետվությունները ՌԾ-ին կապակցելու խնդիր կա, այս խնդրի լուծումը հնարավորություն կտա ընթացիկ մշտադիտարկել բուհի ՌԾ-ն, բացահայտել առկա խնդիրները և առաջիկա պլանավորումը կապակցել առկա մարտահրավերների հետ:

Դրական է, որ բուհն ունի քառալեզու կայք, որը հնավարություն է ապահովում առկա տեղեկատվության հրապարակայնության համար: Բուհը հասանելի է դարձնում իր ընթացակարգերը և տեղեկատվությունը կայքի, սոցիալական ցանցերի միջոցով և նպաստում բուհի մասին տեղեկատվության տարածմանը: Այս գործընթացները նաև նպաստում են միջազգային կապերի ընդլայմանը:

Դրական է, որ բուհում առկա է հասարկության հետ հետադարձ կապի ապահովման արդյունավետ համակարգ, որը հնավարություն է տալիս տեղեկություն ստանալ բուհի գործընթացների մասին: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է գործատուների և շրջանավարտների հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, որը կնպաստի տարբեր գործընթացների բարելավմանը:

Դրական է, որ բուհում գործում են հասարակության լայն շերտերին գիտելիքի փոխանցման մեխանիզմներ վերապատրաստումների և տարբեր ոլորտային միջոցառումների միջոցով, ինչը նպաստում է հասարակության և բուհի միջև սերտ համագործակցությանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՃՇՀԱՀ-ի հաշվետվողականության համակարգը հիմնավոր կերպով զարգանում և կատարելագործվում է, բուհի գործառույթներն ու գործընթացները հասանելի ու տեսանելի են հասարակության համար, հասարակությանը գիտելիք ու աջակցություն փոխանցելու կարողությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՃՇՀԱՀ-ը բավարարում է Չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՃՇՀԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

2015-2020թթ. և 2021-2025թթ. ՌԾ-ներում նշված է միջազգային համագործակցության և արտաքին կապերի կարևորության մասին և սահմանված է որպես նպատակ: Սահմանված են են միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման գործընթացներին նպաստելու քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք ուղղված են ՄԿԾ-երի նորացմանը, ուսուցման նորագույն մեթոդների ներառմանը կրթական, հետազոտական, նախագծային աշխատանքների իրականացմանը, գիտական ծրագրերին մասնակցությանը:

Սակայն, սահմանված չեն ՌԾ-ի խնդիրներից բխող գործողությունների ժամանակցույցն ու պատասխանատուները և ցուցիչների արժեքները:

ՃՇՀԱՀ-ն ակտիվ համագործակցություն ունի 29 երկրների 120-ից ավելի բուհերի և կազմակերպությունների հետ, 1994թ.-ից ՃՇՀԱՀ-ի ճարտարապետության ֆակուլտետի շրջանավարտներին շնորհվող դիպլոմը ֆրանսիական կառավարության կողմից պաշտոնապես ճանաչվել է ֆրանսիականին համարժեք՝ կրթական ծրագրերի, ուսումնական պլանների թարմացումների, համեմատությունների արդյունքով պարբերաբար վերաճանաչվելով: Ճանաչման վերաբերյալ վերջին որոշումն ընդունվել է 2017թ. հունվարի 12-ին հինգ տարի ժամկետով:

Ավարտական աշխատանքների համատեղ պաշտպանությունները կազմակերպվում են ՃՇՀԱՀ-ում և Լիոնի, Կլերմոն-Ֆերանի, Սենտ Էտիենի, Կորունիայի դպրոցներում՝ եվրոպական և հայկական ժյուրիների անդամների ներկայությամբ:

Ներկայումս ՃՇՀԱՀ-ը ներգրավված է Erasmus+ 5 ծրագրերում. FlexWBL, TACEESM, SAH, GEOTAK, ALL4R&D, որոնք ապահովում են համալսարանի ՊԴ կազմի կարողությունների զարգացումը, եվրոպական չափանիշները բավարարող նոր դասընթացների և ՄԿԾ-ների մշակումը:

ՃՇՀԱՀ-ն ներգրավված է կարևոր պրակտիկ նշանակություն ունեցող Եվրամիության IACOBUS ծրագրում, որի անդամներն են Ֆրանսիայի Կլերմոն Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցը, Իսպանիայի Կորունիայի և Գերմանիայի Ռեգենսբուրգի համալսարանները, 2021թ.-ից՝ նաև Բելգիայի Լիեժի համալսարանը:

Վերջին 3 տարիներին փոխանակման ծրագրերին մասնակցել է 93 ուսանող:

Հարկ է նշել, որ ելնելով ֆրանսերեն լեզվի դասավանդման բարելավման անհրաժեշտությունից, 2013թ. ՃՇՀԱՀ-ի ավագ դպրոցում բացվել է ֆրանսերենի կաբինետ: Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան հետ կնքվել է համագործակցության պայմանագիր՝ ֆրանսերեն լեզվի և ժամանակակից ֆրանսիական քաղաքակրթության դասավանդման իրականացման նպատակով: 2017-2018, 2018-2019 ուսումնական տարիներին Ֆրանկոֆոնիայի միջազգային կամավորի առաքելության միջոցով ֆրանսիացի կամավոր դասախոսները անցկացրել են ֆրանսերենի անվճար դասընթացներ ուսանողների, դասախոսների և ՃՇՀԱՀ-ի աշխատակիցների համար:

Ինքնավերլուծության և ներկայացված փաստաթղթերի վերլուծությունը, ինչպես նաև փորձագիտական խմբի այցի արդյունքները ցույց տվեցին, որ Ճարտարապետություն մասնագիտության շրջանակներում միջազգային համագործակցությունը բավականին բարձր հիմքերի վրա է:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ՃՇՀԱՀ-ի միջազգայնացման գործընթացը կարգավորվում է Միջազգային համագործակցության գծով պրոռեկտորը իր ենթակայության ներքո ՃՇՀԱՀ գիտխորհրդի կողմից հաստատված կանոնակարգերով գործող հետևյալ ենթակառուցվածքների միջոցով.

1. Միջազգային և միջբուհական համագործակցության բաժին, որի նպատակն է ապահովել համալսարանի միջազգային համագործակցությունը, ուսանողների, դասախոսների, փորձագետների շարժունությունը, գիտաժողովների կազմակերպումը և դրանց անցկացումը ՀՀ-ում և արտերկրում:
2. Արտասահմանցի սովորողների բաժին, որը կազմակերպում և համակարգում է օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը և հետագա ուսումնառության գործընթացները:
3. Ֆրանկոֆոնիայի ակադեմիական նվաճումների կենտրոն:
4. Լեզուների կենտրոն, որտեղ կազմակերպում և համակարգում են օտար լեզվի իմացության մակարդակների համաձայն առանձին խմբերի ձևավորումը, իրականացվում են թարգմանչական, ինչպես նաև հետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների խմբագրական աշխատանքներ:

Ենթակառուցվածքներում աշխատում են 10 աշխատակից, ովքեր կարողանում են ապահովել կանոնակարգված գործընթացը:

Գործում է նաև ՃՇՀԱՀ-ի ֆրանկոֆոնիայի ակադեմիական նվաճումների կենտրոնի կանոնակարգը: Ամեն տարվա կտրվածքով ներկայացվում է Միջազգային գործունեության տարեկան հաշվետվություն:

Միջնույն ժամանակ պարզ չէր միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման գործում բուհի ֆակուլտետների ներդրումն ու գործունեությունը:

Միջազգային և միջբուհական համագործակցության բաժնի գործունեության արդյունավետությունը գնահատելու համար կիրառվում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ շարժունության ծրագրերում ներգրավված ուսանողների և դասախոսների թվի աճը, միջազգային մրցույթներին, գիտաժողովներին մասնակցության թվի աճը, արտասահմանյան բուհերի և կազմակերպությունների հետ կնքված համագործակցության պայմանագրերի թվի աճը և այլն: Բուհի միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետների ներգրավվածությունը կանոնակարգված չէ:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

1990թ.-ից ՃՇՀԱՀ-ն ունի համագործակցության պայմանագրեր արտասահմանյան 29 երկրների 120-ից ավելի բուհերի և կազմակերպությունների հետ:

Վերջին 3 տարիներին արտասահմանյան բուհերի և կազմակերպությունների հետ կնքվել են 26 և վերակնքվել՝ 2 համագործակցության պայմանագրեր: Իրականացվել են 275 ուսանողի, 256 դասախոսի, վարչական աշխատակիցների փոխանակումներ:

Բուհն անդամակցում է հետևյալ միջազգային կազմակերպություններին.

- ԱՊՀ երկրների ճարտարապետական և շինարարության մասնագիտություններով բուհերի ասոցիացիա,
- REA-Ֆրանսիայի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ճարտարապետական բարձրագույն դպրոցների ցանց,
- AUF - Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալություն,
- Իտալական “Romualdo Del Bianco Foundation” կազմակերպություն,
- Межрегиональная общественная организация содействия архитектурному образованию (MOOCAO),
- Գոտի և ուղի ճարտարապետական համալսարանների միջազգային կոնսորցիում,
- Международная Ассоциация Союзов Архитекторов (MACA):

Միաժամանակ պետք է նշել, որ տեղական ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը այնքան էլ ակտիվ չէ:

Գործատուների հետ հանդիպումներից փորձագիտական խումբը համոզվեց, որ նրանց հետ համագործակցությունը դրված է լավ հիմքերի վրա, գործատուները ընդգրկված են հանձնաժողովների կազմերում, դասախոսական անձնակազմի բավականին մեծ թիվ իրենք հանդիսանում են գործատուներ, մասնակցում են կրթական ծրագրերի մշակմանը և այլն:

Բավականին ակտիվ է նաև համագործակցությունը ՀՀ-ում գործող ընկերությունների հետ, մասնավորապես 2021թ. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ համագործակցության շրջանակներում համալսարանի Շինարարության ֆակուլտետի բակալավրիատում ներդրվել է «Երկաթգծի շինարարություն, գիծ և գծային տնտեսություն» մասնագիտությամբ կրթական ծրագիրը՝ «Հարավկովկասյան եկաթուղի» ՓԲԸ աշխատակիցների ուսումնառությունը կազմակերպելու նպատակով:

ՄՈՒՀ-ում առկա է տեղական և միջազգային գործընկեր բուհերի հետ համատեղ մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման հաջողված փորձ՝ համատեղ և կրկնակի դիպլոմի շնորհմամբ, օտար լեզվով իրականացվող ՄԿԾ-ների առկայություն: Առկա է նաև միջազգային ծրագրերի շրջանակներում դասախոսների համար մասնագիտական և երկրորդ մասնագիտական դասընթացների կազմակերպման դրական և հաջողված փորձ:

Ինքնավերլուծության մեջ ներկայացված ՃՇՀԱՀ-ի դասախոսների և ուսանողների 2016-2020 թթ. շարժունության ցուցանիշները բարձր են: Իսկ շարժունության ծրագրերում ներառված ուսանողների և դասախոսների հարցումները վկայում են այդ ծրագրերի իրականացման արդյունավետությունը: Դա տեսանելի էր նաև փորձագիտական այցի ընթացքում արված դիտարկումներում:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՄՈՒՀ-ում գործում է լեզուների կենտրոնը, ֆրանկոֆոնիայի ակադեմիական նվաճումների կենտրոնը, որոնց աշխատանքները սահմանված են համապատասխան կանոնակարգերով:

Դասավանդողների 85-90%-ը, վարչական աշխատողների 75-80%-ը տիրապետում են մինիմում 1 օտար լեզվի, սակայն Օտար լեզվի իմացության մակարդակի ստուգում վերջին անգամ իրականացվել է 2015թ. –ին:

ՃՇՀԱՀ-ի վարչական և ՊԴ կազմի միջազգային ուսումնական և գիտական կառույցների աշխատանքներին մասնակցությունն ապահովելու նպատակով կազմակերպվում է օտար լեզվի լրացուցիչ դասընթացներ, անցկացվում է օտար լեզվի իմացության մակարդակի ստուգում, հանդիպումների ժամանակ այս մասին իրենց գոհունակությունը հայտնեցին թե դասախոսները, թե ուսանողները:

Լեզուների կենտրոնի գործառույթներից է նաև անվճար հիմունքներով իրականացնել հետազոտական, ուսումնամեթոդական աշխատանքների թարգմանություններ, ինչը կնպաստի բուհի ՊԴ կազմի գիտական հոդվածների միջազգային վարկանիշավորում ունեցող պարբերականներում հրատարակվելուն:

Վարչական և ՊԴ կազմի օտար լեզուներին տիրապետելու մասին վկայում է նաև ակտիվ մասնակցությունը դրամաշնորհային ծրագրերին, երկկողմ, բազմակողմ համագործակցության պայմանագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներում ներգրավվածությունը:

Ուսանողների՝ օտար լեզուների իմացության մակարդակի բարելավմանը խթանելու նպատակով՝ ՃՇՀԱՀ-ն որդեգրել է օտար լեզվի իմացության մակարդակների համաձայն ուսանողների առանձին խմբերի ձևավորման սկզբունքը՝ կիսամյակի ավարտին առնվազն մեկ մակարդակի բարձրացման ակնկալիքով:

Մի քանի մասնագիտությունների գծով առկա են օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ/ՄԿԾ-ներ: Այնուամենայնիվ ՄԿԾ-ների օտար լեզվով կազմակերպման և իրականացման հնարավորությունները սահմանափակ են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ՃՇՀԱՀ-ն շարունակաբար զարգացնում է իր արտաքին կապերը՝ մեծացնելով համագործակցության շրջանակը միջազգային կազմակերպությունների և բուհերի, տեղական ոլորտային կազմակերպությունների հետ: Միևնույն ժամանակ տեղական

ոլորտային բուհերի և մասնագիտությունների միջև համագործակցության ամրապնդման կարիք կա, որը կնպաստի արտաքին կապերի զարգացմանը և նոր գաղափարների ներդրմանը:

ՃՇՀԱՀ-ն գիտակցում է միջազգայնացման կարևորությունը և ՌԾ-ում սահմանվել է արտաքին կապերի և միջազգայնացման զարգացումը որպես գերակայություն, մշակված են մի շարք փաստաթղթեր ոլորտի զանգարցման համար, որը նպաստում է կանոնակարգված աշխատանքին: Բուհի վարչական ստորաբաժանումների աշխատանքը միտված միջազգայնացմանն ու արտաիքն կապերի զարգացմանը գովելի է, այս աշխատանքները նպաստում են բուհի տեսանելիության բարձրացմանը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակում: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևոր է համարում չափելի ցուցիչների մշակումն ու ներդրումը, որը կնպաստի ոլորտի համաչափ զարգացմանը և պլանավորված աշխատանքի իրականացմանը:

Կնքվել են համագործակցության մի շարք պայմանագրեր ԱՊՀ, Եվրոպայի, Ասիայի, ԱՄՆ-ի առաջատար բուհերի և օտարերկրյա գործընկերների հետ, համագործակցության շրջանակում իրականացվում են ՊԴ կազմի և ուսանողական փոխանակումներ, համատեղ միջազգային ծրագրեր, գիտաժողովներ և այլ գործառույթներ: Իրականացվում են համատեղ կրթական և հետազոտական ծրագրեր, միջազգային բենչմարքինգ, որոնք դրական ազդեցություն են ունենում ՄԿԾ-ների կազմման և վերամշակման աշխատանքների ժամանակ:

Բուհը մեծ ուշադրություն է դարձնում օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման վրա, տրամադրում է համապատասխան ռեսուրսներ, կազմակերպում լրացուցիչ դասընթացներ, սակայն դեռևս անգլերենի իմացությունը խոչընդոտ է հանդիսանում շարժունության ապահովման համար: Դրական է, որ բուհը կարևորում և խրախուսում է ուսանողների և դասախոսների առնվազն մեկ օտար լեզվի իմացությանը և տարբեր օտար լեզուների մակարդակի բարձրացմանը, ինչը կնպաստի բուհում միջազգայնացման արդյունքների կիրառմանը ամբիոնային մակարդակում:

Բուհում առկա միջազգային ծրագրերի մասնակցությունն ապահովել է ուսանողների և դասախոսների շարժունության կայացմանը և նպաստել է օտարերկրյա ուսանողների ներգրավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհը նպատակաուղղված աշխատանքներ է տարել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու համար, գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր, առկա է միջազգայնացման գործառույթներ ունեցող արհեստավարժ վարչական անձնակազմ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՃՇՀԱՀ -ի ինստիտուցիոնալ կարողությունները համապատասխանում են չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: ՃՇՀԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Մինչև 2022թ. որակի ներքին ապահովման գործառույթների իրականացման նպատակով ՃՇՀԱՀ-ում գործել է կրթության որակի ապահովման կենտրոնը, որի նպատակը և խնդիրները, գործունեության քաղաքականությունը և սկզբունքները, իրավասությունները, գործունեության կառավարումը և ընթացակարգը սահմանված են 2015թ. հուլիսի 6-ին հաստատված կանոնակարգում: Կանոնակարգի համաձայն կրթության որակի ապահովման կենտրոնի քաղաքականությունն. «Համալսարանի առաքելության, նպատակների ու խնդիրների իրականացումն է, մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող և միջազգային չափորոշիչներին համապատասխան, համակողմանիորեն զարգացած բարձրագույն կրթությամբ, հմուտ և ունակ մասնագետների պատրաստումը, կրթության և գիտության զարգացման ծրագրերի իրականացմամբ մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն ու կրթության որակի ապահովման համակարգի և որակի մշակույթի զարգացումն է»:

2017 թվականին հրապարակվել է ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման ձեռնարկը, որում նկարագրված են.

- Բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնադրույթները
- ՃՇՀԱՀ-ի որակի ներքին ապահովման հայեցակարգը
- ՃՇՀԱՀ-ի քաղաքականությունը և ընթացակարգերը
- ՃՇՀԱՀ-ի գործունեության հետադարձ կապի մեխանիզմները:

ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման ձեռնարկի համաձայն՝ «ՃՇՀԱՀ որակի ապահովման քաղաքականության նպատակն է բարձրացնել Համալսարանի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետությունը: Այն ընդգրկում է ՃՇՀԱՀ գործունեության բոլոր հիմնական ասպարեզները՝ նպատակ ունենալով համապատասխանեցնելու դրանք Համալսարանի ռազմավարական նպատակներին և ապահովելու ջանքերի առավելագույն ներդրում այդ նպատակների իրականացման համար»:

ՃՇՀԱՀ-ի ինքնավերլուծության համաձայն որպես որակի սահմանում բուհը ընդունել է «համարժեքություն սահմանված նպատակներին» մոտեցումը, իսկ որակի ապահովման ներքին համակարգը հիմնվում է ՃՇՀԱՀ-ի ռազմավարական ծրագրի վրա և ներառում է համալսարանի կրթական, գիտական և վարչական բոլոր ստորաբաժանումները: Նույն եզրահանգմանն են բերում նաև վերոնշյալ փաստաթղթերում տեղ գտած սահմանումները: Ինքնավերլուծությունում նշվում է նաև, որ ՈԱ քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության գնահատման գործիքն են հանդիսանում ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացվող հարցումները: Սակայն 2016-2017թթ. ընթացքում իրականացվել է 7 հարցում՝ «ուսանողների կողմից մասնագիտական առարկաների դասընթացների գնահատում», «պրոֆեսորադասախոսական անձնակազմի հարցում», «վարչական անձնակազմի հարցում», «ուսումնաօժանդակ անձնակազմի հարցում», «ընդունված ուսանողների հարցում», «ավարտող ուսանողների հարցում (2 անգամ 2016 և 2017թթ.)»: Իսկ 2019-2021թթ. իրականացվել է 2 հարցում՝ «գեոդեզիայի և դիզայնի ամբիոններում դասավանդվող դասընթացների գնահատմանն ուղղված հարցումներ ուսանողների շրջանում», «Moodle վերապատրաստման դասընթացներին մասնակցած դասախոսների հարցումներ»: Ընդ որում, վերոնշյալ հարցումներն իրականացվել են միայն ներքին շահակիցների շրջանում, պարբերական բնույթ մեծամասամբ չեն կրում, չեն ծածկում բուհի գործունեության բոլոր ոլորտները և փոխկապակցված չեն ՌԾ-ի և դրանով սահմանված առաջընթացի գնահատման առանցքային ցուցիչների (ԳԱՑ) հետ:

Կրթության որակի ապահովման կենտրոնի աշխատակիցները ակտիվորեն ներգրավված են եղել բուհում իրականացվող միջազգային դրամաշնորհային ծրագրերում և դրանց արդյունքների տարածման գործընթացներում: Այցի ընթացքում պարզվեց, որ կենտրոնի աշխատակիցները զգալի ներդրում ունեն բուհում իրականացվող բարեփոխումներում:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՃՇՀԱՀ-ի կրթության որակի ապահովման կենտրոնը գործում է 2011թ.-ից և ստեղծման պահին ունեցել է միայն մեկ հաստիք: Հետագայում այն ընդլայնվել է և 2015-2021թթ. այն ունեցել է 4 հաստիք՝ ղեկավար, գլխավոր մասնագետ, ավագ մասնագետ և մասնագետ: 2022թ. հունվարի 14-ին ՃՇՀԱՀ-ի կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կենտրոնի գործառույթները և կառուցվածքը ընդլայնվեցին: Այժմ կենտրոնը կոչվում է «Կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոն» և ներառում է «Ռազմավարական պլանավորման և որակի ապահովման» ու «Նորարարությունների և դրամաշնորհների» բաժինները: Կենտրոնը ապահովված է անհրաժեշտ գույքով, տեխնիկական միջոցներով և այլ անհրաժեշտ ռեսուրսներով: Կենտրոնի աշխատակիցները բարձր են գնահատվում դասախոսական անձնակազմի կողմից, ունեն անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ որակի ապահովման գործընթացները արդյունավետ իրականացնելու համար, սակայն ավելի շատ զբաղված են բուհում իրականացվող բարեփոխումների խորհրդատուների գործառույթներ իրականացնելով[6]:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Արտաքին շահակիցները որակի ապահովման գործընթացներում ներգրավված չեն, իսկ ներքին շահակիցների ներգրավվածությունը սահմանափակվում է բուհի գործունեության բոլոր ոլորտները չծածկող, հստակ պարբերականություն չունեցող հարցումներում նրանց մասնակցությամբ, ինչը չի կարող անհրաժեշտ խորության ուսումնասիրություն ապահովել: ՃՇՀԱՀ-ում իրականացվող գործընթացների գնահատման մեխանիզմները, գործիքները թերի են, իսկ ժամանակացույցը բացակայում է:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ՃՇՀԱՀ-ի ինքնավերլուծության և ներքին նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի ընթացում փորձագետներին չհաջողվեց գտնել որակի ապահովման ներքին համակարգի վերանայման սկզբունքները կամ պարբերականությունը սահմանող որևիցե հիմքեր: Որակի ապահովման ներքին համակարգի վերանայման հստակ սահմանված ժամանակացույց կամ այդ վերանայումը ՌԾ-ի հետ փոխկապակցելու մեխանիզմները բացակայում են:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Արտաքին գնահատման նպատակով ՃՇՀԱՀ-ն պատրաստել է ինքնավերլուծության զեկույց: Սակայն զեկույցում ներկայացված տեղեկատվությունը հիմնականում հիմնված չէ շահակիցներից հավաքագրված տվյալների վրա:

[6] Փոփոխվել է բուհի կողմից ներկայացված դիտարկման հիման վրա:

Չափորոշիչներում ներկայացված տեղեկատվությունը տվյալ չափորոշչի պահանջներին որոշ դեպքերում չի վերաբերում:

Որակի ապահովման ներքին համակարգը արտաքին գնահատման գործընթացների համար լիարժեք հիմքեր չի ապահովում:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի գործունեության թափանցիկությունը հիմնականում ապահովվում է բուհի պաշտոնական կայքէջի միջոցով: Պաշտոնական կայքէջում հասանելի է կրթության որակի ապահովման կենտրոնի առաքելությունը, խնդիրները և գործառույթները, որակի ապահովման ձեռնարկը, դասալսումների անցկացման ընթացակարգը ու կատարված հարցումների հաշվետվությունները: Նախատեսվում է ավելացնել նաև որակի ապահովման գործընթացների նկարագրությունը, ինչը կմեծացնի որակի ապահովման ոլորտում ՃՇՀԱՀ-ի գործունեության թափանցիկությունը:

Դատողություններ: ՃՇՀԱՀ-ի կրթության որակի ապահովման կենտրոնը ապահովված է որակի ապահովման գործընթացները իրականացնելու համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներով: Համալսարանը սահմանել է որակը, որակի ապահովման քաղաքականությունը և որոշ ընթացակարգեր, սակայն որակի ապահովմանն ուղղված գործողությունները միտված են միայն բուհի կրթական գործունեության որոշ ասպեկտների գնահատմանը, չեն ծածկում համալսարանի գործունեության բոլոր ոլորտները, միտված են միայն ոչ բոլոր ներքին շահակիցների կարիքների բացահայտմանը: Բացակայում են որակի ապահովման և ՌԾ-ի փոխկապակցման մեխանիզմները և այդ կապով պայմանավորված որակի համակարգի վերանայման անհրաժեշտությունը, մասնավորապես տեսանելի չէ որակի ապահովման համակարգի միջոցով հավաքագրվող տեղեկատվության և ՌԾ-ի առաջընթացի գնահատման առանցքային ցուցիչներով (ԳԱՑ) սահմանվող տվյալների փոխկապակցվածությունը: Որակի ապահովման ուղղությամբ ՃՇՀԱՀ-ի սակավաթիվ գործողությունները թափանցիկ են և ներքին ու արտաքին շահակիցների համար հասանելի են բուհի պաշտոնական կայքէջում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման ներքին համակարգը լիարժեք չէ, միտված է միայն բուհի կրթական գործունեության որոշ ասպեկտների վերաբերյալ ոչ բոլոր ներքին շահակիցների կարիքների բացահայտմանը, չի նպաստում բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը ու որակի մշակույթի ձևավորմանը փորձագիտական խումբը գտնում է, որ ՃՇՀԱՀ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: ՃՇՀԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

7-ը հուլիսի, 2022 թ.

Մկրտիչ Այվազյան, փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մկրտիչ Այվազյան- 2000 թ.-ին ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: 2003 թ.-ին ստացել է ֆիզ.մաթ. գիտությունների թեկնածուի աստիճան: 2009-2013 թթ. աշխատել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամում որպես մշակումների և զարգացման բաժնի մասնագետ, Քարտուղարության ղեկավար, Ինստիտուցիոնալ փորձաքննության և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավար: 2012թ.-ից մինչ օրս աշխատում է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում նախ որպես ուսումնական վարչության պետ, այնուհետև՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր: Բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է:

Հարություն Մովսիսյան-2010 թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան «Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանություն, որոնում և հետախուզում, մետաղագոյացում» մասնագիտությամբ, ստացել է երկրաբանական գիտությունների թեկնածուի աստիճան: 2015 թ.-ին ստացել է դոցենտի կոչում Երկրաբանություն մասնագիտությամբ: 2020 թ.-ից ՀՊՏՀ, Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դոցենտ: 2020 թ.-ի մայիսից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն: 21 գիտական և 3 ուսումնամեթոդական աշխատանքների հեղինակ է:

Աշոտ Գյուրջինյան- 1992 թ.-ին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղը, ինժեներ-շինարար-տեխնոլոգ մասնագիտությամբ: 2007 թ.-ին ստացել է դոցենտի կոչում: Տեխնիկական գիտությունների թեկնածու է: 1996 թ.-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղում:2012 թ.-ից առ այսօր «Շինարարական ճարտարագիտություն» ամբիոնի վարիչ: 48 գիտական հոդվածների, 6 ուսումնական ձեռնարկների և 9 մեթոդական ցուցումներերի հեղինակ է:

Վաիդոտաս Վիլիունաս-1979 թ.-ին ավարտել է Կաունասի տեխնոլոգիական համալսարանը (Լիտվիա) Քիմիական տեխնոլոգիաների ինժիների որակավորմամբ: 1987թ.-ից քիմիական գիտությունների դոկտոր է: 1991 թ.-ից Կաունասի տեխնոլոգիական համալսարանում զբաղեցրել է Օրգանական քիմիաի ամբիոնի ավագ գիտաշխատողի պաշտոնը: 1995թ.-ին զբաղեցրել է Քաունասի տեխնոլոգիական համալսարանի պրոռեկտորի պաշտոնը, ապա 1999 թ.-ին արդեն զբաղեցրել է Կաունասի տեխնոլոգիական համալսարանի միջազգային գրասենյակի տնօրենի պաշտոնը: 2011թ.-ից սկսած Վիտաուտաս Մագնուս համալսարանում զբաղեցրել է ուսանողների հարցերով գրասենյակի տնօրենի պաշտոնը: 2018թ.-ից առ այսօր Քաղաքականության մշակման և ծրագրի իրականացման ղեկավար, Բարձրագույն կրթության ինստիտուտի Եվրոպական ասոցացիայում (EURASHE):

Խաչիկ Շահբազյան- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲ ընկերության «Էներգետիկ համակարգեր,համալիրներ, էլեկտրակայաններ և դրանց կառավարումը» մասնագիտությամբ ասպիրանտ: Մասնակցել է ՈԱԱԿ ուսանողության ձայն նախագծի ուսանող փորձագետների վերապատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	14.03.2022 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ՃՇՀԱՀ ռեկտորի հետ	09:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:20	11:20	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Ռեսուրսների դիտարկում	12:20	14:00	100 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	14:10	15:10	60 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	15:20	16:20	60 րոպե
7.	Հանդիպում շրջանավարտների հետ	16:30	17:30	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:40	18:40	60 րոպե

N.	15.03.2022 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ՃՇՀԱՀ Հոգաբարձուների խորհրդի անդամների հետ	9:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում դեկաններ հետ	10:20	11:20	60 րոպե
3.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	11:30	12:30	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5.	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի /ներառյալ գործատու հանդիսացող դասախոսներ/ ներկայացուցիչների հետ (8-10 ներկայացուցիչ)	13:50	14:50	60 րոպե
6.	Հանդիպում ուսանողների հետ (8-10 ներկայացուցիչ)	15:00	16:00	60 րոպե
7.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ	16:15	17:00	45 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:15	19:00	105 րոպե

N.	16.03.2022 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Զուգահեռ հանդիպում «Գեոդեզիա և կադաստր», մասնագիտությունների կրթական ծրագրերի	Զուգահեռ հանդիպում «Արդյունաբերական և	Զուգահեռ հանդիպում « Գրաֆիկական դիզայն»	09:30	10:20	50 րոպե

	պատասխանատու/ների հետ	քաղաքացիական շինարարություն», կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ			
2.	Զուգահեռ հանդիպում «Գեոդեզիա և կադաստր», մասնագիտությունների կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Գրաֆիկական դիզայն» մասնագիտությունների կրթական ծրագրի դասախոսների հետ	10:35	11:35	60 րոպե
3.	Զուգահեռ հանդիպում «Գեոդեզիա և կադաստր» մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն», մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Գրաֆիկական դիզայն» մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողների հետ	11:50	12:50	60 րոպե

4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպում ստորաբաժանումների/վարչությունների/կենտրոնների ղեկավարների հետ. • Կրթության վարչություն • Կրթական ծրագրերի բաժին • Լեզուների կենտրոն • Ընդունելության և կարիերայի բաժին • Գիտության վարչություն • Գիտական քաղաքականության մշակման և համակարգման բաժին	14:10	15:10	60 րոպե
6.	Բաց հանդիպում	15:20	16:20	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե

N.	17.03.2022 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Կրթության Որակի ապահովման և զարգացման կենտրոնի և դրա ենթակա բաժինների աշխատակիցների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում ստորաբաժանումների/վարչությունների/կենտրոնների ղեկավարների հետ • Արտաքին կապերի վարչություն • Միջազգային կապերի և համագործակցության բաժին • Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին • Ֆինանսատնտեսական վարչություն • Ծրագրերի իրականացման և պայմանագրային աշխատանքների համակարգման բաժին • Արտասահմանցի սովորողների բաժին	10:40	11:50	70 րոպե
3.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	12:00	13:00	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:20	15:20	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	15:30	17:30	120 րոպե

7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	2018-2021 թվականին ընդունված ուսանողների բուհը ընտրելու պատճառների հարցումների վերաբերյալ հաշվետվություններ	1
2.	Արտաքին միջավայրի քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, տեխնոլոգիական գործոնների վերլուծություն՝ PEST	1
3.	2021-2025թթ. ՌԾ-ի նախագիծի 2021 թվականի փետրվար ամսին Աղվերանում կազմակերպված աշխատաժողովի հանդիպումների արձանագրություններ	1
4.	Ցուցչների աղյուսակ	1
5.	Ներքին աուդիտ իրականացրած խմբի եզրակացության արդյունքում մշակված նոր կառուցվածքի նախագիծը	2
6.	Պաշտոնի անձնագրեր, ստորաբաժանումների ցանկ, հաստիքացուցակ	2
7.	Համալսարանի կառուցվածքը 2016 թվականից սկսած և դրանցում իրականացված փոփոխությունները	2
8.	Ուսանողների և անձնակազմի հետ կազմակերպվող հանդիպումների վերջին 1 տարվա նմանատիպ հանդիպումների ցուցակը և արձանագրությունները	2
9.	Ուսանողների շրջանում պարբերաբար իրականացվող հարցումների հիմքերը և եզրակացությունը/ 2016 թ./	2
10.	Հավատարմագրման միջանկյալ պլանը և զեկույցը/վերլուծությունը	2
11.	Հավելված 2.5.1 փաստաթուղթը	2
12.	<<Տեղեկատվության տրամադրման և հասանելիության գնահատման նպատակով ՃՇՀԱՀ-ը իրականացնում է հարցումներ շահակիցների շրջանում>>: Իրականացված հարցումները և արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները	2
13.	Ամփոփիչ ատեստավորումների ժամանակ հանձնաժողովների նախագահների կողմից ներկայացված հաշվետվության օրինակ՝ 3 տարբեր մասնագիտությունների 2017-2020 տարիների համար:	2
14.	Դեկանների, ամբիոնների վարիչների գործողությունների պլաններ և հաշվետվություններ	2
15.	Պրոռեկտորների հաշվետություններ	2
16.	«2016-2020թթ. ժամանակահատվածում ՃՇՀԱՀ-ի ամբիոններում իրականացվել են ստորև բերված համալսարանների համանման կրթական ծրագրերի համեմա-տական վերլուծություն (բենչմարքինգ)- Ներկայացնել օրինակներ	3
17.	Կրթական ծրագրերի վարչության կանոնակարգը:	3
18.	Կրթական ծրագրերի վերանայման ձևաչափ	3
19.	Ուսումնական պլանների ընթեռնելի հավելվածները	3
20.	Քննական, ստուգարքային, կ/ա և կ/ն, ավարտական աշխատանքների ամփոփագրերի օրինակ	3
21.	Շարժունության ծրագրերում ներառված ուսանողների և դասախոսների հարցումների հիմքերը և արդյունքները	3
22.	Համատեղ մագիստրոսական ծրագրերի ցուցակը	3
23.	Օտար լեզվով դասավանդվող դասընթացների/ծրագրերի ցուցակը	3
24.	Որ ծրագրերի ուղղությամբ են իրականացրել շարժունություն /որը Էրազմուս ծրագրով և որը բուհի/ուսանողների նախաձեռնությամբ	3
25.	Թեզերի օրիանկենր	3

26.	Դասախոսի ճանրաբեռնվածության հաշվարկման նորմեր, գրաֆիկների սահմանման և հաստատման, վերահսկման մեխանիզմներ, դասաբաշխման սկզբունքները	4
27.	ԲՈՒՀ-ի ուսանողների քանակը ըստ մասնագիտությունների, ՈՒԽ անդամակցող ուսանոնղների քանակը ըստ մասնագիտություններ	4
28.	Ներկայացնել հավելված 4.2.1-1 ում ներկայացված հարցի ամբողջ ընթացքը և ընդունված որոշումը	4
29.	ՈՒԽ-ի կողմից կրթության որակի վերաբերյալ նմանատիպ որքան նիստեր են գումարվել և ինչ լուծում են ստացել ն են նշված հարցերը։(ցանկալի է ներկայացվեն նիստերի արձանագրությունները և դրանց արդյունքում ձեռնարկված միջոցառումները)։	4
30.	Ընդունված և ավարտած ուսանողների քանակ ըստ ՄԿԾ-ների վերջին երեք տարիների համար	4
31.	Շրջանավարտների զբաղվածությունը ըստ ՄԿԾ-ների վերջին երեք տարիների համար	4
32.	Գիտական հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների կամ այլ միավորների ցուցակը և դրանցից յուրաքանչյուրում իրականացվող հետազոտությունների ուղղությամբ տպագրված աշխատանքների ցուցակները	6
33.	Օտարերկրյա կազմակերպությունների աշխատակիցների համահեղինակությամբ հետազոտություններին վերաբերող օրինակներ	6
34.	Թեզերի օրինակներ	6
35.	Հավելված 7.2.1 ներկայացնել ընթեռնելի ֆայլի տեսքով	7
36.	Ներկայացնել 2016-2020 ընկած ժամանակահատվածի նախահաշիվները և կատարողականները	7
37.	2018-2021թ.-ին բուհի կողմից վճարովի հիմունքներով տրամադրված ծառայությունների ցուցակ	8
38.	2019 և 2020 թվականներին իրականացված վերապատրաստումների ցանկը	8
39.	Իրականացված հարցումների, հանդիպումների օրինակներ	10
40.	Ներկայացնել 10.2.2. հավելվածը	10
41.	<<2016-2017 թթ. ընթացքում իրականացվել է 7 հարցում>>։ Ներկայացնել այլ միջոցառումների ցուցակ և վերլուծություններ/ամփոփումներ	10
42.	Արտաքին շահակիցների հետ անցկացված միջոցառումների ցուցակ և վերլուծություններ/ամփոփումներ	10
43.	Հարցումների օրինակներ և վերլուծություններ Գիտ. խորհրդում ներկայացված վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Արխիվ
3. Գրադարան
4. Ճարտարապետության և նախագծման արվեստանոց
5. Քանդակի արվեստանոց
6. Դիզայնի ստուդիա
7. Մակետավորման լաբորատորիա
8. Էներգիարդյունավետության լաբորատորիա
9. Ջրերի լաբորատորիա
10. Գեոդեզիաի լաբորատորիա

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ և ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Հաստատված է՝ „Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան„ ՊՈՀ-ի գիտական հոգաբարձուների խորհրդի 2022 թ. հունվարի 14-ի նիստում:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Ա. Ղուկասյան

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝ Խ. Խաչատրյան



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՃՇՀԱՀ-Ճարտարապետության և շինարարության հայաստանի ազգային համալսարան
ՈԱԱԿ-Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՄԿԾ- Մասնագիտական կրթական ծրագրեր
ՄՈՒՀ-Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ- Որակի ապահովում
ՈԱՇ-Որակավորումների ազգային շրջանակ
ՈՈՇ- Որակավորումների ոլորտային շրջանակ
ՊԴԿ-Պրոֆեսորադասախոսական կազմ
ՌԾ- Ռազմավարական ծրագիր
ՈՒԳԸ- Ուսանողական գիտական ընկերություն
ՈՒԽ- Ուսանողական խորհուրդ
Ուս կազմ- Ուսումնաօժանդակ կազմ